ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը 4

Փոխհարաբերությունները ՀՀ պետբյուջեի հետ 10

Արտաքին հատված 14

Դրամավարկային քաղաքականություն 17

Ֆինանսական շուկա 27

ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները 32

Վճարահաշվարկային հարաբերություններ 36

Մակրոտնտեսական ցուցանիշները 2003 թ. հունվար – մարտին 41

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ 50

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ բանկերում իրականացված հարցումների արդյունքները (2003 թ., հունվար) 56


Արմենուհի Մկրտչյան, Միհր Եդիգարյան

ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2003 – 2005 թվականներին (ըստ բանկերի 2003 – 2005 թթ. հեռանկարային զարգացման ծրագրերի) 67

Մակրոտնտեսական իրավիճակը

2003 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մակրոտնտեսական միջավայրին բնորոշ են եղել նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածներում արձանագրված միտումները: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս ամբողջական առաջարկի աճը փոքր-ինչ գերազանցել է դրամավարկային ծրագրով նախատեսված մակարդակը: Մյուս կողմից, հիմնականում պայմանավորված ներմուծման՝ ծրագրվածից բարձր աճով, ինչպես նաև պետական ծախսերի թերակատարումներով, ամբողջական պահանջարկի փաստացի աճը ծրագրվածից ցածր է եղել:

Համաձայն դրամավարկային քաղաքականության ծրագրի՝ անցած տարի արձանագրված բարձր տնտեսական աճը, մասնավորապես՝ բնակչության եկամուտների զգալի աճը պետք է իրենց ազդեցությունն ունենային 2003 թվականի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Նշված նկատառումներից ելնելով՝ 2003 թվականի առաջին եռամսյակի ծրագրով նախատեսվել էր նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ապահովել իրական ՀՆԱ աճի 9.9%, ՀՆԱ դեֆլյատորի 104.0% և միջին սղաճի 4.5% ցուցանիշներ: Փաստացի արդյունքներով՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ իրական ՀՆԱ աճը և ՀՆԱ դեֆլյատորը քիչ են շեղվել ծրագրված մակարդակներից և կազմել են համապատասխանաբար 11.3% և 3.9%, իսկ եռամսյակի ընթացքում գրանցվել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 3.4% միջին սղաճ:



ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Ինչպես նշվեց, ի տարբերություն ամբողջական առաջարկի, ամբողջական պահանջարկի փաստացի իրական աճը զգալի ցածր է եղել ծրագրված մակարդակից: Համախառն պահանջարկի տարրերից՝ ներքին պահանջարկի իրական աճը փոքր-ինչ գերազանցել է ծրագրված մակարդակը՝ կազմելով 8.5%՝ ծրագրված 8.3%-ի փոխարեն: Նշվածն ամբողջությամբ պայմանավորվել է մասնավոր հատվածի սպառման և կապիտալ ներդրումների աճի՝ ծրագրված մակարդակների գերազանցմամբ, որին հակառակ՝ պետական հատվածի նույն ցուցանիշների աճը եղել է սպասվածից ցածր:

Մյուս կողմից, զուտ արտահանման իրական արտահայտությամբ փաստացի նվազման տեմպը՝ 24%, գերազանցել է ծրագրված նվազման տեմպը՝ 6.7%, հիմնականում պայմանավորված «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբում ներառված ապրանքների հումքի ներմուծման ծավալների՝ սպասվածից բարձր աճով[1]: Վերջինս էլ ամբողջական պահանջարկի իրական աճի տեմպի՝ ծրագրվածից ցածր մակարդակի ձևավորման պատճառ հանդիսացավ:

[1] *Նշված հոդվածում ներառված ապրանքների արտադրության համար անհրաժեշտ ներմուծված հումքը չի արտացոլվել կապիտալ ներդրումների ցուցանիշում՝ որպես պաշարների կուտակում, որի պատճառով գրանցվել է ամբողջական պահանջարկի նվազում: Ըստ էության, նշվածն արտացոլվել է ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի միջև առկա վիճակագրական շեղման ցուցանիշում:*

ՄԱՍՆԱՎՈՐ ՍՊԱՌՈՒՄԸ 2003 թվականի առաջին եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական արտահայտությամբ աճել է 6.9%-ով՝ ծրագրված 4.7%-ի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 2.7%-ի փոխարեն: Մասնավոր սպառման աճը պայմանավորված էր ինչպես նախորդ երկու տարիներին շարունակաբար գրանցվող տնտեսական աճի բարձր տեմպերով, այնպես էլ 2002 թվականին և 2003 թվականի առաջին եռամսյակում գրանցված փաստացի տնտեսական աճի կառուցվածքում եկամուտների համեմատաբար հավասար բաշխում ապահովող ճյուղերի մեծ մասնակցությամբ[2]:

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աճը (իրական արտահայտությամբ)
2002 –2003 թթ. առաջին եռամսյակներում

Ցուցանիշներ	2002/2001թ. 1-ին եռամսյակի նկատմամբ, փաստացի %	2003/2002թ. 1-ին եռամսյակի նկատմամբ, փաստացի %	2003/2002թ. 1-ին եռամսյակի նկատմամբ, ծրագրային %
Իրական ՀՆԱ	7.4	11.3	9.9
Ներքին պահանջարկ	3.2	8.5	8.3
Սպառում	2.7	7.1	5.8
Պետական	2.3	8.5	15.7
Մասնավոր	2.7	6.9	4.7
Կապիտալ ներդրումներ	7.5	20.9	29.2
Պետական	24.6	54.1	88.6
Մասնավոր	1.5	6.5	3.5
Ներմուծում	14.2	17.2	10.1
Արտահանում	37.7	12.4	9.8

ՀԱՄԱԽՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ հաշվետու ժամանակահատվածում, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ, աճել են (իրական արտահայտությամբ) 20.9%-ով՝ ծրագրված 29.2%-ի և նախորդ տարվա 7.5%-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատությամբ համախառն ներդրումների ծրագրված և փաստացի բարձր աճը հիմնականում պայմանավորված էր ինչպես նախորդ տարիների տնտեսական աճի արդյունքում բնակչության խնայողությունների աճով, այնպես էլ նախորդ տարվա առաջին եռամսյակում Լինսի հիմնադրամի դրամաշնորհային միջոցների համեմատաբար փոքր ծավալների առկայությամբ: Իսկ փաստացի ցուցանիշի շեղումը ծրագրվածից հիմնականում պայմանավորված էր պետական ներդրումների թերի կատարմամբ: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ վերջին-ներիս փաստացի աճը կազմել է 54.1%՝ ծրագրված 88.6%-ի փոխարեն, որը ևս պայմանավորված էր Լինսի հիմնադրամի միջոցների՝ նախատեսվածից 25%-ով թերստացմամբ:

Ի տարբերություն պետականի, մասնավոր հատվածում արձանագրվել է ներդրումների՝ ծրագրվածից ավելի աճ: Մասնավորապես, փաստացի աճը կազմել է 6.5%, ինչը բավականին բարձր էր նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշից (1.5%):

ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ նախորդ տարվա առաջին եռամսյակի նկատմամբ աճել է (իրական արտահայտությամբ) 8.5%-ով՝ ծրագրված 15.7%-ի փոխարեն: Նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել է 2.3%: Ծրագրից շեղումը հիմնականում աշխատավարձի գծով պետական ծախսերի 26.6% թերի կատարման հետևանք էր, որն էլ իր հերթին զսպել է և՛ ամբողջական պահանջարկը, և՛ գների աճը:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾԻ զարգացումները զսպող ազդեցություն են ունեցել ամբողջական պահանջարկի վրա: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ գրանցվել է զուտ արտահանման 24% նվազում՝ ծրագրված 6.7% նվազման փոխարեն: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ չնայած ապրանքների և ծառայությունների արտահանման փաստացի աճը գերազանցել է ծրագրվածը (ծրագրված 9.8% աճի փոխարեն փաստացին կազմել է 12.4%), միևնույն ժամանակ ծրագրվածից ավելի է աճել նաև ապրանքների և ծառայությունների ներմուծումը. փաստացին կազմել է 17.2%՝ ծրագրված 10.1%-ի փոխարեն:

Պետք է նշել, որ արտահանման և ներմուծման նման զարգացումները հիմնականում պայմանավորված էին թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների հումքի ներմուծման և դրանցից պատրաստված

[2] 2003 թվականի առաջին եռամսյակում զգալի աճել են կապիտալ շինարարության ծյուղի ծավալները՝ 33.5% (ճյուղային վերլուծություններն ավելի մանրամասն ներկայացված են «Համախառն առաջարկ» բաժնում):

արտադրանքի արտահանման աճով: Արձանագրվել է նաև մեքենասարքավորումների ներմուծման էական աճ: Փաստորեն արտաքին ապրանքաշրջանառության ծավալների աճը հիմնականում տեղի է ունեցել ոչ սպառողական ապրանքների հաշվին, հետևաբար և համեմատաբար չեզոք ազդեցություն է ունեցել սպառողական գների վարքագծի վրա:

ՀԱՄԱԽՍՈՒՆ ԱՌԱՋԱՐԿ [3]

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: Արդյունաբերության ոլորտում 2003 թ. առաջին եռամսյակում արձանագրվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածում դրսևորված աճի միտումները, սակայն ավելի դանդաղ տեմպերով. արդյունաբերության համախառն թողարկման իրական աճը կազմել է 10.6% (առանց էներգահամակարգի՝ 9.8%)՝ նախորդ տարվա 13.9%-ի փոխարեն:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները հունվար-մարտին, %

Արդյունաբերության ճյուղ	Տեսակարար կշիռ*		Իրական աճ (+) / նվազում (-) **	
	2002	2003	2002	2003
էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	30.6	30.0	-12.7	13.2
Հանքագործական արդյունաբերություն	6.2	10.0	6.5	20.9
Մշակող արդյունաբերություն, որից՝	63.2	60.0	28.9	8.7
սննդի արդյունաբերություն	35.9	32.9	11.2	2.8
մետալուրգիա	12.2	8.9	69	8.1
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	6.2	6.6	108.3	7.3
քիմիական արդյունաբերություն	0.8	0.8	-77	4.7
մեքենաների և սարքավորումների արտադրություն	0.7	1.0	-43.4	57.6
Ամբողջ արդյունաբերություն	**100**	**100**	**13.9**	**10.6**

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ:*

*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում:*

Եռամսյակային արդյունքներով արդյունաբերության ճյուղային կառուցվածքում նկատվել են զգալի փոփոխություններ:

Եթե նախորդ տարիներին էլեկտրաէներգիայի, գազի և ջրամատակարարման արտադրության իրական ծավալների նվազում էր արձանագրվել, ապա 2003թ. առաջին եռամսյակում գրանցվել է 13.2% աճ: Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը նվազել է 3.2 տոկոսային կետով և կազմել 60%, դրա փոխարեն աճել է հանքագործական արդյունաբերության կշիռը:


Որոշ փոփոխություններ են արձանագրվել նաև մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2003թ. առաջին եռամսյակում մշակող արդյունաբերության իրական աճը կազմել է 8.7 %՝ նախորդ տարվա 28.9 % աճի փոխարեն: Եռամսյակի ընթացքում արձանագրվել է ոսկերչական արտադրատեսակների արտադրության թողարկման ծավալների ցածր աճ (նախորդ տարվա 108.2 % աճի փոխարեն այս տարվա աճը կազմել է 7.3%): Մեքենասարքավորումների արտադրության և քիմիական արդյունաբերության թողարկման ծավալների աճը կազմել է, համապատասխանաբար՝ 57.6% և 4.7 %՝ նախորդ տարվա 43.4 % և 77% նվազումների փոխարեն: Մետալուրգիայի և սննդի արդյունաբերությունում թողարկման ծավալներն աճել են, սակայն ավելի ցածր տեմպերով, քան նախորդ տարի:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսության ոլորտի թողարկման իրական աճը կազմել է 6.7%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի 5.3 %-ի փոխարեն: Ընդ որում, աճը հիմնականում ապահովել է անասնապահության ճյուղը, որի թողարկման ծավալների աճը առաջին եռամսյակում կազմել է 8.8 %: Չնայած առաջին եռամսյակում գյուղատնտեսության աճի արձանագրված բարձր տեմպերին՝ դժվար է ակնկալել դրա հետագա արագացում՝ հաշվի առնելով բնակլիմայական անբարենպաստ պայմանները, գյուղատնտեսության մշակաբույսերի՝ խաղողի և մրգի որոշ տեսակների ցրտահարումները:

[3] «Համախառն առաջարկ» բաժնի 2002 թ. վերաբերող ցուցանիշների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-սեպտեմբերին» պարբերականն է: Իրական աճերը ներկայացված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Ըստ եռամսյակի արդյունքների՝ շինարարության իրական ծավալների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 33.2%: Ինչպես նախորդ տարվա ընթացքում, այս եռամսյակում ևս շինարարության հիմնական աշխատանքներն իրականացվել են բնակարանային տնտեսություններում՝ 35.7%, տրանսպորտի ու կապի ոլորտում՝ 33.3%:

Կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում աճել է մարդասիրական օգնության՝ հիմնականում Լիճսի միջոցների տեսակարար կշիռը և կազմել ամենամեծը ընդհանուրի մեջ՝ 39.2% (նախորդ տարվա առաջին եռամսյակում տեսակարար կշիռը 18.9 % էր): Կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները նախորդ տարվա ցուցանիշից քիչ են շեղվել և կազմել են շինարարության ընդհանուր ֆինանսավորման 17.3%-ը:



Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքները նվազել են և կազմել ընդհանուր ֆինանսավորման 25.3 %-ը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: 2003 թ. առաջին եռամսյակում արձանագրվել է բեռնափոխադրումների ծավալի 4.7%-ով աճ՝ հիմնականում պայմանավորված երկաթուղային տրանսպորտով իրականացված բեռնափոխադրումների ծավալների աճով բեռների հետևյալ տեսակների գծով՝ քարածուխ, սև և գունավոր մետաղների ջարդոն: Բեռնաշրջանառությունը եռամսյակի ընթացքում ընդհանուր ծավալով աճել է 26.3%-ով: Գրանցվել է նաև ուղևորաշրջանառության 15.4%-ով աճ:

Կապի ոլորտում ընդհանուր հասույթն ավելացել է 4.9%-ով՝ անցյալ տարվա առաջին եռամսյակի 11.3% նվազման փոխարեն:

Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը եռամսյակի ընթացքում ավելացել է 10.1%-ով, որից մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների աճը կազմել է 10.7%, իսկ բնակչությանը մատուցված ծառայություններինը՝ 9.3%:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2003 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին եռամսյակի համար սահմանվել էին նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ սղաճի՝ համապատասխանաբար 4.5% և 4.3% ծրագրային մակարդակներ:

Փաստացի արդյունքներով ժամանակահատվածի վերջի դրությամբ սղաճը կազմել է 2.1%՝ նախորդ տարվա 0.9%-ի փոխարեն, իսկ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ միջին սղաճը կազմել է 3.4%՝ նախորդ տարվա 0.4%-ի փոխարեն: Ընդ որում, հունվարին գրանցվել է 4.1 % սղաճ, իսկ փետրվարին և մարտին՝ համապատասխանաբար 1.5% և 0.5 % դեֆլյացիա: Նշենք նաև, որ ծրագրվածից սղաճի փաստացի մակարդակի շեղումը համախառն առաջարկի՝ սպասվածից բարձր և ամբողջական պահանջարկի՝ սպասվածից ցածր աճի ձևավորման արդյունք էր:


ՍԳԻ կառուցվածքի երեք հիմնական ապրանքախմբերի՝ պարենային, ոչ պարենային և վճարովի ծառայությունների գծով, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, եռամսյակի երեք ամիսներին էլ գրանցվել է գների աճ:

2003 թ. (2002 թ. դեկտ. = 100)	ՍԳԻ	Պարենային ապրանքներ [4]	Ոչ պարենային ապրանքներ	Վճարովի ծառայություններ
Հունվար	104.1	106.0	100.4	100.4
Փետրվար	102.5	103.7	100.1	100.5
Մարտ	102.1	102.9	100.4	100.4

2002 թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների գների ամենամեծ աճը գրանցվել է հունվարին՝ 6 % և գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը 2.7 տոկոսային կետով: Զգալի սղաճ է արձանագրվել բանջարեղենի (այդ թվում՝ կարտոֆիլի), մրգի, ձվի ապրանքախմբերում: Հունվար ամսվա բարձր սղաճն ըստ էության մի կողմից ուներ տարեվերջի տնտեսական ակտիվությանը սովորաբար հաջորդող սեզոնային դրսևորում, մյուս կողմից՝ վերջինիս բարձր մակարդակի ձևավորմանն էապես նպաստեցին տարեվերջին արտաքին ֆինանսական ներհոսքի հաշվին բյուջեի մեծածավալ ծախսումները: Միևնույն ժամանակ, սղաճի նման թռիչքի աստիճանական վերականգնումը համապատասխան դրսևորում պետք է ունենար, հետևաբար, փետրվար և մասամբ նաև մարտ ամիսներին գրանցվեց համապատասխանաբար –2.2% և 0.8% դեֆլյացիա:

Ոչ պարենային ապրանքների շուկայում գների կտրուկ տատանումներ չեն արձանագրվել: Առաջին եռամսյակի երեք ամիսներին էլ, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, գրանցվել է գների աճ, մինչդեռ անցյալ տարեսկզբի երեք ամիսներին այս ապրանքային շուկայում գների շարունակական անկում է արձանագրվել:

Ծառայությունների ոլորտում եռամսյակի սկզբին գրանցված գների աճը, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, կազմել է 0.4% (նախորդ տարի 0%) և եռամսյակի ընթացքում գտնվել համարյա նույն մակարդակի վրա: Վերջինիս վրա ազդեցություն են ունեցել հանրային սննդի, տրանսպորտի և կապի ծառայությունների սակագների աճը՝ համապատասխանաբար 2.4%, 1.4% և 0.5%-ով:




Ինչպես ցույց են տալիս բնականոն սղաճի հաշվարկները, տարվա առաջին եռամսյակի վերջի դրությամբ գրանցված 2.1% սղաճը ամբողջությամբ տեղի է ունեցել սեզոնային գյուղատնտեսական ապրանքների հաշվին: Հաշվետու ժամանակահատվածում սեզոնային գյուղատնտեսական ապրանքների գների աճը ապահովել է նշված սղաճի 2.5 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ -0.4 տոկոսային կետը: Եռամսյակի ընթացքում պետության կողմից կարգավորվող գներում որևէ փոփոխություն չի արձանագրվել:

2003 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՆԱ դեֆլյատորը 0.5 տոկոսային կետով գերազանցել է միջին սղաճի ցուցանիշը և կազմել 3.9%: Դրան հիմնականում նպաստել են գյուղմթերքների իրացման գների ինդեքսի 5.3 %-ով աճը, ինչպես նաև արդյունաբերության արտադրանքի գների և բեռնափոխադրումների սակագների ինդեքսների աճը՝ համապատասխանաբար 5.2% և 3.4%-ով:

[4] *Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:*

ՀՀ մարզերում կատարված դիտարկումների համաձայն՝ 2003 թվականի առաջին եռամսյակի ամենաբարձր սղաճը գրանցվել է է Կապանում՝ 4.2%, իսկ ամենացածր սղաճը՝ Եղեգնաձորում՝ 1.9 %: Երևանում սղաճը կազմել է 2.1%:

2002-2003 թթ. առաջին եռամսյակներում գների փոփոխություններն ըստ տնտեսության ճյուղերի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)



ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇՈՒԿԱ

Աշխատուժի շուկայում զարգացումներն ընթացել են գրանցված տնտեսական ակտիվության աճին համահունչ: Մասնավորապես գործազրկությունն, ըստ ազգային վիճակագրության ծառայության տվյալների, 2003 թվականի մարտին կազմել է 9.1%, որը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 0.5 տոկոսային կետով: 2003 թվականի մարտին 1 թափուր տեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 190 չզբաղված՝ նախորդ տարվա 230-ի փոխարեն: Միևնույն ժամանակ, որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել զբաղվածների կառուցվածքում. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական և կառավարման հատվածում զբաղվածների տեսակարար կշիռն ընդհանուր զբաղվածների մեջ նվազել է, և փոխարենը ավելացել է մասնավոր հատվածում զբաղվածների տեսակարար կշիռը: Նշված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 22.3% և 77.3%՝ նախորդ տարվա 24.5% և 74.8%-ի փոխարեն:

Որոշակի տեղաշարժեր են նկատվել նաև աշխատուժի նկատմամբ պահանջարկի կառուցվածքում: Այսպես, աճել է բանվորական մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի տեսակարար կշիռն ընդհանուրում և կազմել 77.8%՝ նախորդ տարվա 75.9%-ի փոխարեն: Միևնույն ժամանակ, նվազել է ծառայողների նկատմամբ պահանջարկի տեսակարար կշիռն ընդհանուրում և կազմել 21.2%՝ նախորդ տարվա 24.1%-ի փոխարեն:


Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 14.5%-ով ավելացել է զբաղվածների միջին անվանական աշխատավարձը և կազմել 28062 դրամ: Ընդ որում, հաշվետու ժամանակահատվածում միջին իրական աշխատավարձի աճը գերազանցել է արտադրողականության աճը, որոնք կազմել են, համապատասխանաբար՝ 11.2% և 8.85%[5]: Աշխատավարձի ամենացածր մակարդակը 2003 թվականի փետրվարի դրությամբ եղել է մշակույթի ոլորտում. կազմել է տնտեսության միջին աշխատավարձի 45.7%-ը, իսկ ամենաբարձրը մնում է վարկավորման համակարգում զբաղվածներինը, որը իր հերթին կազմում է տնտեսության միջին աշխատավարձի եռապատիկը:

[5] Արտադրողականությունը և միջին ամսական աշխատավարձերի իրական աճը հաշվարկվել է ՀՀ ԿԲ կողմից, վիճակագրության ծառայության հրապարակած ցուցանիշների հիման վրա:

Փոխհարաբերությունները ՀՀ պետական բյուջեի հետ

2003 թվականի առաջին եռամսյակում ապահովվել է ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ծրագրված մակարդակը և ոչ հարկային ու կապիտալ եկամուտները նախատեսվածից ավելի են ստացվել:

Եռամսյակի արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա ունեցել է ավելի զսպողական ազեցություն, քան ծրագրված էր, և ըստ հաշվարկների՝ շեղումը կազմել է շուրջ 3%: Նման շեղումը պայմանավորված էր եկամուտների՝ 2.2 մլրդ դրամ ավելի հավաքագրմամբ և ծախսերի՝ մոտ 5.2 մլրդ դրամ թերակատարմամբ: Ընդ որում, ծախսերի նշված շեղումը կազմել է եռամսյակի ՀՆԱ-ի մոտ 2.8%-ը:



Ըստ ՀՀ 2003 թվականի պետբյուջեի եռամսյակային համամասնությունների ծրագրի, առաջին եռամսյակում ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները պետք է կազմեին տարեկան ծրագրի 18.6%-ը, հարկային եկամուտները (ներառյալ պետական տուրքը)՝ 20.4%-ը, ծախսերը՝ 18.3%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նշված ցուցանիշները կազմել էին համապատասխանաբար՝ 22.2%-ը, 20.6%-ը և 19%-ը):


Առաջին եռամսյակի արդյունքում բյուջեի եկամուտների և դրամաշնորհների գծով մուտքերը կազմել են եռամսյակային ծրագրի 99%-ը, հարկեր և տուրքերը՝ 101%-ը (ծրագրված 45.0 մլրդ դրամի փոխարեն փաստացին կազմել է 45.5 մլրդ դրամ):


Հատկանշական են ոչ հարկային եկամուտների և կապիտալ եկամուտների բարձր կատարողական մակարդակները՝ ծրագրված 0.9 մլրդ և 0.3 մլրդ դրամի փոխարեն փաստացին համապատասխանաբար կազմել է 1.4 մլրդ և 1.6 մլրդ դրամ: Դրամաշնորհների մուտքերը կազմել են եռամսյակային ծրագրի 63%-ը՝ պայմանավորված պաշտոնական դրամաշնորհների 1.1 մլրդ դրամով և Լինսի դրամաշնորհների 1.4 մլրդ դրամով թերստացմամբ: Այսպիսով, պետական բյուջեի եկամուտների և դրամաշնորհների գծով մուտքերը կազմել են տարեկան ծրագրվածի 18.5%[1]-ը, հարկերը՝ 20.6%-ը՝ (ներառյալ պետական տուրքի գումարները) :

Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել են ՀՀ պետբյուջեի ցուցանիշների հետևյալը մակարդակները. ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները ավելացել են 10.5%-ով, հարկերը՝ 14 %-ով, դրամաշնորհները՝ 10.3%-ով, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները նվազել են 24.5%-ով (վերջինս պայմանավորված էր «ՀՀ ԿԲ ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքեր» հոդվածի գծով մուտքերի նվազմամբ): Հարկային եկամուտ-

[1] *Ներկայացված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված նախնական ցուցանիշներ:*

ների կառուցվածքում 0.6%-ով նվազել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով 75.9%. ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ, համապատասխանաբար աճել են 16%-ով և 17.4%-ով, իսկ մաքսատուրքը նվազել է 14.1%-ով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ գրանցվել է ուղղակի հարկերի 19.1%-ով աճ, սակայն դեռևս ցածր է դրանց տեսակարար կշիռը հարկային եկամուտներում՝ 16.2%: Այլ հարկային եկամուտներն աճել են 14.6%-ով, և գրեթե անփոփոխ է մնացել տուրքերի ցուցանիշը՝ ավելանալով ընդամենը 2%-ով:







Բյուջեի փաստացի ծախսերը կազմել են եռամսյակային ծրագրի 96.2 %-ը, ընթացիկ ծախսերը՝ 96.0%-ը, կապիտալ ծախսերը՝ 98.6%-ը, իսկ զուտ վարկավորումը՝ 84.3%-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ ծախսերն աճել են 6.4%-ով. ընթացիկ ծախսերը նվազել են 4.7%-ով, զուտ վարկավորումը՝ 27.2%-ով, իսկ կապիտալ ծախսերն աճել են 81.6%-ով (պայմանավորված արտաքին ֆինանսավորման կապիտալ ծախսերի կատարողականով):

Հատկանշական է, որ պետբյուջեի հարկային եկամուտների ծրագրված մակարդակների ապահովմանը զուգահեռ եռամսյակի ընթացքում որոշակի բարելավվել է նաև դրանց ամսական հավաքագրման գործընթացը՝ անհամաչափության մեղմման ուղղությամբ: Այսպես, հունվար, փետրվար և մարտ ամիսների վերջին երեք օրերին հավաքագրվել է ամսվա եկամուտների 36%-ը՝ նախորդ տարվա 43.3%-ի փոխարեն, իսկ ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերի միջին ցուցանիշը կազմել է ամսվա հարկերի 34.7%-ը՝ նախորդ տարվա 40%-ի փոխարեն: Սակայն եռամսյակի ընթացքում ՀՀ գանձապետարանի միասնական հաշվում զգալի միջոցներ են կուտակվել, որոնց միջին մեծությունը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին առկա միջոցների միջին մակարդակը: Այսպես, նշված ցուցանիշը 2003 թվականի առաջին եռամսյակում կազմել

է շուրջ 6.4 մլրդ դրամ կամ միջին ամսական հարկային եկամուտների 42.7%-ը, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ մոտ 2.8 մլրդ դրամ: Ընդ որում, եռամսյակի վերջի դրությամբ միասնական հաշիվը կազմել է 10.2 մլրդ դրամ: Ակնհայտ է, որ բյուջեի միջոցների՝ վերը նշված կուտակումների առկայությամբ էապես բարդանում էր բանկային իրացվելիության բավարար մակարդակի ապահովումը: Ուստի ՀՀ կենտրոնական բանկը փողի առաջարկը կառավարել է ավելի բարձր մակարդակում, քան առաջին եռամսյակին բնորոշ տնտեսական ակտիվության վարքագծից կախված՝ փողի պահանջարկ էր:





Պետբյուջեի եկամուտների և ծախսերի ցուցանիշների արդյունքում բյուջեի պակասուրդը կազմել է 3.7 մլրդ դրամ՝ ծրագրված 8.7 մլրդ դրամի փոխարեն: Շեղումը հիմնականում բացատրվում է «Նախորդ տարիների պարտքերի մարում» հոդվածի գծով 3.0 մլրդ դրամ ծախսերի թերակատարմամբ, որի հետևանքով փաստացին կազմել է 0.2 մլրդ դրամ, ինչպես նաև ընթացիկ ծախսերի 1.7 մլրդ և կապիտալ ծախսերի ու զուտ վարկավորում հոդվածի 0.5 մլրդ դրամ թերակատարմամբ: Բյուջեի կանխիկ պակասուրդը[2] կազմել է 2.1 մլրդ դրամ, որը ներառում է վիճակագրական շեղումը՝ 1.9 մլրդ դրամ (առաջացել է, քանի որ բյուջեի ծախսերն արտացոլում են բացված ֆինանսավորումը, այլ ոչ թե փաստացի ծախսերը) և նախորդ տարիների պարտքերի մարումը՝ 0.2 մլրդ դրամ: Պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում –3.4 մլրդ դրամը կազմել է ներքին ֆինանսավորումը՝ ծրագրված 3.7 մլրդ դրամի փոխարեն

[2] *Կանխիկ պակասուրդը ներառում է եկամուտների և ծախսերի տարբերությունը, նախորդ տարիների պարտքերի մարումը և վիճակագրական շեղումը:*

(նախատեսված էր 4.0 մլրդ դրամի ծախս միասնական հաշվի միջոցներից, սակայն եռամսյակի վերջում միասնական հաշվի խնայողությունները տարեվերջի նկատմամբ ավելացել են մոտ 1.3 մլրդ դրամով) և 5.5 մլրդ դրամը՝ արտաքին ֆինանսավորումը:

Պետական արժեթղթերի զուտ ֆինանսավորումը կազմել է -1.2 մլրդ դրամ՝ ծրագրված 0.012 մլրդ դրամի փոխարեն՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի նկատմամբ տոկոսադրույքների գրեթե անփոփոխ՝ 14 % մնալու պարագայում:

Պակասուրդի ֆինանսավորման արտաքին միջոցներից ստացվող զուտ մուտքերը կազմել են եռամսյակային ծրագրի 108%-ը՝ պայմանավորված արտաքին աղբյուրների և ՕԻԳ-ի միջոցների նախատեսված ծավալների ստացմամբ և «Վարկերի մարում» հոդվածի մոտ 1.0 մլրդ դրամով պակաս վճարմամբ:

Ամփոփելով նշենք, որ 2003թ. առաջին եռամսյակում պետական ծախսերի նշված շեղումների հետևանքով զսպվել են նաև եռամսյակի համար նախատեսված համախառն պահանջարկի աճը և սղաճի ցուցանիշը:


2003 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով տարվա առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նախատեսվում էր ընթացիկ հաշվի բոլոր հոդվածների ծավալների աճ: Մասնավորապես, արտահանման 8% և ներմուծման 15% աճ, ինչի արդյունքում կանխատեսվում էր առևտրային հաշվեկշռի պակասուրդի 31%-ով ավելացում: Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների լավացման պայմաններում սպասվում էր ընթացիկ հաշվի պակասուրդի 26%-ով խորացում, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում պետք է կազմեր 10.8%:

Իրականում, ապրանքների արտահանումը (կրեդիտ) եռամսյակի ընթացքում ավելացել է 12%-ով (14 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 135 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը պայմանավորված էր դրա կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ ու դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների՝ համապատասխանաբար 6 մլն ԱՄՆ դոլար և 6 մլն ԱՄՆ դոլար աճով: «Սարքեր և ապարատներ» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի արտահանման ծավալներն ավելացել են համապատասխանաբար 4 մլն և 3 մլն ԱՄՆ դոլարով:

Ներմուծումը (դեբետ) եռամսյակի ընթացքում ավելացել է 27%-ով (48 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 229 մլն ԱՄՆ դոլար: Օրագրվածի համեմատ ներմուծման բարձր աճի տեմպը հիմնականում պայմանավորված էր «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ ու դրանցից իրեր», ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 32 մլն ԱՄՆ դոլար, 8 մլն ԱՄՆ դոլար աճով: Բացի նշված հոդվածներից, ավելացել է նաև «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ» և «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերում ներառված ապրանքների ներմուծումը, որոնց տեսակարար կշիռը ներմուծման ծավալում նույնպես մեծ է: Ակնհայտ է, որ ներմուծման ծավալների բարձր աճը պայմանավորված է ներքին տնտեսությունում բարձր տնտեսական աճով և ներդրումային ու հումքային ապրանքների նկատմամբ մեծ պահանջարկով:


Թերևս հարկ է նշել, որ ապրանքների արտահանումը և ներմուծումը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, ավելացել են համապատասխանաբար՝ 15% և 11%:

Արտաքին առևտրի նման վարքագծի հետևանքով առևտրային հաշվեկշռի պակասուրդն առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, խորացել է ավելի քան 57%-ով (34 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել 94 մլն ԱՄՆ դոլար: Իսկ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ առևտրային հաշվեկշիռը խորացել է ընդամենը 9%-ով:



Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների՝ ծրագրային ցուցանիշներից զգալի շեղումներ եռամսյակի ընթացքում չեն արձանագրվել: Արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 67 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 40 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 21%: Ընթացիկ հաշվի պակասուրդի նման խորացումը կապված է ծրագրվածի համեմատ ապրանքների ներմուծման ծավալների բարձր աճով:

Առևտրային բանկերի ԶԱԱ-ը եռամսյակի ընթացքում աճել են 10 մլն ԱՄՆ դոլարով՝ հիմնականում առևտրային բանկերի կողմից արտարժույթով կապիտալի համալրման արդյունքում: Ռեզիդենտների արտարժութային ավանդներն առևտրային բանկերում նվազել են մոտ 4 մլն ԱՄՆ դոլարով:



Դեռևս 2002թ. վերջից սկսած՝ դրամավարկային քաղաքականությունն ունեցել է խիստ ընդլայնողական բնույթ, որը պահպանվել է նաև 2003թ. առաջին եռամսյակում: Փետրվարից փողի բազայի կառավարումն իրականացվել է տատանման թույլատրելի միջակայքի վերին սահմաններում: Չնայած եռամսյակի ընթացքում փողի բազայի աստիճանական կրճատմանը, այնուամենայնիվ բանկերի թղթակցային հաշիվներում առկա են եղել ավելցուկային դրամական միջոցներ (միջինը 3.8 մլրդ դրամի չափով): Որպես առանձնահատկություն՝ կարելի է նշել այն հանգամանքը, որ ի տարբերություն նախորդ տարիների, այդ միջոցներն ամբողջությամբ չեն ուղղվել արտարժույթի շուկա և լրացուցիչ ճնշումներ չեն առաջացրել արտարժույթի շուկայում: Այսինքն՝ բարձր իրացվելիության պայմաններում փոխարժեքի վրա ճնշումներն առանձնապես ուժեղ չեն եղել: Նշված հանգամանքը պայմանավորված էր վերջին տարիներին փոխարժեքի համեմատաբար կայուն վարքագծով, որը նպաստել է տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումների ձևավորմանը, արդյունքում լրացուցիչ դրամային իրացվելիությունը չի դարձել արտարժույթի սպեկուլյացիայի առարկա:

Արտարժույթի նկատմամբ պահանջարկը նույնպես բավականաչափ մեծ է եղել, մի կողմից պայմանավորված սեզոնային գործոնով, մյուս կողմից՝ ներմուծման ծավալների զգալի աճով: Նշված ժամանակահատվածում Կենտրոնական բանկը փողի պահանջարկի սեզոնային անկման պարագայում կրճատել է փողի բազան՝ հիմնականում կիրառելով արտարժութային գործիքներ: Առաջին երեք ամիսներին Կենտրոնական բանկը միջբանկային արտարժույթի շուկայում վաճառել է 25.15 մլն ԱՄՆ դոլար: Նշված գործոնների ազդեցությամբ փոխարժեքը եռամսյակի ընթացքում ունեցել է արժեզրկման միտում, և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին եռամսյակային հաշվարկային փոխարժեքը կազմել է 583.03 դրամ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ արժեզրկվելով 3.4%-ով:


Կենտրոնական բանկի ԶԱԱ-ը եռամսյակի ընթացքում նվազել են 25 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 199 մլն ԱՄՆ դոլար: Կենտրոնական բանկի համախառն արտաքին ակտիվների 9.5 մլն ԱՄՆ դոլարը եռամսյակի ընթացքում ուղղվել է արտաքին պետական պարտքի սպասարկմանը, միջբանկային արտարժույթի շուկայում Կենտրոնական բանկի կողմից իրականացվել է 25.15 մլն ԱՄՆ դոլար արտարժույթի վաճառք: Լինսի դրամաշնորհից ստացվող միջոցների հաշվին Կենտրոնական բանկի արտաքին պահուստները համալրվել են 5.7 մլն ԱՄՆ դոլարով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը 2003 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արժեզրկվել է 12.1%-ով՝ ծրագրով նախատեսված 7.6%-ի փոխարեն: Սա պայմանավորված էր Հայաստանի սղաճի[1] համեմատ (3.5%) գործընկեր երկրների միջին

[1] *Հաշվարկված է 2003 թվականի առաջին եռամսյակի միջինը՝ 2002 թվականի առաջին եռամսյակի միջինի նկատմամբ:*

կշռված սղաճի բարձր մակարդակով (9.2%) և դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի 6.4% արժեզրկմամբ: ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի կտրուկ արժեզրկումը պայմանավորված էր դրամի նկատմամբ եվրոյի, ֆունտ ստեռլինգի արժեքավորմամբ:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը
(աճը նշանակում է արժեքավորում)



1997-2001 թթ. կշիռներով, առանց Բելգիայի, 1995թ. միջինը = 100

Դրամավարկային քաղաքականություն

Դրամավարկային քաղաքականության առաջին եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

Ինչպես և նախորդ երկու տարիների, 2003 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով ևս ակնկալվում էր մեծածավալ արտարժութային ներհոսք, որի հաշվին փողի առաջարկի ավտոնոմ ընդլայնման սղաճային ազդեցությունը տնտեսության վրա չեզոքացնելու համար այս տարի ևս ԿԲ-ն նախատեսում էր ներքաշող գործիքների ակտիվ կիրառություն՝ արդյունքում ապահովելով որպես գլխավոր նպատակ ընդունված՝ սղաճի տարեկան մինչև 3% մակարդակը:

Արտաքին ավտոնոմ հոսքերով և տարեկան սեզոնայնությամբ պայմանավորված՝ ձևավորվել են նաև եռամսյակային համամասնությունները, որոնց հիման վրա էլ ծրագրվել են եռամսյակների ընթացքում իրականացվելիք դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագրման գործընթացում հաշվի է առնվել այն հանգամանքը, որ 2002 թվականը ավարտվել էր փողի ագրեգատների բավականին բարձր մակարդակով, և 2003թ. տարեսկզբին, գործարար պասիվության ու փողի համեմատաբար ցածր պահանջարկի պայմաններում, կձևավորվեր իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակ: Դա ԿԲ-ին հիմք է տվել 2003թ. առաջին եռամսյակի համար ծրագրել փողի առաջարկի զգալի կրճատում, որը պետք է արտահայտվեր փողի և դրամային զանգվածների՝ համապատասխանաբար 5.6% և 11.9%, իսկ փողի բազայի՝ 14.7%-ով նվազմամբ: Նման դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքում եռամսյակի ընթացքում ակնկալվում էր սղաճի 4.3% մակարդակ, որը հիմնականում պայմանավորվելու էր գների վրա, նախորդ տարվա վերջին արձանագրված, փողի առաջարկի աննախադեպ մեծածավալ աճի լագային ազդեցությամբ:

Հունվարի 31-ին բանկերի հետ հանդիպման ժամանակ ԿԲ կողմից արվել է 2003թ. առաջին եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ հայտարարություն, որի համատեքստում հիմնականում շեշտադրվել են փողի առաջարկն ընդլայնող ֆինանսական հոսքերի ակնկալիքները (Լինսի հիմնադրամից ավելի քան 7.0 մլրդ դրամի դրամաշնորհի ստացում՝ մոտ 3.5 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկման պարագայում) և դրանց չեզոքացման նպատակով բոլոր ներքաշող դրամավարկային գործիքների կիրառման հնարավորությունները: Ընդ որում, վերջիններիս մեջ հատկապես առանձնացվել է ԿԲ մշտական հնարավորության ավանդային գործիքը:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Առաջին եռամսյակի փաստացի արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ իրականացված դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ ձևավորված միջավայրը հիմնականում համահունչ է եղել ծրագրված սցենարին: Փողի պահանջարկի՝ տարեսկզբի սեզոնային անկման միտումները հիմնականում դրսևորվել են, չնայած եռամսյակն ամփոփվել է փողի ագրեգատների՝ ծրագրված մակարդակների համեմատ ցածր ցուցանիշներով, իսկ միջին եռամսյակային աճի տեմպերի՝ գերազանցմամբ[1]: Առաջինը եռամսյակի վերջին օրերին իրականացված հարկահավաքման գործընթացի հետևանք է և էական ազդեցություն չի ունեցել ձևավորված եռամսյակային միտումների վրա: Երկրորդ շեղումը բացատրվում է նախորդ տարվա վերջին փողի ագրեգատների թռիչքային աճի աստիճանական նվազմամբ և փողի պահանջարկի վրա տնտեսական ակտիվության անկման առավել մեծ լագային ազդեցությամբ:

[1] Բացառություն է կազմել միայն փողի զանգվածը, որի աճի տեմպի շեղումը ծրագրվածից պայմանավորված է դրամավարկային ցուցանիշների հաշվարկում ԿԲ կողմից նշանակված ժամանակավոր առմինիստրացիայի վերահսկողությամբ գործող մեկ բանկի տվյալների զտմամբ (հիմնականում արտարժութային միջոցներ): Այդ տվյալներով հաշվարկելու դեպքում փողի զանգվածի աճի տեմպը առավել ագույնս համընկնում է ծրագրված 6%-ի հետ:

Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ
(ըստ 2003 թ. ֆինանսական ծրագրի)


Ցուցանիշներ	I եռամսյակ	
	Ծրագրային	*Փաստացի*
Փողի զանգվածի (M2X, ժամ. վերջ) աճի տեմպը, %	-5.6	-9.8
Փողի զանգվածի (M2X, ժամ. միջին) աճի տեմպը, %	6	1.2
Փողի շրջապտույտի արագություն (ժամ. միջին)	1.65	1.67
Դրամային զանգվածի (M2, ժամ. վերջ) աճի տեմպը, %	-11.9	-14.2
Դրամային զանգվածի (M2, ժամ. միջին) աճի տեմպը, %	5.3	6.4
Դրամի շրջապտույտի արագություն (ժամ. միջին)	2.9	2.82
Փողի բազայի (ժամ. վերջ) աճի տեմպը, %	-14.7	-16.1
Փողի բազայի (ժամ. միջին) աճի տեմպը, %	3.1	7.1
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	2..05	1.88
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	1.13	1.11

Առաջին եռամսյակի ընթացքում փողի զանգվածի և դրա կառուցվածքային տարրերի կտրուկ նվազողական վարքագիծը մեծապես պայմանավորվել է նախորդ տարվա վերջին (հատկապես՝ դեկտեմբերին) փողի ագրեգատների աճի արագ տեմպերով: Այսինքն՝ տարեսկզբին դրսևորվել են հակառակ միտումները՝ նվազման ուղղությամբ, որը զգալի գերազանցել է ինչպես ծրագրված, այնպես էլ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նվազման տեմպերը: Այսպես, առաջին եռամսյակում դրամային զանգվածը նվազել է 17.6 մլրդ դրամով կամ 14.2%-ով, իսկ փողի զանգվածը՝ 19.7 մլրդ դրամով կամ 9.8%-ով: Ընդ որում, համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բերված ցուցանիշները կրճատվել են՝ համապատասխանաբար 5.4% և 5.1%-ով:

2002 թվականի վերջին բանկային համակարգից դուրս կանխիկի աննախադեպ մեծ ծավալի աճի և 2003 թվականի սկզբին փողի գործառնական պահանջարկի սեզոնային անկման պայմաններում, այն զգալիորեն կրճատվել է՝ բանկերի կողմից արտարժույթի վաճառքի և տնտեսավարող սուբյեկտների կողմից նախկինում վերցված վարկերի մարումների միջոցով: Նշված գործոնների ազդեցությամբ շրջանառությունում կանխիկն առաջին եռամսյակում նվազել է 15.5%-ով, իսկ ավանդները՝ 5.4%-ով, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում այդ ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 9.5% և 2.1%-ով:

Ավանդների ժամկետային կառուցվածքում նվազել են ցպահանջ ավանդները՝ 14.5%-ով, որն ուղեկցվել է ժամկետային ավանդների 5.6% աճով: Ընդ որում, ըստ արժույթի՝ այս միտումներն առավել վառ արտահայտվել են դրամային ավանդների վարքագծում. դրամով ցպահանջ միջոցները նվազել են 20.5%-ով, իսկ դրամով ժամկետային ավանդներն աճել են 15.8%-ով: Չևավորվել է արտարժութային միջոցների հետևյալ համամասնությունը՝ 10.1%-ով նվազել են ցպահանջ և 3.3%-ով աճել ժամկետային ավանդները: Նշված շարժերն ու միտումները ևս զգալի գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշները, որը ևս կարելի է բացատրել նախորդ տարվա վերջին այդ ցուցանիշների կտրուկ աճով և հաջորդ ժամանակահատվածում արդեն հակառակ ուղղությամբ դրանց լագային դրսևորմամբ:


Դրամով և արտարժույթով ավանդները՝ ըստ ժամկետայնության




Ընդ որում, հաշվետու ժամանակահատվածում նվազման մեծ ծավալը բաժին է ընկել պետական մասնակցությամբ կազմակերպություններից ներգրավված միջոցներին՝ 4.4 մլրդ դրամ, որին զուգահեռ 3.0 մլրդ դրամով նվազել են նաև մասնավոր ձեռնարկությունների և տնային տնտեսությունների ավանդները, այն դեպքում, երբ հասարակական և այլ ֆինանսական կազմակերպությունների միջոցները բանկերում ավելացել են 1.6 մլրդ դրամով:

Ինչպես և նախորդ տարիներին, այս տարի ևս փողի զանգվածի կառուցվածքում խոշոր շարժերը տեղի են ունեցել հունվարին. փողի զանգվածը կրճատվել է շուրջ 9%-ով, դրամային զանգվածը՝ 8.7%-ով, շրջանառությունում կանխիկը՝ 15.3%-ով, նվազել են նաև ցպահանջ ավանդները՝ 15.7%-ով դրամայինը և 7.3%-ով արտարժութայինը: Փետրվար-մարտ ամիսներին միտումները հիմնականում կայունացել են և, տնտեսական աշխուժացմանը համապատասխան, դիտվել է նաև փողի պահանջարկի որոշակի աճ (եթե հաշվի չառնենք եռամսյակի վերջին փողի ագրեգատների կտրուկ նվազումը՝ հարկերի ամսական անհամաչափ հավաքագրմամբ պայմանավորված):

Եռամսյակի ընթացքում նվազել են նաև առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ավանդները՝ 5.2 մլրդ դրամով, որի 75%-ը բաժին է ընկել արտարժութային ավանդներին:



Եռամսյակի ընթացքում փողի զանգվածի դրամային բաղադրատարրերի առավել արագ տեմպերով նվազման հետևանքով որոշակի փոխվել են կառուցվածքային համամասնությունները. փողի զանգվածում կանխիկի տեսակարար կշիռը նվազել է 2.8 (43.7%-ից 40.9%-ի), իսկ դրամային ավանդներինը՝ 1.0 (17.3%-ից 16.3.%-ի) տոկոսային կետով, ինչի հաշվին արտարժութային ավանդների տեսակարար կշիռը 39%-ից բարձրացել է 42.8%-ի:



Տարեսկզբին, գործարար ակտիվության անկման սեզոնայնությամբ պայմանավորված, տնտեսության զարգացման դանդաղման ու փողի պահանջարկի վրա դրա լագային ազդեցության դրսևորումները հաշվի առնելով՝ առաջին եռամսյակի համար նախատեսվում էր փողի և դրամի շրջապտույտի արագությունների նվազողական սցենար:

Փաստացի արդյունքներով արձանագրվել է փողի և դրամի շրջապտույտի արագությունների նվազում. փողի շրջապտույտի արագության միջին եռամսյակային մակարդակը կազմել է 1.67՝ նախորդ եռամսյակի 2.25-ի փոխարեն, իսկ դրամի շրջապտույտի արագությունը՝ 2.82 (3.82-ի փոխարեն):


Սակայն, եթե դրամի շրջապտույտի արագությունը ցածր է եղել ծրագրային ցուցանիշից՝ հիմնականում պայմանավորված դրամային զանգվածի միջին եռամսյակային ծրագրային ցուցանիշի համեմատ փաստացի ձևավորված բարձր մակարդակով, ապա փողի շրջապտույտի արագությունը գերազանցել է ծրագրային ցուցանիշը, որը փողի զանգվածի միջին եռամսյակային ցուցանիշի՝ նախատեսվածի համեմատ աճի դանդաղ տեմպերի հետևանք է: Վերջինս էլ իր հերթին պայմանավորվել է դրամավարկային վիճակագրության ևս մեկ ճշգրտմամբ, որի համաձայն՝ ԿԲ կողմից նշանակված ժամանակավոր ադմինիստրացիայի վերահսկողությամբ գործող մեկ բանկի տվյալները (դրանց գերակշիռ մասն արտարժութային միջոցներ են) նույնպես հանվել են դրամավարկային ամփոփ ցուցանիշների հաշվարկից: Այս ճշգրտման ազդեցությամբ փողի շրջապտույտի արագության նվազումը զսպվել է 3.6 տոկոսային կետով:

ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Առաջին եռամսյակի ընթացքում փողի առաջարկի մեծածավալ կրճատումը պայմանավորվել է բանկային համակարգի ԶԱԱ և ԶՆԱ շարժերով՝ համապատասխանաբար 7.9 մլրդ և 11.9 մլրդ դրամ համամասնությամբ: Ընդ որում, ինչպես վերը նշվել է, փողի պահանջարկի ամսական սեզոնային դրսևորումների ազդեցությամբ՝ շարժերի գերակշիռ մասը բաժին է ընկել հունվարին (ԶԱԱ-ի 9.1 մլրդ և ԶՆԱ-ի 8.8 մլրդ դրամի նվազում):


Բանկային համակարգի ԶԱԱ փոփոխությունների վրա հիմնականում ազդել են ԿԲ արտարժութային պահուստների կառուցվածքային շարժերը՝ 14.3 մլրդ դրամի նվազում (մանրամասն տե՛ս «Փողի բազա» ենթաբաժնում), ինչը շուրջ 6.4 մլրդ դրամով չեզոքացվել է առևտրային բանկերի ԶԱԱ-ի աճով: Այն պայմանավորող հիմնական գործոնը տարեսկզբից բանկերի կանոնադրական կապիտալի համալրումն է, որը ներառում է նաև մարտի սկզբին բացված նոր բանկի կանոնադրական կապիտալը՝ մոտ 2.9 մլրդ դրամ գումարով: Բանկերի ԶԱԱ-ն աճել են նաև արտաքին պարտավորությունների նվազման արդյունքում, ինչը տեղի է ունեցել ոչ ռեզիդենտ ձեռնարկությունների և կազմակերպությունների հանդեպ պարտավորությունների մարման հաշվին:

Ընդ որում, վերջին տարիների նույն ժամանակաշրջանի համեմատ պետական արտաքին պահուստների միտումները հիմնականում պահպանվել են. այսպես, բանկային համակարգի ԶԱԱ-ը առաջին եռամսյակում մշտապես նվազում է՝ պայմանավորված ԿԲ կողմից արտարժույթի մեծածավալ վաճառքի ազդեցությամբ (բացառություն է միայն 2002 թվականը, երբ տարեսկզբին ստացված ԿԲՎ-ի հաշվին ԶԱԱ-ը համալրվել են): Միևնույն ժամանակ, շարունակվել է նաև բանկերի ԶԱԱ-ի՝ վերջին տարիներին դրսևորված աճի միտումը, որը ձևավորվել է համախառն արտաքին պահուստների համեմատ համախառն արտաքին ակտիվների աճի առավել արագ տեմպերի պայմաններում և նախորդ տարվա մայիսից հանգեցրել այդ ցուցանիշի դրական մեծության:



Ի տարբերություն ԶԱԱ-ի, բանկային համակարգի ԶՆԱ-ը նվազել են հիմնականում բանկերի ներքին ակտիվների շարժերի ազդեցության հետևանքով, որի պայմաններում ԿԲ ազդեցությունը նվազման ուղղությամբ եղել է ընդամենը 31.1% կամ մոտ 3.7 մլրդ դրամ (շարժերի մանրամասն նկարագիրը տե՛ս «Փողի բազա» ենթաբաժնում):

Բանկերի ԶՆԱ-ը կրճատվել են ավելի քան 8.2 մլրդ դրամով, որն առավելապես բաժին է ընկել բանկերի զուտ այլ ակտիվների և տնտեսության զուտ վարկավորման ցուցանիշներին՝ 8.8 մլրդ դրամի նվազում, այն դեպքում, երբ Կառավարության պարտավորությունները բանկերի հանդեպ ավելացել են 574 մլն դրամով:



Բանկերի պահանջները Կառավարության հանդեպ աճել են հիմնականում բանկերի արժեթղթերի պորտֆելի համալրման հետևանքով:

Բանկերի ԶՆԱ կրճատումը զուտ այլ ակտիվների հաշվին կազմել է 2.3 մլրդ դրամ, որը հիմնականում ձևավորվել է բանկերի կողմից նորմատիվային պահանջի բավարարման նպատակով 4.0 մլրդ դրամով կանոնադրական կապիտալի համալրման և մոտ 2.0 մլրդ դրամի շահույթի ստացման արդյունքում:

Առևտրային բանկերի հանդեպ տնտեսության զուտ պարտավորությունների ցուցանիշը զգալիորեն նվազել է՝ 6.3 մլրդ դրամով: Տարեսկզբին գործարար ակտիվության և փողի պահանջարկի սեզոնային անկման պայմաններում բանկերի կողմից տնտեսության վարկավորումը դանդաղել է, և տեղի են ունեցել հիմնականում վարկերի մարումներ՝ զուտ 5.2 մլրդ դրամի: Եռամսյակի ընթացքում բանկերի կողմից մարվել են նաև մոտ 1.1 մլրդ դրամի ոչ պետական արժեթղթեր: Ընդ որում, բանկերի կողմից տնտեսության վարկավորումը դանդաղել է անգամ այն պայմաններում, երբ համակարգում առկա է եղել իրացվելիության ավելցուկի անհամեմատ բարձր մակարդակ, որն իր հերթին ևս վկայում է համախառն պահանջարկի անկման սեզոնային դրսևորումների մասին:


Ըստ տնտեսության հատվածների՝ մարումների հիմնական մասը բաժին է ընկել մասնավոր ձեռնարկությունների և կազմակերպությունների արտարժութային վարկերին (4.0 մլրդ դրամ), քանի որ մյուս հոդվածներով (տնային տնտեսությունների, հասարակական և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկավորում) շարժերը հիմնականում փոքր ծավալ են կազմել: Պետական մասնակցությամբ ձեռնարկությունների կողմից մարվել են 2.5 մլրդ դրամի արտարժութային վարկեր: Դրամով տնտեսության ֆինանսավորման գործընթացում էական շարժեր չեն դիտվել, և դրամով զուտ վարկավորման ցուցանիշը մնացել է անփոփոխ:

Առաջին եռամսյակում մեծ ծավալի արտարժութային վարկեր են մարել արդյունաբերության, առևտրի, տրանսպորտի և կապի ոլորտները՝ 3.9 մլրդ դրամ, իսկ գյուղատնտեսության և շինարարության բնագավառի վարկավորման ծավալներն աճել են 631 մլն դրամով: Դրամային ներդրումները ևս նվազել են արդյունաբերության և տրանսպորտի բնագավառում ու որոշակի աճ դրսևորել առևտրում և շինարարությունում:

Ընդ որում, արդյունաբերության կառուցվածքում մարումները մեծ կշիռ են կազմել էներգետիկայի՝ մոտ 2.0 մլրդ դրամ, և սննդի արդյունաբերության՝ 1.3 մլրդ դրամ, ճյուղերում:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ


Փողի բազմարկչի միջին եռամսյակային մեծությունը կազմել է 1.88, որը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է ավելի քան 5%-ով կամ 0.1 կետով, այն դեպքում, երբ ծրագրված էր ցուցանիշի աճ՝ պայմանավորված ավանդների ակնկալվող աճով: Փողի բազմարկիչը հիմնականում կրել է տարեսկզբին կատարված վիճակագրական ճշգրտման ազդեցությունը, որը բացառելու դեպքում այն կցուցաբերեր կայուն վարքագիծ՝ պահպանելով նախորդ եռամսյակի միջին մակարդակը: Աննշան նվազել է նաև դրամային բազմարկիչը՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի 1.12 միջին մակարդակից հասնելով 1.11-ի:



Փողի և դրամային բազմարկիչների՝ ծրագրված աճի փոխարեն դրսևորած նվազման միտումները հիմնականում պայմանավորված են եղել բանկերի կողմից տնօրինվող ավելցուկ պաշարների բարձր մակարդակով՝ միջին եռամսյակային 3.8 մլրդ դրամ (2002թ. նույն ժամանակահատվածում՝ 2.1 մլրդ, 2001թ.՝ 1.2 մլրդ դրամ):

ՓՈՂԻ ԲԱԶԱ

Ինչպես արդեն նշվել է, հաշվի առնելով 2002 թվականի վերջին փողի բազայի աննախադեպ մեծ աճը, տարեսկզբին սովորաբար դիտվող գործարար ակտիվության անկման դրսևորումները, ինչպես նաև գերազանցապես փողի առաջարկի ընդլայնման ուղղությամբ ակնկալվող ինքնավար հոսքերը՝ ԿԲ-ն նախատեսում էր առաջին եռամսյակի ընթացքում փողի բազայի զգալի կրճատում: Ընդ որում, նախորդ տարիների միտումներից ելնելով՝ կրճատման ավելի քան 70%-ը պետք է բաժին ընկներ հունվարին:




Ինչպես և վերջին տարիներին, այս տարի ևս ԿԲ գործառնական նպատակի ապահովման տեսանկյունից փողի բազայի վարքագծի վրա էական ազդեցություն է ունեցել Կառավարության կողմից հարկահավաքման ամսական անհամաչափ բաշխվածությունը, ինչը հատկապես սրվել է մարտի վերջին՝ կապված հարկերի եռամսյակային ցուցանիշի ապահովման հետ: Մյուս կողմից, 2002թ. վերջին ԿԲ-ում Կառավարության հաշիվներում ձևավորված մոտ 9.0 մլրդ դրամ մնացորդից միջին հաշվով 6.0 մլրդ դրամը մշտապես խնայվել է՝ այդքանով իսկ զսպելով փողի առաջարկը: Այսինքն՝ այն, որ նշված գործոնների ազդեցության պարագայում անգամ մինչև փետրվարի կեսերը փողի բազան կառավարվել է ծրագրված միջին ցուցանիշի շրջակայքում, իսկ մինչև եռամսյակի վերջ՝ միջակայքի վերին սահմանի գերազանցմամբ՝ վկայում է ծրագրվածի համեմատ ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին:

Մինչդեռ նշենք, որ սղաճն առաջին եռամսյակում կազմել է 2.1%՝ 2.2 տոկոսային կետով ծրագրվածից ցածր: Դա հիմնականում բացատրվում է ինչպես համախառն առաջարկի՝ ծրագրվածի համեմատ

առավել ընդլայնմամբ, այնպես էլ համախառն պահանջարկը խթանող ավտոնոմ հոսքերի՝ նախատեսվածից փոքր ծավալների ստացմամբ, որն էլ զուգորդվել է հարկաբյուջետային քաղաքականության խնայողական բնույթով: Ինչ վերաբերում է գների վրա նախորդ տարվա չորրորդ և այս տարվա առաջին եռամսյակների ընթացքում ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ազդեցությանը, ապա այստեղ լագը երկար է և առավել չափով կդրսևորվի երկրորդ եռամսյակում՝ հիմնականում չեզոքացնելով ծրագրային ցուցանիշի համեմատ արձանագրված շեղումը:


Փողի բազայի կրճատման գերակշիռ մասը բաժին է ընկել ՀՀ ԿԲ ՁԱԱ-ին, որոնք եռամսյակի ընթացքում նվազել են 10.9%-ով կամ 14.3 մլրդ դրամով: Տարեսկզբին արտարժույթի նկատմամբ սեզոնային պահանջարկի աճով պայմանավորված՝ ԿԲ-ն որպես հիմնական ներքաշող գործիք է ընդունել արտարժույթի վաճառքը, որի միջոցով առաջին եռամսյակում ԿԲ-ն ստերիլացրել է 14.7 մլրդ դրամի (զուտ) իրացվելիություն: ՁԱԱ-ի ավելի քան 3.0 մլրդ դրամի ավտոնոմ կրճատում է տեղի ունեցել արտաքին պարտքի սպասարկման և այլ հաճախորդների համար 1.0 մլրդ դրամի փոխարկումներ իրականացնելու հետևանքով, որոնք ամբողջությամբ չեզոքացվել են Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ստացված մոտ 4.5 մլրդ դրամի (ակնկալվում էր 7.1 մլրդ դրամ) հաշվին ՁԱԱ-ի համալրմամբ: Ընդ որում, ԿԲ կողմից եռամսյակի ընթացքում իրականացված մեծածավալ վաճառքի արդյունքում արձանագրվել է դրամի միջին ամսական փոխարժեքի 0.8% արժեզրկում, այն դեպքում, երբ նախորդ տարի այն կազմել է 1.7%՝ ԿԲ կողմից 6.1 մլրդ դրամին համարժեք արտարժույթի վաճառքի պարագայում (որից ավելի քան 4.9 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկման նպատակով մեկ բանկին վաճառքի գործարքն է):



ՀՀ ԿԲ ՁՆԱ-ը եռամսյակի ընթացքում նվազել են շուրջ 3.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջին իջել անհամեմատ ցածր մակարդակի՝ –23.0 մլրդ դրամի: Վերջինիս կառուցվածքում նույն չափով նվազել է Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը, ինչը տեղի է ունեցել ԿԲ-ում Կառավարության միջոցների մնացորդի 2.2 մլրդ դրամով ավելացման և ԿԲ արժեթղթերի պորտֆելից մոտ 1.7 մլրդ դրամի (որից՝ 1.5 միլիարդը նախկին վարկային գծի դիմաց տրամադրված արժեթղթերն են) մարման հետևանքով: Ընդ որում, ինչպես նշվել է, եռամսյակի ընթացքում գանձապետական միասնական հաշվում մշտապես առկա է եղել միջին հաշվով 6.0 մլրդ դրամ մնացորդ, որն ավելի քան երկու անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը և եռամսյակի վերջին հասել մինչև 10.3 մլրդ դրամի՝ հավաքագրված մեծածավալ հարկերի կուտակման հետևանքով:

ԿԲ ՁՆԱ կառուցվածքային մյուս երկու տարրերի՝ ԿԲ հանդեպ բանկերի զուտ պարտավորությունների և զուտ այլ ակտիվների փոփոխությունները հիմնականում կրել են մեկ գործարքի ազդեցությունը, այն է՝ նախորդ տարվա սկզբին տրամադրված համակարգային վարկի դուրսգրումը ԿԲ հաշվեկշռից: Վերջինիս արդյունքում 3.2 մլրդ դրամով նվազել են ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունները և նույնքան էլ աճել զուտ այլ ակտիվները՝ փոխադարձաբար չեզոքացնելով միմյանց ազդեցությունը ԿԲ ՁՆԱ-ի, հետևաբար և փողի բազայի վրա:


Առաջին եռամսյակի ընթացքում փողի բազայի կառավարման նպատակով կիրառված գործիքակազմում, արտարժույթի վաճառքից հետո, մեծ տեսակարար կշիռ է կազմել բանկերի կողմից ԿԲ-ում ավելցուկ իրացվելիության ավանդադրման մշտական հնարավորության գործիքը: Վերջինիս ամսական բաշխվածությունը և համադրումը արտարժույթի վաճառքի գործիքի հետ մեծապես պայմանավորվել է իրացվելիության ավելցուկի ամսական վարքագծով: Այսպես, ավելցուկային իրացվելիության միջին եռամսյակային մակարդակը կազմել է 3.8 մլրդ դրամ, որը եռամսյակի ընթացքում ցուցաբերել է աստիճանաբար նվազող վարքագիծ՝ հունվարի միջին ամսական 4.6 մլրդ դրամից մարտին հասնելով 2.9 մլրդ դրամի:



Հունվարին-փետրվարին, պայմանավորված արտարժույթի նկատմամբ մեծ պահանջարկով՝ ստերիլացման շեշտը դրվել է հիմնականում արտարժույթի վաճառքի վրա (ավելի քան 12.3 մլրդ դրամ), որը փետրվարից զուգորդվել է ավանդային մշտական հնարավորության գործիքի հետ (փետրվարի վերջին ձևավորվել է մոտ 2.4 մլրդ դրամ մնացորդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 860 մլն դրամի փոխարեն): Մարտին ծավալները համեմատաբար փոքր են եղել և հավասարաչափ բաշխվել երկու գործիքների միջև. վաճառվել է 2.4 մլրդ դրամին համարժեք արտարժույթ՝ դրա նկատմամբ պահանջարկի նվազման պարագայում և ներգրավվել ավելի քան 2.7 մլրդ դրամի ավանդ, որի մնացորդը մինչև ամսվա վերջ ամբողջովին մարվել է:


Ավելցուկային իրացվելիության ստերիլացման նպատակով ԿԲ-ն եռամսյակի ընթացքում կնքել է նաև 159 մլն դրամի հակադարձ ռեպո համաձայնագիր: Միևնույն ժամանակ, Վերակառուցման վարկերի բանկի (KfW) կողմից իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում ԿԲ-ն տրամադրել է 300 մլն դրամի վարկ:

Փողի բազայի կառուցվածքում եռամսյակի կտրվածքով նվազման գերակայող մասը՝ 14.1 մլրդ դրամը (եռամսյակային նվազումը՝ 15.3%), բաժին է ընկել ԿԲ-ից դուրս կանխիկին, որը մեկնաբանվում է ազդեցության նույն գործոններով, ինչով և բանկային համակարգից դուրս կանխիկը: Թղթակցային հաշվի միջոցները նվազել են 3.9 մլրդ դրամով և մարտի 31-ի դրությամբ կազմել 14.9 մլրդ դրամ (պարտադիր պահուստավորման ենթակա 14.0 մլրդ դրամ մակարդակի պայմաններում), որը, ինչպես և նախորդ եռամսյակներում, այս եռամսյակում ևս հիմնականում վերջին օրը բանկերի թղթակցային հաշիվներից մեծածավալ հարկերի հավաքագրման հետևանք է:




Ընդ որում, ըստ ամսական վարքագծի, ԿԲ-ից դուրս կանխիկը հիմնականում նվազել է հունվարին, այնուհետև պահպանել կայուն մակարդակ, իսկ թղթակցային հաշվի միջոցներն ընդհակառակը՝ հունվարին աճել են, հաջորդ երկու ամիսներին՝ հավասարաչափ նվազել:

ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը հիմնավորում են նաև դրամավարկային պայմանների ինդեքսի[1] և դրամավարկային կանոնների[2] հաշվարկները: Այսպես, դրամավարկային պայմանների ինդեքսը դրսևորել է նվազողական վարքագիծ՝ կրելով առավելապես իրական տոկոսադրույքների նվազման ազդեցությունը: Դա վկայում է, որ առաջին եռամսյակում ՀՀ ԿԲ-ն փողի առաջարկը կառավարել է տնտեսական ակտիվությամբ պայմանավորված փողի պահանջարկի նախատեսված մակարդակից ավելի բարձր:



Ինչ վերաբերում է դրամավարկային կանոններին, ապա, ըստ դրա հաշվարկների, փողի բազայի ձևավորված փաստացի ցուցանիշը զգալի գերազանցել է կանոնով հաշվարկված ցուցանիշը, ինչն արտահայտում է նախատեսվածի համեմատ փողի բազայի առավել քիչ կրճատումը: Սա նույնպես հիմնավորվում է փողի բազայի՝ նախատեսվածի համեմատ միջին եռամսյակային աճի տեմպերի գերազանցումը պայմանավորող նույն գործոններով, քանի որ դրամավարկային կանոնի հաշվարկի հիմքում ևս փողի բազայի միջինացման սկզբունքն է:



[1] Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բանբերում»:
[2] Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Առաջին եռամսյակում ևս ԿԲ կողմից իրականացված տոկոսադրույքային քաղաքականության հիմքում եղել են իրացվելիության ավելցուկի կարգավորման խնդիրներն ու ֆինանսական շուկայում ձևավորված միտումները: Այս տեսանկյունից եռամսյակի ընթացքում ստեղծվել էր հակասական իրավիճակ, երբ տարեսկզբից համակարգում ձևավորված ավելցուկային պաշարների բարձր մակարդակի ազդեցությամբ

ֆինանսական շուկայի տարբեր հատվածներում տոկոսադրույքներն աստիճանաբար նվազում էին (միտումները մանրամասն կներկայացվեն «Ֆինանսական շուկա» բաժնում) և աստիճանաբար մեծանում էր շուկայական և ԿԲ գործառնությունների տոկոսադրույքների միջև ճեղքը: Այն չխորացնելու և, տարեսկզբին արտարժույթի նկատմամբ պահանջարկի սեզոնայնությամբ պայմանավորված, արտարժույթի վաճառքի գործիքին նախապատվություն տալու նկատառումներից ելնելով՝ հունվարին ԿԲ խորհուրդը ձեռնպահ մնաց դրամային գործառնությունների տոկոսադրույքները փոփոխելուց:


Փետրվարին իրավիճակը փոխվեց այն առումով, որ ավելցուկի ստերիլացման ծանրության մի հիմնական մասն ընկավ մշտական հնարավորության ավանդային գործիքի վրա, և այդ պարագայում ԿԲ-ն արդեն կարևորեց շուկայական տոկոսադրույքներին ԿԲ գործառնությունների տոկոսադրույքների համադրման խնդիրը: Այդ նպատակով ԿԲ խորհուրդը փետրվարի ընթացքում վերանայել է իր գործառնությունների դրույքաչափերը՝ իջեցնելով. ռեպո համաձայնագրերինը՝ 13.5-ից 10%-ի, լոմբարդային վարկերինը՝ 28-ից 20%-ի և ավանդներինը՝ 6-ից 5%-ի, որոնք պահպանվել են մինչև եռամսյակի վերջ՝ հիմնվելով ֆինանսական շուկայի համեմատաբար կայուն միտումների վրա:

Ֆինանսական շուկայի վարկային և ավանդային հատվածներում տոկոսադրույքները նվազել են համընթաց տեմպերով, ինչի արդյունքում վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդը) մնացել է գրեթե անփոփոխ՝ տատանվելով 16%-ի շրջանակներում: Այդուհանդերձ, որոշ չափով նվազել է արտարժութային և աճել՝ դրամային սպրեդը:


Դրամային և արտարժութային սպրեդների վարքագիծը



2003 թվականի առաջին եռամսյակում շարունակվել է նախորդ տարվա ընթացքում ֆինանսական շուկայում դրսևորված՝ տոկոսադրույքների անկման միտումը: Փոքր-ինչ նվազել են առևտրային բանկերի կողմից ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ներգրավված միջոցների տոկոսադրույքները: Այսպես, եռամսյակի ընթացքում տոկոսադրույքները տատանվել են. դրամային ավանդներինը՝ 10%-ի, իսկ ԱՄՆ դոլարով ավանդներինը՝ 6.2% -ի շրջակայքում:




Ավելի քան 1 տոկոսային կետով նվազել են ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված ԱՄՆ դոլարով և դրամային վարկերի տոկոսադրույքները՝ կազմելով համապատասխանաբար՝ 23% և 24%:




2003 թ. առաջին եռամսյակում տոկոսադրույքների միջին մակարդակի նվազման միտում է արձանագրվել նաև պետական պարտատոմսերի շուկայում՝ դրսևորելով սկզբում հստակ արտահայտված անկման միտում, սակայն մարտից սկսած՝ նկատվել է ՊՊ եկամտաբերության որոշակի աճ:

ՊՊ առաջնային շուկան առաջին եռամսյակի ընթացքում բնութագրվել է պարտատոմսերի նկատմամբ ընդհանուր պահանջարկի աճով՝ կազմելով թողարկման ծավալի 236.2%-ը: Բանկային համակարգում առկա բավականին բարձր ավելցուկային իրացվելիության պայմաններում պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճը հանգեցրել է ՊՊ եկամտաբերության անկման: Սակայն, ինչպես արդեն նշվեց,

ՊՊ տոկոսադրույքների անկման միտումը շարունակվել է մինչև մարտ, որից հետո նկատվել է հակառակ դրսևորումը: Արդյունքում՝ հունվարին ՊԿՊ միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 15.29%, փետրվարին՝ 13.22%, մարտին՝ 14.53%:



2003 թ. առաջին եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի 9 թողարկում՝ 5.6 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որից 1.7 մլրդ դրամը՝ 183-273 օր և 3.9 մլրդ դրամը՝ 274-364 օր շրջանառության ժամկետով և պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 2 թողարկում՝ 2.4 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:




Արդյունքում՝ մարտի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը, նախորդ ժամանակահատվածի (31/12/2002թ.) համեմատ, աճել է 239.361 մլն դրամով՝ կազմելով 39551.917 մլն դրամ:


Ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների կողմից պետական արժեթղթերում ներդրումների մակարդակի էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Վերջիններիս պատկանող պարտատոմսերի տեսակարար կշիռը նվազել է 0.46 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջում կազմելով 13.51% կամ 5344.3 մլն դրամ: 1.2 տոկոսային կետով նվազել է նաև ոչ ռեզիդենտներին պատկանող ՊՊ տեսակարար կշիռը:

Արդյունքում, մարտի վերջին ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի մոտ 96.28%-ը՝ 38080.5 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 3.72%-ը կամ 1471.4 մլն դրամ:

Երկրորդային շուկայի գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 2.08 տոկոսային կետով՝ կազմելով 14.47%: Միևնույն ժամանակ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ եռամսյակի համեմատությամբ կրճատվել են 2.8 մլրդ դրամով՝ կազմելով 9.4 մլրդ դրամ: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 750 մլն դրամ:



Առաջին եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքների ևվազում է արձանագրվել: Նախորդ եռամսյակի համեմատ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալները նվազել են 13.7 մլրդ դրամով՝ կազմելով 15.8 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 27 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1.3 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 3.45 տոկոսային կետով և կազմել 9.24 %:




Չնայած վերոնշյալ բոլոր հատվածներում նկատվել է տոկոսադրույքների նվազման միտում, այնուամենայնիվ եկամտաբերության սփոթ կորի աճողական թեքվածությունը պահպանվել է:

2003 թ. առաջին եռամսյակում ֆինանսական շուկայում տոկոսադրույքների անկումը մեծամասամբ պայմանավորված էր բանկերի բարձր իրացվելիությամբ: Այդ է վկայում նաև Կենտրոնական բանկի ավանդների նկատմամբ ձևավորված մեծ պահանջարկը: ՀՀ կենտրոնական բանկ առաջին եռամսյակում ներկայացվել է 11580 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ հունվարին ներդրվել է 750 մլն դրամի ավանդ՝ սահմանված 6% եկամտաբերությամբ, փետրվարին տոկոսադրույքները իջեցվել են 6%-ից մինչև 5%-ի, և ամսվա ընթացքում միջին կշռված տարեկան 5.71%-ով ներդրվել է 8110 մլն դրամի ավանդ: Իսկ մարտին, արդեն 5%-ով ներդրվել է 2720 մլն դրամի ավանդ:


Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ առաջին եռամսյակում պահանջարկ չկար լոմբարդային վարկերի նկատմամբ: Թեև առաջին եռամսյակում լոմբարդային վարկեր չտրամադրվեցին, բայց և այնպես ՀՀ ԿԲ կողմից եռամսյակի ընթացքում վերանայվեց վերջինիս տոկոսադրույքը և 28%-ից իջեցվեց մինչև 20%:


Չնայած ավելցուկային իրացվելիության բավականին բարձր մակարդակին, 2003 թվականի առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը ներքին ֆինանսական շուկայում ցուցաբերել է ցածր ակտի-

վություն: Արդյունքում, նվազեցնելով դրամավարկային գործարքները, ՀՀ կենտրոնական բանկի կողմից միայն փետրվարին կնքվել է հակադարձ ռեպո գործառնություն, որի ծավալը կազմել է մոտ 159 մլն դրամ՝ սահմանված տարեկան 10%-ով:



ՀՀ կենտրոնական բանկի սահմանած ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2003թ. առաջին եռամսյակում դրսևորել է արժեզրկման հստակ միտում: Եռամսյակի վերջում, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, գրանցվել է 0.78% արժեզրկում՝ 584.89 դրամից 589.52 դրամ (վարիացիա՝ 11.24, միջին շեղում՝ 3.35 դրամ):





Արժութային շուկայում առաջին եռամսյակում ձևավորվել են ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի գործառնությունների հետևյալ ծավալները: 2003 թվականի երեք ամսվա ընթացքում առքի ծավալները համապատասխանաբար կազմել են 45.07 մլն, 62.27մլն և 63.94 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 53.47 մլն, 61.16 մլն և 58.00 մլն ԱՄՆ դոլար: Միջին կշռված փոխարժեքները համապատասխանաբար կազմել են՝ 584.48 դրամ, 587.36 դրամ և 590.50 դրամ: Արժութային շուկայի համախառն ծավալը կազմել է մոտ 343.92 մլն ԱՄՆ դոլար, միջին կշռված փոխարժեքը՝ 587.64 դրամ (նախորդ տարի նույն ժամանակահատվածում ծավալը կազմել է 251.50 մլն ԱՄՆ դոլար, փոխարժեքը՝ 567.82 դրամ):

ՀՀ կենտրոնական բանկը, պայմանավորված իրացվելիության կարգավորման խնդիրներով, առաջին եռամսյակում արժութային շուկայում վաճառել է մոտ 25 մլն ԱՄՆ դոլար՝ 11.45 մլն, 9.65 մլն և 4.05 մլն ԱՄՆ դոլար ըստ ամիսների, համապատասխանաբար 581.15, 586.46 և 591.53 դրամ միջին կշռված փոխարժեքով:

ՀՀ բանկային համակարգի զարգացման հիմնական միտումները

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2003 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է, իսկ համախառն ակտիվները և պարտավորությունները՝ նվազել:

Եռամսյակի ընթացքում հիմնադրվել է «Արդշինհինվեստբանկը», իսկ հատուկ վերահսկողության դաշտում գործող բանկերի շարքում եռամսյակի ընթացքում ավելացել է «Գլաձոր» բանկը: Այսպիսով, 2003թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 24 բանկեր՝ 229 մասնաճյուղերով:

ՀՀ տարածքում գործող 24 բանկերից 4-ը 31.03.03թ. դրությամբ գտնվել են հատուկ վերահսկողության դաշտում: Հատուկ վերահսկողության դաշտում գործող բանկերը գործել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված առողջացման ծրագրերի շրջանակներում: Շարունակվել են այդ բանկերի ակտիվների հետվերադարձի և ավանդային պարտավորությունների մարման աշխատանքները: Բանկային համակարգի ներկայացվող վերլուծությունը իրականացվել է 31.03.2003թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 20 առևտրային բանկերի տվյալների հիման վրա:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2003 թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է 8.5%-ով (3.6 մլրդ դրամ) և 31.03.03թ. դրությամբ կազմել 45.7 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի փոփոխությունը հիմնականում պայմանավորված էր երեք բանկերի կողմից արտաքին աղբյուրներից 1.4 մլրդ դրամ ընդհանուր գումարով կանոնադրական հիմնադրամի համալրմամբ: «Արդշինհինվեստբանկի» հիմնադրումը ավելացրեց բանկային համակարգի ընդհանուր կապիտալը 2.9 մլրդ դրամով, սակայն, մյուս կողմից, «Գլաձոր» բանկի անցումը վերահսկողության հատուկ դաշտ նվազեցրեց բանկային համակարգի ընդհանուր կապիտալը 973 մլն դրամով:

31.03.03թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 20 բանկերը ապահովել են 860 մլն դրամի չափով շահույթ: Շահաբաժիններ է բաշխել մեկ բանկ՝ 442 մլն դրամ գումարի չափով:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշները նախորդ եռամսյակի համեմատ բարելավվել են. ընդհանուր կապիտալի համարժեքությունն աճել է 8.7 տոկոսային կետով՝ կազմելով 39.2%, հիմնական կապիտալի համարժեքությունը նույնպես աճել է (8.6 տոկոսային կետով) և կազմել 37.4%, որը պայմանավորված է բանկերի կողմից կանոնադրական հիմնադրամի համալրմամբ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում նվազել են 3.6%-ով (6.7 մլրդ դրամ) և 31.03.2003թ. դրությամբ կազմել 179.8 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 8 բանկերում, որի 55.1%-ը բաժին է ընկել 1 բանկի: Իսկ 12 բանկերի ընդհանուր պարտավորությունների նվազման 38.1%-ը բաժին է ընկել երկու բանկերի, որը նախկինում իրավաբանական անձանցից ներգրաված ժամկետային ավանդների կրճատման հետևանք է:

Ցպահանջ պարտավորությունները եռամսյակի ընթացքում նույնպես դրսևորել են նվազման միտում՝ կրճատվելով 8.4%-ով և 31.03.03թ. դրությամբ կազմել են 74.1 մլրդ դրամ: Ընդ որում, իրավաբանական անձանց ցպահանջ ավանդները զգալիորեն նվազել են՝ 20%-ով, իսկ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներն աճել են 12%-ով: Արդյունքում ցպահանջ պարտավորությունների տեսակարար կշիռը ընդհանուր պարտավորություններում նվազել է 2.2 տոկոսային կետով՝ կազմելով 41.2%-ը:

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները եռամսյակի ընթացքում գրեթե չեն փոփոխվել՝ նվազելով ընդամենը 1.2%-ով և կազմելով 39.4 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց ժամկետային ավանդները, ներառյալ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները, ավելացել են 7.2%-ով՝ կազմելով 28.7 մլրդ դրամ:


Ավանդների նման վարքագիծը հիմնականում պայմանավորվել է նախորդ տարեվերջին ֆինանսական միջոցների ներհոսքի կենտրոնացմամբ, ինչի հետևանքով կտրուկ աճել են բանկերի կողմից դրամով և արտարժույթով ներգրավված միջոցները: 2003թ. առաջին եռամսյակում արդեն, տնտեսական ակտիվության սեզոնային անկման պայմաններում, նվազել են հատկապես ցպահանջ դրամային և արտարժութային ավանդները:

31.03.2003թ. դրությամբ բանկային համակարգի պարտավորություններում դրամային միջոցների տեսակարար կշիռը կազմել է 25.3%: Ընդ որում, ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում դրամային միջոցների կշիռը կազմել է ընդամենը 10%:

Բանկերից ներգրավված միջոցները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ նվազել են 6.3%-ով և կազմել 17.8 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 9.9%-ը: Տվյալ ցուցանիշի նվազման վրա մեծ ազդեցություն է թողել բանկերի թղթակցային հաշիվների մնացորդների 34.6%-ով նվազումը (31.03.03թ. դրությամբ կազմել են 2.7 մլրդ կամ պարտավորությունների 1.5%-ը):

Ի տարբերություն թղթակցային հաշիվների, բանկերից ներգրավված վարկերի և ավանդների գումարն աճել է 1.7%-ով՝ կազմելով 15 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 8.3%-ը:

Բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավ. անձանց և այլ ֆին. կազմ-ների ավանդներ, 5. Բանկերից ներգրավված միջոցներ, 6. Վճարվելիք տոկոսներ, 7. Պարտ-ներ կառավարության նկատմամբ, 8. Այլ պարտավորություններ

Պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված էր իրավաբանական անձանց ցպահանջ ավանդների զգալի նվազմամբ, որի մի մասը չեզոքացվել է ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդների աճով: Ընդհանուր պարտավորությունների նվազման վրա իր ազդեցությունն է թողել նաև բանկերի թղթակցային հաշիվների մնացորդների նվազումը, ինչպես նաև «Գլաձոր» բանկի վերահսկողության ընդհանուր դաշտից դուրս գալը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2003 թ. առաջին եռամսյակում բանկային համակարգի ակտիվները նվազել են 1.3% կամ 3.1 մլրդ դրամով՝ կազմելով 225.5 մլրդ դրամ:

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ակտիվները նվազել են ընդամենը 1.3%-ով, ակտիվների կառուցվածքում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ: Այսպես, իրավաբանական անձանց և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկավորումը նվազել է 4.5%-ով (2.6 մլրդ դրամ) և կազմել 55.6 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 24.7%-ը, իսկ ֆիզիկական անձանց վարկավորումն աճել է 20.8%-ով (3.9 մլրդ դրամ) և կազմել 22.6 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 10%-ը: Իրավաբանական անձանց վարկավորման նվազումը համակարգային բնույթ չի կրում և մեկ բանկում խոշոր վարկի մարման և «Գլաձոր» բանկի ընդհանուր վերահսկողական դաշտից դուրս գալու հետևանք է:


Բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը նվազել են 49.7%-ով (2.2 մլրդ դրամ) և կազմել 2.3 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 1%-ը: Տվյալ նվազումը նույնպես պայմանավորված է մեկ բանկի գործունեությամբ:

ՀՀ ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվները եռամսյակի ընթացքում նվազել են 3.8 մլրդ դրամով. զուգահեռաբար այլ բանկերում պահվող թղթակցային հաշիվների մնացորդներն աճել են 3.6 մլրդ դրամով:

Բանկերի ժամկետային ակտիվները նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ նվազել են 3.9%-ով և կազմել 136.4 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 60.5%-ը (31.12.02.թ. 62.1%-ի համեմատ):

Ընդհանուր ակտիվների աճ է արձանագրվել 10 բանկերում և նվազում՝ 10 այլ բանկերում:


Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի նկատմամբ
5. Պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր աշխատակիցներին և կապված անձանց
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Ընդհանուր առմամբ, վարկային ներդրումները (ներառյալ միջբանկային վարկերը) նվազել են 5.6%-ով և 31.03.2003 թ. դրությամբ կազմել 95.4 մլրդ դրամ: Նախորդ եռամսյակի համեմատ տնտեսությանը տրված վարկերի ծավալներում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. վարկավորման աճ է արձանագրվել գյուղատնտեսության, շինարարության, առևտրի և սպառողական վարկերի ոլորտներում՝ համապատասխանաբար 9.2%, 9.6%, 5.6 % և 1.2%: 31.03.03թ. դրությամբ այս ճյուղերին բաժին է ընկել տեղաբաշխված միջոցների 54.8%-ը: Զգալի նվազել է արդյունաբերության (13.3%), տրանսպորտի և կապի (19.1%), ֆինանսական հատվածների վարկավորումը (18.9%): Արդյունաբերական ճյուղի վարկավորման նվազման պատճառը էներգետիկայի ճյուղի վարկավորման կրճատումն էր (12.4%): Նվազել է նաև թանկարժեք քարերի և մետալուրգիական ճյուղի վարկավորումը՝ համապատասխանաբար 33.2%-ով և 35.9%-ով, սակայն ցածր տեսակարար կշիռ ունենալու պատճառով զգալի ազդեցություն չի թողել արդյունաբերության վարկավորման ծավալների վրա:

Բանկային համակարգի վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Ֆինանսական հատված, 7. Սպառողական վարկեր, 8. Այլ ճյուղեր

Ըստ ռիսկի խմբերի վարկային ներդրումների դասակարգման արդյունքները ցույց են տալիս, որ եռամսյակի ընթացքում վարկային պորտֆելում 1.4 տոկոսային կետով աճել է դասակարգված վարկերի տեսակարար կշիռը և կազմել վարկային ներդրումների 6.3%-ը: Արդյունքում՝ 31.03.03թ. դրությամբ վարկային պորտֆելն ունեցել է հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը կազմել են 93.7%, «հսկվող» վարկերը՝ 4%, «ոչ ստանդարտ» վարկերը՝ 1.2%, «կասկածելի» վարկերը՝ 1.2%:

31.03.2003թ. դրությամբ վարկերի հնարավոր կորուստների պահուստի մեծությունը կազմել է վարկային ներդրումների 2.2%-ը՝ նախորդ եռամսյակի՝ 2.0%-ի փոխարեն:

Վարկային ներդրումների նվազումը իր ազդեցությունն է թողել նաև եկամտաբեր ակտիվների նվազման վրա: Եռամսյակի ընթացքում եկամտաբեր ակտիվները նվազել են 23.4%-ով՝ կազմելով 96.7 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների մոտ 43%-ը:

Բանկային համակարգի իրացվելիությունը եռամսյակի ընթացքում պահպանվել է բավականին բարձր մակարդակի վրա, որի մասին վկայում են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության տնտեսական նորմատիվների ցուցանիշները. 31.03.2003թ. դրությամբ $Ն2^1$-ը կազմել է 47.3%, իսկ $Ն2^2$-ը՝ 114.7%՝ պահանջվող 25% և 80%-ի փոխարեն:

Վարկային պորտֆելի նվազումը չի կարելի համընդհանուր միտում համարել, քանի որ մեկ բանկի գործունեության արդյունք է: Բացի այդ, ֆիզիկական անձանց վարկավորման աճը վկայում է վարկավորման ոլորտում բանկերի աշխուժացման մասին:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

2003թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգը ստացել է 10.8 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 9.6 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում, բանկերի չբաշխված շահույթը հարկումից և հաշվարկված շահաբաժիններից հետո կազմել է 860 մլն դրամ:

Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ 2003 թ. առաջին եռամսյակում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում աճել է 4.1 տոկոսային կետով և կազմել 49.1%՝ հանդիսանալով բանկերի եկամուտների հիմնական աղբյուրը:

Նախկինում դուրս գրված, ինչպես նաև առկա դասակարգված ակտիվների վերադասակարգումից ակտիվների վերադարձման արդյունքում եկամուտները կազմել են համախառն եկամտի 29.1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ տվյալ ցուցանիշը նվազել է 5.9 տոկոսային կետով:

Ոչ տոկոսային եկամուտների կշիռը կազմել է համախառն եկամուտների 21.8%-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 20.1%-ի համեմատ: Ինչպես և նախորդ ժամանակաշրջաններում, ոչ տոկոսային եկամուտների կազմում գերակշռել են ստացված կոմիսիոն վճարները՝ 68.1%, որոնք նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 3.7 տոկոսային կետով՝ վկայելով բանկային համակարգի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, ինչպես նաև գործարար մթնոլորտի աշխուժացման մասին:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ եկամուտների կառուցվածքի փոփոխության վրա հիմնական ազդեցություն է թողել ընդհանուր ակտիվներում վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի կշռի աճը 3.3 տոկոսային կետով (կազմել է 43.2%), որի արդյունքում էլ տեղի է ունեցել տոկոսային եկամուտների կշռի աճը:


2003թ. առաջին եռամսյակի ընթացքում շահույթով աշխատել են 13 բանկեր, որոնց շահույթը կազմել է 1.6 մլրդ դրամ: Ստացված շահույթի 78.6%-ը բաժին է ընկել 6 բանկի: Վնասով աշխատող 7 բանկերի վնասը եռամսյակի ընթացքում կազմել է 730 մլն դրամ, որի 82%-ը բաժին է ընկել մեկ բանկի՝ պայմանավորված ակտիվների որակի ճշգրտումներով:

2003 առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվել են քարտերով վճարումների միասնական համակարգի, Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի զարգացման և այլ աշխատանքներ:

2003 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացվել է 292.2 մլրդ ՀՀ դրամ ծավալով 200141 վճարում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ միջին օրական դրամական փոխանցումների ծավալն ավելացել է 942 մլն ՀՀ դրամով, իսկ քանակը՝ 481-ով: 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ միջին օրական փոխանցումների ծավալը նվազել է 1842 մլն ՀՀ դրամով (քանակը նվազել է 380-ով)՝ պայմանավորված տարեվերջի համեմատ տարեսկզբի տնտեսական պասիվությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների կառուցվածքում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 50.19%-ը (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են մոտ 2.6 տոկոսային կետով) և քանակի 71.84%-ը (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 3.8 տոկոսային կետով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակի և ծավալի դինամիկան



Էլեկտրոնային վճարումների համակարգ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 186, այդ թվում՝ ընդգրկվել են ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 23 առևտրային բանկեր՝ 112 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք. Մոսկվա):

2003թ. առաջին եռամսյակի ընթացքում վճարումների գերակշիռ մասն իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 75.94%-ը, քանակի 98.2%-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տեսակարար կշիռն աճել է համապատասխանաբար՝ 1.79%-ով և 1.21%-ով: Առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս ընդհանուր վճարումների կառուցվածքում, նախորդ տարվա համեմատ ավելացել են՝ վճարումների ծավալային կառուցվածքում 5 տոկոսային կետով՝ կազմելով մոտ 89%, իսկ քանակային կառուցվածքում՝ 1 տոկոսային կետով՝ կազմելով մոտ 99%:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2002թ. առաջին եռամսյակի համեմատությամբ ավելացել է 505-ով՝ կազմելով մոտ 3071, իսկ ծավալը՝ 780 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 3467 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 82 հազ. ՀՀ դրամով և կազմել 1129 հազ. ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են նախաձեռնված վճարումների քանակի 0.04%-ը, ծավալի 0.26%-ը (82 փոխանցում՝ 587մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում, իրացվելիության չբավարարման պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում նախաձեռնված վճարումների քանակի 0.003%-ը, ծավալի 0.001%-ը (2 փոխանցում՝ 7 մլն ՀՀ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումներն ըստ հաղորդագրության տեսակների

Հաղորդագրության տեսակը	1999	2000	2001	2002	I եռ. 02	I եռ. 03
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	236 657	562 399	478 783	590 026	107 922	140 224
Քանակ	129 508	323 511	216 563	251 794	54 296	67 895
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	64 231	112 008	118 767	156 358	28 589	428 556
Քանակ	198 764	409 858	364 041	424 288	78 859	99 702
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	11	14	1	1	0
Քանակ	0	120	27	4	3	0
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	251	4 047	5 128	911	930
Քանակ	0	6 153	112 721	127 122	26 163	23 481
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	140	412	534	222	37
Քանակ	0	65	526	324	145	50
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	2 927	13 194	610	564	8
Քանակ	0	637	749	327	130	65
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	0	24 257	150 299	196 161	33 742	37 838
Քանակ	0	4 288	19 430	24 506	4 659	5 351
Ընդամենը						
Գումար (մլն ՀՀ դրամ)	300 888	701 993	765 515	948 818	171 950	221 893
Քանակ	328 272	744 632	714 057	828 365	164 255	196 544

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները 2001 - 2002 թթ. և 2003 թ. առաջին եռամսյակի ընթացքում



Համախառն թղթային վճարումներ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2003թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը (եռամսյակի վերջի դրությամբ վերջիններիս քանակը կազմել է 25), ՀՀ գանձապետարանը և ՀՀ կենտրոնական բանկը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 7.3%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 3.8 տոկոսային կետով), քանակի 0.5%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.4 տոկոսային կետով):

Թղթային եղանակով իրականացված միջին օրական վճարումները 2002 թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել են. քանակը նվազել է 12-ով՝ կազմելով 50, իսկ ծավալը՝ 179 մլն դրամով՝ կազմելով 858 մլն դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2002թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է մոտ 6 մլն դրամով և կազմել 17 մլն դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակա-հատված	Համախառն				Զուտ		Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով	
	Էլեկտրոնային		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
Ընդամենը 2001	765515	714057	230516	15638	2844	9218	64123	1757	1062998	740670
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.01	96.41	21.69	2.11	0.27	1.24	6.03	0.24	100	100
Ընդամենը 2002	948818	828365	210930	15185	300	1083	74221	1656	1234269	846289
տեսակարար կշիռը վճարումներում (%)	76.87	97.88	17.09	1.79	0.02	0.13	6.01	0.20	100	100
2002 – I եռ.	171950	164255	43425	3948	235	800	16290	358	231900	169361
տեսակարար կշիռը վճարումներում (%)	74.15	96.99	18.73	2.33	0.10	0.47	7.02	0.21	100	100
2003 – I եռ.	221893	196544	54895	3206	0	0	15393	391	292181	200141
տեսակարար կշիռը վճարումներում (%)	75.94	98.2	18.79	1.6	0.00	0.00	5.27	0.2	100	100

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2003թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարվել են Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում պետական կարճաժամկետ պարտատոմսերի առք ու վաճառքի, գրավադրման գործառնությունների հետ կապված սկզբունքների մշակման աշխատանքներ: Իրականացվել են երկրորդային շուկայի ենթահամակարգում գործառնությունների հետ կապված՝ հաշվարկների DVP (առաքում՝ վճարման դիմաց) սկզբունքով գործող ծրագրային ապահովման տեխնոլոգիայի և տեխնիկական առաջադրանքի, պարտատոմսերի շրջանառության իրավական դաշտը կանոնակարգող փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

2003թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 13 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Եռամսյակի ընթացքում համակարգի կողմից ձևավորվել է 391 հանձնարարական՝ 15393 մլն ՀՀ դրամ ծավալով (2002թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 897 մլն ՀՀ դրամով), այդ թվում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 7322 մլն ՀՀ դրամի վճարում, իսկ արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 8071 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Գանձապետական պահառու համակարգի կողմից արժեթղթերի շրջանառության ծավալը կազմել է 315 մլն ՀՀ դրամ, այդ թվում՝ տեղաբաշխումը կազմել է 137 մլն ՀՀ դրամ, իսկ մարումը՝ 178 մլն ՀՀ դրամ:

«Արքա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգ

2003թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է «Արքա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգի զարգացման, ինչպես նաև ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով գործառնությունները խթանելու աշխատանքները:

Եռամսյակի ընթացքում «Արքա» պրոցեսինգային կենտրոնը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, լիցենզավորվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից և գրանցվել է որպես քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպություն: Ներկայումս պրոցեսինգ իրականացնող միակ կազմակերպությունն է Հայաստանի Հանրապետությունում:


Միջազգային քարտային համակարգի քարտերի սպասարկման կանոնակարգման նպատակով կատարվել են MasterCard, «Արմենիան Քարդ» ՓԲԸ և MasterCard միջազգային քարտային համակարգին անդամակցող բանկերի (Հայէկոնոմբանկ, Անելիք, Զարգացման Հայկական և Հայներարտբանկ) փոխհարաբերությունները կարգավորող պայմանագրի նախագծի մշակման աշխատանքներ:

2003թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ «Արքա» քարտերով վճարումների միասնական համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 11 բանկեր, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը: Եռամսյակի ընթացքում «Արքա» քարտերի սպասարկման նպատակով նոր ավտոմատ գանձման սարքավորումներ են տեղադրվել Երևանում, Արտաշատում, Նոր Հաճնում, Մեծամորում:

Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող «Արքա» քարտերի քանակը կազմել է 14217, որոնք թողարկվել և սպասարկվել են համակարգի անդամ 9 առևտրային բանկերի կողմից: «Արքա» քարտերի սպասարկման ժամանակ ավտորիզացիան և քարտերի նույնականացումն իրականացվել են «Արքա» պրոցեսիգային կենտրոնի կողմից:

Շրջանառության մեջ գտնվող «Արքա» քարտերով իրականացվել է 83411 գործարք՝ 2037 մլն ՀՀ դրամ ծավալով: Տրամադրված «Արքա» քարտերի քանակը եռամսյակի ընթացքում ավելացել է մոտ 1.2 անգամ, իսկ 2002թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 2.9 անգամ: «Արքա» քարտերով գործառնությունների ծավալը 2002թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է մոտ 0.8 անգամ, սակայն 2002թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.6 անգամ: Շրջանառության մեջ գտնվող մեկ «Արքա» քարտով ամսական կատարվել է միջինը 2 գործառնություն, իսկ մեկ գործառնության միջին ծավալը կազմել է 24 հազ. ՀՀ դրամ: 2002թ. համեմատ այս ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում նվազել է 6 հազ. ՀՀ դրամով, ինչը վկայում է քարտատերերի կողմից քարտային հաշիվներում միջոցների կուտակման, քարտային համակարգի նկատմամբ վստահության բարձրացման մասին:

«Արքա» քարտերի զարգացման դինամիկան



Քարտերի սպասարկման կետերի քանակը (31.03.2003 դրությամբ)

Քանակ

Ավտոմատ գանձման սարքեր	26
POS – տերմինալներ	189
Իմպրինտերներ	37
Ընդամենը	**252**

Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «ԱրՔա» քարտերով կատարված գործարքներ (2003 թ. I եռամսյակ)

	Գումար (մլն դրամ)	*Քանակ*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	1011.9	43293
POS – տերմինալների միջոցով	1024.6	40115
Իմպրինտերների միջոցով	0.2	3
Ընդամենը	2036.7	83411

Միջազգային փոխանցումների համակարգեր

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը միջազգային դրամական փոխանցումներ իրականացնելու նպատակով օգտագործում են WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերը: 2003թ. առաջին եռամսյակի ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն միջոցների ներհոսքը կազմել է 26311 մլն ՀՀ դրամ, որը 22889 մլն ՀՀ դրամով գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ դիտարկված միջոցների ներհոսքն աճել է 1.4 անգամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը նվազել է 0.9 անգամ:

2003թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ SWIFT համակարգին անդամակցող՝ ՀՀ տարածքում գործող բանկերի քանակը կազմել է 20, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը: Համակարգի միջոցով փոխանցումներում գերակշռել են դեպի Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները՝ ծավալը՝ 10223 մլն ՀՀ դրամով, իսկ քանակը՝ 30817 փոխանցումով: 2002թ. առաջին եռամսյակի համեմատ դիտարկված միջոցների ներհոսքը նվազել է 0.9 անգամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալն աճել է 1.03 անգամ:

Վճարահաշվարկային բնագավառի կարգավորում և զարգացում

2003թ. առաջին եռամսյակի ընթացքում շարունակվել են վճարահաշվարկային բնագավառի զարգացման աշխատանքները:

Հաշվի առնելով ՀՀ տարածքում մանր վճարումների ոլորտի զարգացման անհրաժեշտությունը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից, ԱՄՀ և Համաշխարհային բանկի համատեղ FSAP ծրագրի շրջանակներում, շարունակվել են ՀՀ տարածքում գործող բանկերի, ՀՀ պետական տարբեր գերատեսչությունների, կենցաղսպասարկման ծառայություն մատուցող, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ աշխատանքները՝ նշված ոլորտն ուսումնասիրելու և զարգացումը խոչընդոտող հիմնախնդիրները բացահայտելու նպատակով: Կատարվել են այս բնագավառում Կենտրոնական բանկի դերի, ինչպես նաև առաջադեմ տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները պարզաբանելու աշխատանքներ:

Լրամշակվել է «Վարկային ռեգիստր» համակարգը: Կատարելագործվել են համակարգի կառավարման և սխալ մուտքագրումների որոնման և շտկման մեխանիզմները: Իրականացվել է «Վարկային ռեգիստր» ծրագրային համակարգի աշխատանքը (ֆորմատները) նկարագրող փաստաթղթերի լրամշակումը:

Հաշվետու եռամսյակի ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգերի անվտանգության և տվյալների պաշտպանության բարձրացմանն ուղղված ապարատա-ծրագրային մեթոդների կիրառման հնարավորությունները:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2003 թ. հունվար-մարտին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար*	*Հունվար – փետրվար*	*Հունվար – մարտ*	*2003 թ. հունվար-մարտի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	51852.9	111675.8	189882.4	111.4
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	104.2	103.4	103.9	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)* [1]	40.6	87.6	148.8	112,4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	28304.7	58344.5	90700.3	110.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	589.8	1123.7	1626.5	101.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	11960.9	20773.6	33515.3	106.7
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	38112.4	76276.7	124179.4	110.7
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	2972.7	8063.1	13914.9	133.2
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	50225.9	117800.1	196373.4	103.5[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	64599.9	131343.3	210497.1	107.8[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	27732	27741	28062	110.8[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1403.3	1403.5	1403.6	--
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	127.3	127.5	127.6	--
Գործազրկության մակարդակը (%)	9.1	9.1	9.1	--

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար*	*Հունվար – փետրվար*	*Հունվար – մարտ*	*2003 թ. հունվար-մարտը 2002 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB. մլն ԱՄՆ դոլար)*	42.2	85.5	132.8	110.6
Ներմուծում *(CIF. մլն ԱՄՆ դոլար)*	87.2	168.5	256.8	125.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	45.0	83.0	123.9	146.9

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	104.1	97.0	100.0	100.2
Փետրվար	98.5	105.7	100.3	102.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.0
2003 թ. հունվար-մարտը 2002 թ. հունվար-մարտի նկատմամբ	103.4	105.2	100.6	105.3

IV. Սղաճ

ժամանակաշրջան	*2001*	*2002*	*2003*	*2003*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.6	2.2	4.1	4.1
Փետրվար	-0.9	-0.7	-1.5	2.5
Մարտ	0.0	-0.6	-0.5	2.1
Ապրիլ	-0.1	2.5		
Մայիս	1.6	1.7		
Հունիս	-1.3	-0.5		
Հուլիս	-2.7	-5.0		
Օգոստոս	-0.7	-3.0		
Սեպտեմբեր	-1.2	-0.6		
Հոկտեմբեր	0.1	0.5		
Նոյեմբեր	1.2	2.2		
Դեկտեմբեր	2.4	3.6		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.9	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.1	1.1		

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3]
	Կենտրոնական կառավարության պետական արժեթղթեր	Պետական արժեթղթերի կրկնամյա պարտատոմսեր	Պետ. արժեթղթերի գնաշղթային զուտ	ընդամենը	Կենտրոն. կառավ. հաշիվներ ՀՀ պետական գանձապետարանում	Կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի միջոցներ	ընդամենը		
2002												
Դեկտեմբեր	0	3437	0	3437	12992	150	5	0	0	13148	-9711	***-9707***
2003												
Հունվար	0	1897	0	1897	14622	150	56	0	0	14828	-12931	***-12921***
Փետրվար	0	1791	0	1791	11839	151	105	58	0	12153	-10362	***-10366***
Մարտ	0	1744	0	1744	15150	151	7	0	0	15308	-13564	***-13617***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***123657***	***124388***	***123570***	***116338***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-12384***	***-24298***	***-25787***	***-23007***
Կառավարություն	-9711	-12931	-10362	-13564
Կենտրոնական կառավարություն	-9711	-12931	-10362	-13564
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	-58	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0
Բանկեր	10392	9642	4981	7500
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0
ավանդներ (-)	0	-750	-2360	0
Զուտ այլ ակտիվներ	-13065	-21009	-20406	-16943
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***108315***	***101173***	***98802***	***94870***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***111273***	***100090***	***97783***	***93331***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	92088	77756	78573	77965
Պարտադիր պահուստ. (դրամով)	18829	21959	18799	14920
Այլ հաշիվներ	356	375	411	446
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***21122***	***731***	***-818***	***-7232***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***274***	***-11914***	***-1489***	***2780***
Կառավարություն	-1816	-3220	2569	-3202
Կենտրոնական կառավարություն	-1816	-3220	2569	-3202
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	58	-58
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0
Բանկեր	296	-750	-4661	2519
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0
ավանդներ (-)	0	750	1610	-2360
Զուտ այլ ակտիվներ	1794	-7944	603	3463
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***15896***	***-7141***	***-2371***	***-3933***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***21396***	***-11183***	***-2307***	***-4452***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	17973	-14332	817	-608
Պարտադիր պահուստ. (դրամով)	3359	3130	-3160	-3879
Այլ հաշիվներ	64	19	36	35
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***20.6***	***0.6***	***-0.7***	***-5.9***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-2.2***	***96.2***	***6.1***	***-10.8***
Կառավարություն	23.0	33.2	-19.9	30.9
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	1	-100.0
Բանկեր	2.9	7.2	-48.3	50.6
Զուտ այլ ակտիվներ	-12.1	60.8	-2.9	-17.0
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***17.2***	***-6.6***	***-2.3***	***-4.0***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***23.8***	***-10.1***	***-2.3***	***-4.6***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	24.3	-15.6	1.1	-0.8
Պարտադիր պահուստ. (դրամով)	21.7	16.6	-14.4	-20.6
Այլ հաշիվներ	21.9	5.3	9.6	8.5

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՍ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՍ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ – 03	Փ - 03	Մ - 03
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18286**	**15367**	**20373**	**24667**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	70982	83308	73718	75790
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-49365	-65466	-50842	-49028
Արտաքին պարտավորություններ դրամով	-3331	-2476	-2502	-2095
ԶՆԱ	**95940**	**94480**	**89127**	**83426**
Կառավարություն	10569	10626	9140	11246
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	11467	14600	13072	6943
Պահուստային ակտիվներ	22069	25121	23960	17895
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-10601	-10521	-10888	-10951
Տնտեսություն[2]	93993	89563	86579	87719
Ձեռնարկություններ[3]	63218	61063	57655	56514
Դրամով	19543	14356	14949	15137
Արտարժույթով	43675	43211	39497	38365
Արժեթղթեր	4130	3495	3201	3013
Տնային տնտեսություններ	30775	23523	24377	26083
Դրամով	7533	4261	4289	4495
Արտարժույթով	24641	19262	20088	21589
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64	71	77	75
Դրամով	64	64	64	62
Արտարժույթով	0	7	13	13
Այլ ֆինանսական կազմակերպություններ[4]	-	4907	4469	4943
Դրամով	-	3286	3077	3378
Արտարժույթով	-	1621	1393	1565
Զուտ այլ ակտիվներ	-20089	-20309	-19663	-22483
Արտաքին ակտիվներ դրամով	9	36	176	946
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	2494	1310	4571	1237
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-41	-163	-3496	-229
Ներդրումներ փայաբաժիններում	158	221	225	224
Միջբանկային պահանջներ	4997	4896	3476	6124
Այլ ակտիվներ	30380	29789	28314	29767
Միջբանկային պարտավորություններ	-4671	-4569	-3178	-5747
Դրամական շուկայի գործիքներ	0	-	-277	-479
Կապիտալ հաշիվներ	-42342	-43115	-42217	-45258
Այլ պարտավորություններ	-11166	-8714	-7258	-9068
ԱՎԱՆԴՆԵՐ	**114227**	**109847**	**109500**	**108094**
Դրամով ավանդներ	35190	32276	31931	31321
Ժամկետային ավանդներ	9508	10696	9978	11158
Ավանդներ արտարժույթով	79037	77571	77569	76773
Ցպահանջ ավանդներ	36853	34178	34580	33126
Ժամկետային ավանդներ	41836	43014	42594	43231
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	375	378	394	415

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[3] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[4] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆին. կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմ.» տողում:

ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***148902***	***139755***	***143943***	***141005***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***54236***	***45447***	***41491***	***42337***
Կառավարություն	963	-2305	-1222	-2317
Տնտեսություն [4,5]	94016	89584	86596	87739
Չեռնարկ. և կազմակերպ.	67710	61063	57655	56618
որից՝ կուտակված տոկոսներ	1041	915	908	961
Տնային տնտեսություններ	26242	23543	24395	26103
որից՝ կուտակված տոկոսներ	500	499	512	525
Հասարակական կազմակերպություններ	64	71	77	75
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ [7]	0	4907	4469	4943
որից՝ կուտակված տոկոսներ	0	44	57	62
Զուտ այլ ակտիվներ	-40743	-41832	-43883	-43085
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [5,7]	***123897***	***107407***	***107600***	***106323***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***202588***	***184602***	***184788***	***182683***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [6,7]	***203138***	***185202***	***185434***	***183342***
Շրջանառությունում կանխիկ դրամ	88556	74980	75523	74801
Ցպահանջ ավանդներ [6,7]	26036	21954	22351	20608
կուտակված տոկոսներ	144	21	28	26
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ. [7]	88546	88267	87560	87932
կուտակված տոկոսներ	406	579	618	633
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ [7]	79038	77572	77582	76774
Ցպահանջ [7]	36854	34178	34593	33126
Ժամկետային [7]	41836	43014	42594	43231
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	347	378	394	415
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-9147***	***4188***	***-2938***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-8789***	***-3956***	***846***
Կառավարություն		-3268	1083	-1095
Տնտեսություն		-4432	-2988	1143
Չեռնարկ. և կազմակերպ.		-6647	-3408	-1037
որից՝ կուտակված տոկոսներ		-126	-7	53
Տնային տնտեսություններ		-2699	852	1708
որից՝ կուտակված տոկոսներ		-1	13	13
Հասարակական կազմակերպություններ		0	6	-2
որից՝ կուտակված տոկոսներ		0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ		4907	-438	474
որից՝ կուտակված տոկոսներ		44	13	5
Զուտ այլ ակտիվներ		-1089	-2051	798
ԴՐԱՄԱՅԻՆ ՋԱՆԳՎԱԾ [7]		***-16490***	***193***	***-1277***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-17986***	***186***	***-2105***
ՓՈՂԻ ՋԱՆԳՎԱԾ [8]		***-17936***	***232***	***-2092***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-13576	543	-722
Ցպահանջ ավանդներ [9]		-4082	397	-1743
կուտակված տոկոսներ		-123	7	-2
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-279	-707	372
կուտակված տոկոսներ		173	39	15
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1466	10	-808
Ցպահանջ		-2676	415	-1467
Ժամկետային		1178	-420	637
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ		31	16	21

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-6.1***	***3.0***	***-2.0***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-16.2***	***-8.7***	***2.0***
Կառավարություն		-339.4	-47.0	89.6
Տնտեսություն		-4.7	-3.3	1.3
Ձեռնարկ. և կազմակերպ.		-9.8	-5.6	-1.8
Տնային տնտեսություններ		-10.3	3.6	7.0
Հասարակական կազմակերպություններ		-	-	-
Այլ ֆինանսական կազմակերպություններ		-	-	-
Զուտ այլ ակտիվներ		2.7	4.9	-1.8
ԴՐԱՄԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾ [7]		-13.3	0.2	-1.2
ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		-8.9	0.1	-1.1
ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ [8]		-8.8	0.1	-1.1
Շրջանառությունում կանխիկ դրամ		-15.3	0.7	-1.0
Ցպահանջ ավանդներ		-15.7	1.8	-7.8
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-0.3	-0.8	0.4
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1.9	0.0	-1.0
Ցպահանջ		-7.3	1.2	-4.2
Ժամկետային		2.8	-1.0	1.5

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] ՉԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՉԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՉԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքով:

[3] ԿԲ ՉԱՄ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:

[4] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[5] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[6] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆին. կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[7] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[8] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[9] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2001 [2]	2002 [3]	2003		
	Դ	Դ	Հ	Փ	Մ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	431.3	420.0	417.8	403.6
Համախառն միջազգային պահուստներ	333.2	441.7	430.4	428.2	413.2
Ոսկի	12.4	15.7	16.3	15.9	14.9
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	30.1	26.2	26.1	26.0
Արտարժույթ [4]	310.6	395.9	387.8	386.3	372.2
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*[5]	***331.2***	***432.3***	***421.4***	***419.3***	***405.2***

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը:

[3] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2002 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.3595 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2002 թ. դեկտեմբեր, 2003 թ. հունվար և փետրվար ամիսներին «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

[4] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[5] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2001[3]	2002[3]	2003		
	Դ	Դ	Հ	Փ	Մ
Վարկեր [1]					
Իրավաբանական անձանց					
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	26.7	20.7
ԱՄՆ դոլարով	20.3	19.4	18.9	20.2	20.2
Ֆիզիկական անձանց					
ՀՀ դրամով	30.2	22.5	22.5	25.6	27.2
ԱՄՆ դոլարով	35.5	33.5	34.6	28.7	35.9
Ավանդներ [1]					
Իրավաբանական անձանցից					
ՀՀ դրամով	15.0	8.3	7.8	8.5	7.9
ԱՄՆ դոլարով	9.7	2.0	4.3	2.3	5.7
Ֆիզիկական անձանցից					
ՀՀ դրամով	14.6	9.8	8.9	8.8	7.8
ԱՄՆ դոլարով	10.8	5.6	4.7	3.5	7.0
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	13.5	13.5	10.0	10.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	6.0	6.0	5.0	5.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	28.0	28.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	16.4	15.6	14.9	12.8	13.5
Սղաճ	2.9	2.0	4.1	-1.5	-0.5

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:
[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:
[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:
[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ցուցանիշներ	Միջբանկային ռեպո շուկայի շրջանառությունը									
	մինչև 7 օր		8-14 օր		15-28 օր		28 օր և ավելի		Ընդամենը	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
2003										
Հունվար	4738.18	10.95	611.94	11.42	17.00	12.00	1247.95	8.99	**6615.07**	**10.63**
Առավելագույն տոկոսադրույք		13.50		12.00		12.00		10.00		**13.50**
Նվազագույն տոկոսադրույք		9.00		10.50		12.00		6.50		**6.50**
Ստանդարտ շեղում		0.95		0.71				1.35		**1.35**
Փետրվար	2696.63	8.81	220.00	7.00	9.34	9.00	279.80	8.99	**3205.77**	**8.70**
Առավելագույն տոկոսադրույք		11.00		7.00		9.00		10.00		**11.00**
Նվազագույն տոկոսադրույք		5.00		7.00		9.00		6.50		**5.00**
Ստանդարտ շեղում		1.66						1.75		**1.62**
Մարտ	5326.93	7.74	29.10	9.00			623.94	10.00	**5979.98**	**7.98**
Առավելագույն տոկոսադրույք		10.00		9.00				10.00		**10.00**
Նվազագույն տոկոսադրույք		6.00		9.00				10.00		**6.00**
Ստանդարտ շեղում		0.88		-				-		**1.14**
Ընդամենը	12761.74	9.16	861.04	10.21	26.34	10.94	2151.69	9.28	**15800.81**	**9.24**
Առավելագույն տոկոսադրույք		13.50		12.00		12.00		0.00		**13.50**
Նվազագույն տոկոսադրույք		5.00		7.00		9.00		6.50		**5.00**

** ԿԲ կողմից իրականացված գործառնություններն ընդգրկված չեն:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

ժամկետ	Ավանդի ծավալ*	Տոկոսադրույք	Վարկի ծավալ*	Տոկոսադրույք
2002				
Հունվար	1780	8	-	-
Փետրվար	4524	6.71	-	-
Մարտ	2170	6	250	28
Ապրիլ	45	6	269	28
Հունիս	-	-	4161	28
Հուլիս	-	-	508	28
Օգոստոս	-	-	518	28
Սեպտեմբեր	245	6	-	-
Հոկտեմբեր	100	6	2187	28
Նոյեմբեր	200	6	-	-
Դեկտեմբեր	-	-	-	-
2003				
Հունվար	750	6	-	-
Փետրվար	8110	5.7	-	-
Մարտ	2720	5.0	-	-

** Մարումները հանված չեն:*

ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն դրամ)

ժամկետ	Ռեպո համաձայն. ծավալը *	Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	Հակադարձ ռեպո համաձայն. ծավալը*	Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը
2002				
Հունվար	-	-	-	-
Օգոստոս	2863	13.5	-	-
Հոկտեմբեր	1118	13.5	-	-
Դեկտեմբեր	-	-	-	-
2003				
Հունվար	-	-	-	-
Փետրվար	-	-	159.0	10.0
Մարտ	-	-	-	-

** Մարումները հանված չեն:*

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-02	Հ-03	Փ-03	Մ-03
1	-	-	-	-
2	585.81	-	-	-
3	585.81	-	585.46	588.85
4	586.51	-	584.65	588.99
5	586.51	-	585.52	-
6	586.15	-	584.70	588.99
7	-	585.10	586.00	588.85
8	-	586.63	-	-
9	586.44	579.03	-	-
10	586.79	582.48	586.41	589.25
11	586.92	-	586.10	589.88
12	586.92	-	585.89	590.23
13	586.35	582.48	586.23	590.93
14	-	582.48	585.81	591.53
15	-	582.17	585.81	591.53
16	585.51	581.00	585.81	591.53
17	585.15	582.00	585.96	591.76
18	584.88	-	585.96	591.76
19	584.00	-	-	591.76
20	582.52	582.00	586.21	591.61
21	582.52	582.00	586.56	591.51
22	-	582.00	586.56	-
23	582.16	582.25	-	-
24	582.16	584.00	587.36	591.22
25	582.22	584.00	587.70	590.64
26	582.00	-	587.81	590.55
27	582.20	584.23	588.12	590.23
28	582.20	-	588.46	589.52
29	583.65	584.44	-	589.52
30	584.89	584.64	-	589.52
31	-	584.73	-	589.52
ժամանակահատվածի վերջ	584.89	584.73	588.46	589.52
ժամանակահատվածի միջին	584.59	583.03	586.32	590.40

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(2003 թ. մարտի 31-ի դրությամբ)

Եկամուտների և ծախսերի հաշվետվություն

(հազար ՀՀ դրամ)

	Ծանոթագրություն	*31.03.03*	*31.03.02*
Եկամուտներ			
Եկամուտներ թանկարժեք մետաղներից և արտարժութային գործառնություններից	1	1,070,329	1,378,703
Եկամուտներ դրամով գործառնություններից	2	233,955	504,607
Այլ եկամուտներ	3	308,703	171,630
Ընդամենը եկամուտներ		**1,612,987**	**2,054,940**
Ծախսեր			
Ծախսեր արտարժութային գործառնություններից	4	199,035	247,318
Վարկերի և տրամադրված երաշխիքների արժեզրկման կորուստներ		0	0
Թղթադրամի տպագրման և մետաղադրամի հատման ծախսեր		215,972	315,798
Ծախսեր դրամով գործառնություններից	5	260,876	185,039
Այլ ծախսեր	6	734,656	661,689
Ընդամենը ծախսեր		**1,410,539**	**1,409,844**
Շահույթ՝ համաձայն ՀՀ օրենսդրության		**202,448**	**645,096**
Արտարժույթի և թանկարժեք մետաղների վերագնահատումից չիրացված շահույթ (վնաս)		1,192,211	4,937,321
Շահույթ՝ համաձայն ՄՀՀՍ-ի		**1,394,659**	**5,582,417**
Շահույթի բաշխում՝			
Կառավարությանը		-	-
Գլխավոր պահուստին		-	-
Վերագնահատման պահուստին		(1,192,211)	(4,937,321)

Եկամուտների և ծախսերի հաշվետվությանը կից ծանոթագրությունները կազմում են նրա անբաժանելի մասը:

Եկամուտների և ծախսերի հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2003 թվականի մայիսի 20-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Հաշվեկշիռ

(հազար ՀՀ դրամ)

	Ծանոթագրություն	*31.03.03*	*31.12.02*
Ակտիվներ			
Ակտիվներ ոսկով և արտարժույթով			
Ոսկի	7	8,808,969	9,175,734
ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ	8	89,449,985	90,829,824
Արտարժութային ակտիվներ	9	220,602,917	234,144,032
Ակտիվներ ՀՀ դրամով			
Պետական արժեթղթեր	10	1,777,739	3,498,572
Վարկեր և ավանդներ	11	7,642,886	5,693,896
Այլ ակտիվներ	12	1,110,936	1,147,843
Հիմնական միջոցներ	13	4,704,504	4,925,602
Ընդամենը ակտիվներ		**334,097,936**	**349,415,503**
Պարտավորություններ			
Պարտավորություններ արտարժույթով			
Բանկեր		7,775,213	8,151,003
ԱՄՀ	8	102,823,240	102,808,962
Հայաստանի կառավարություն		5,838,765	6,233,249
Այլ	14	36,072	71,706
Պարտավորություններ ՀՀ դրամով			
Թղթադրամներ և մետաղադրամներ		77,964,823	92,088,496
Հայաստանի կառավարության ավանդներ և հաշիվներ		15,156,512	12,997,502
Բանկերի ավանդներ և հաշիվներ		14,922,479	18,833,173
Այլ ավանդներ և հաշիվներ		445,478	353,801
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	8	84,242,329	84,341,665
Այլ պարտավորություններ	15	1,460,071	1,497,651
Ընդամենը պարտավորություններ		**310,664,982**	**327,377,208**
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ		100,000	100,000
Գլխավոր պահուստ		9,335,186	9,335,186
Արտարժույթի և թանկարժեք մետաղների վերագնահատման պահուստներ		13,795,320	12,603,109
Շահույթ		202,448	0
Ընդամենը կապիտալ և պահուստներ		**23,432,954**	**22,038,295**
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		**334,097,936**	**349,415,503**

Հաշվեկշռին կից ծանոթագրությունները կազմում են նրա անբաժանելի մասը:

Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2003 թվականի մայիսի 20-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Ծանոթագրություն 1. Եկամուտներ բանկարժեք մետաղներից և արտարժութային գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.03.02*
Ներդրված ավանդներ արտարժույթով	714,174	629,594
Հավատարմագրային կառավարման հաշիվներ	0	393,144
Օտարերկրյա արժեթղթեր	201,838	241,845
Թղթակցային հաշիվներ	80,281	72,164
Տրամադրված վարկեր արտարժույթով	0	3,318
Ներդրված ավանդներ ոսկով	1,716	14,694
Այլ	72,320	23,944
	1,070,329	**1,378,703**

Ծանոթագրություն 2. Եկամուտներ դրամով գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.03.02*
Դրամային արժեթղթեր	88,837	427,822
Վարկեր և ռեպո համաձայնագրեր բանկերին	145,118	75,218
Ներդրված ավանդներ	0	1,566
	233,955	**504,607**

Ծանոթագրություն 3. Այլ եկամուտներ

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.03.02*
Արտարժույթի առք ու վաճառք	197,232	88,876
ՀՀ ԿԲ-ին նվիրատվություն	10,701	28,457
Տուգանքներ	1,042	26,113
Վարձավճարներ	2,148	1,842
Այլ եկամուտներ	97,580	26,342
	308,703	**171,630**

Ծանոթագրություն 4. Ծախսեր արտարժութային գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.03.02*
ԱՄՀ-ի վարկերի դիմաց հաշվեգրված տոկոս	179,404	186,505
Հաշվեգրված տոկոսներ	16,904	7,062
Այլ	2,727	53,751
	199,035	**247,318**

Ծանոթագրություն 5. Ծախսեր դրամով գործառնություններից

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.03.02*
Բանկերի հաշիվների, ավանդների և վարկերի տոկոսներ	119,481	101,913
Այլ կազմակերպությունների ավանդների տոկոսներ	116,286	46,927
Կոմիսիոն վճարներ	8,889	8,959
Այլ	16,220	27,240
	260,876	**185,039**

Ծանոթագրություն 6. Այլ ծախսեր

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.03.02*
Աշխատակիցների վարձատրություն	265,008	241,288
Հիմնական միջոցների մաշվածք	186,261	164,459
Վարչական ծախսեր	63,667	43,283
Ծախսեր արտարժույթի առք ու վաճառքից	6,967	140,174
Այլ ծախսեր	212,753	72,486
	734,656	**661,689**

Ծանոթագրություն 7. Ոսկի

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
Ոսկով ավանդներ և հաշիվներ	8,807,698	9,173,146
Հաշվեգրված տոկոսներ*	1,271	2,588
	8,808,969	**9,175,734**

** Ոսկով ավանդների դիմաց տոկոսագումարները հաշվեգրվում և ստացվում են ԱՄՆ դոլարով:*

Ծանոթագրություն 8. Արժույթի միջազգային հիմնադրամի հաշիվներ

ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
Ակտիվներ ՀՓԻ-ով	15,351,842	17,607,924
ԱՄՀ-ին անդամակցություն	74,051,720	73,155,798
Հաշվեգրված տոկոսներ	46,423	66,102
	89,449,985	**90,829,824**

ՀՀ դրամով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
ԱՄՀ-ի արժեթղթերի հաշիվ	76,652,431	77,692,249
ԱՄՀ-ի նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների կարգավորման հաշիվ	7,389,625	6,449,143
ԱՄՀ-ի թիվ 1 հաշիվ	196,796	196,796
ԱՄՀ-ի թիվ 2 հաշիվ	3,477	3,477
	84,242,329	**84,341,665**

ՀՓԻ-ով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
Վարկեր	102,656,209	102,756,065
Հաշվեգրված տոկոսներ	167,031	52,897
	102,823,240	**102,808,962**

Ծանոթագրություն 9. Արտարժութային ակտիվներ

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
Արտարժույթով ավանդներ և հաշիվներ	124,548,902	137,573,657
Հավատարմագրային կառավարման հաշիվներ	63,067,178	62,593,615
Արժեթղթեր	31,127,947	30,758,359
Արտարժույթով վարկեր	0	2,392,200
Արտարժույթով վարկերի արժեզրկման կորուստներ	0	(741,582)
Ակրեդիտիվներ	430,901	413,414
Հաշվեգրված տոկոսներ	946,511	587,036
Դեբիտորական պարտքեր արտարժույթով	190,177	353,708
Կանխիկ արտարժույթ	290,273	212,639
Այլ արտարժութային ներդրումներ	1,028	986
	220,602,917	**234,144,032**

Ծանոթագրություն 10. Պետական արժեթղթեր

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
Հայաստանի Կառավարության արժեթղթեր	1,744,034	3,437,473
Հաշվեգրված տոկոսներ	33,705	61,099
	1,777,739	**3,498,572**

Ծանոթագրություն 11. Վարկեր և ավանդներ

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
Վարկեր	7,519,556	8,023,054
Հաշվեգրված տոկոսներ	145,257	157,989
Վարկերի արժեզրկման կորուստներ	(21,927)	(2,487,147)
	7,642,886	**5,693,896**

Ծանոթագրություն 12. Այլ ակտիվներ ՀՀ դրամով

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	*31.12.02*
Դեբիտորական պարտքեր	42,693	26,926
Դրամագիտական արժեքներ	288,965	337,257
Ներդրումներ	660,247	660,247
Այլ ակտիվներ	119,031	123,413
	1,110,936	**1,147,843**

Ծանոթագրություն 13. Հիմնական միջոցներ

(հազար ՀՀ դրամ)

	Հող, շենք և շինություններ	Համակարգչ. սարքավոր.	Համակարգչ. ծրագրեր	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք կամ գնահատում					
		3 ամիս			
Առ 1 հունվարի, 2003 թ.	3,976,104	1,629,705	218,906	2,155,148	7,979,863
Ավելացում	3,802	11,302	1,064	10,167	26,335
Հաշվի կարգավորում	-	(1,064)			(1,064)
Օտարում	(73,729)	0	0	(1,729)	(75,458)
Առ 31 մարտի, 2003 թ.	3,906,177	1,639,943	219,970	2,163,586	7,929,676
Մաշվածք					
Առ 1 հունվարի, 2003 թ.	515,056	1,331,500	190,075	1,017,630	3,054,261
Կուտակված մաշվածք	45,060	32,717	3,775	104,709	186,261
Օտարում	(15,350)	0	0	0	(15,350)
Առ 31 մարտի, 2003 թ.	544,766	1,364,217	193,850	1,122,339	3,225,172
Հաշվեկշռային արժեք					
Առ 1 հունվարի, 2003 թ.	3,461,048	298,205	28,831	1,137,518	4,925,602
Առ 31 մարտի, 2003 թ.	3,361,411	275,726	26,120	1,041,247	4,704,504

Ծանոթագրություն 14. Այլ պարտավորություններ արտարժույթով

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	***31.12.02***
Կրեդիտորական պարտքեր արտարժույթով	20,236	70,435
Հաշվեգրված տոկոսներ	14,716	155
Այլ պարտավորություններ ՀՀ ռեզիդենտների հանդեպ	1,120	1,116
	36,072	**71,706**

Ծանոթագրություն 15. Այլ պարտավորություններ ՀՀ դրամով

(հազար ՀՀ դրամ)

	31.03.03	***31.12.02***
Կրեդիտորական պարտքեր	1,088,388	1,143,274
Հաշվեգրված տոկոսներ	91,122	63,903
Երաշխիքների արժեզրկման կորուստներ	162,696	162,696
Այլ	117,865	127,778
	1,460,071	**1,497,651**

ՀՀ ԲԱՆԿԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2003 Թ., ՀՈՒՆՎԱՐ)

Վիճակագրության վարչություն
Տնտեսական վիճակագրության զարգացման բաժին

2003թ. հունվարին ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության Տնտեսական վիճակագրության զարգացման բաժնի կողմից անցկացված հարցումներին մասնակցել են 23 բանկեր, որոնց ցուցակը ներկայացված է նյութի վերջում:

Հարց 1. Տնտեսական աճի նշված մակարդակներից ո՞րն եք համարում ավելի իրատեսական (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր վարկային ներդրումներում բանկերի վարկերի տեսակարար կշիռներով)[1]:

2003 թ. տնտեսական աճ	Բանկերի քանակ, տեսակարար կշիռ
Մինչև 3%	1(10.1%)
3-5%	2(1.8%)
5-7%	4(20.4%)
7-9%	8(35.2%)
9-11%	7(27.2%)
11%-ից բարձր	1(5.3%)
Միջին կշռված	**7.7%**

Համաձայն բանկերի կանխատեսումների՝ 2003թ. ակնկալվում է 7.7% (միջին կշռված) տնտեսական աճ: Ընդ որում, 15 բանկ (որոնց կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը բանկային համակարգի վարկային ներդրումներում կազմում է 62.4%) կանխատեսում է 7-11% իրական աճ: Նշենք, որ տնտեսական աճի վերաբերյալ բանկերի սպասումները էականորեն գերազանցում են ՀՀ ԴՎՔ ծրագրով կանխատեսված 6% մակարդակը: Հարկ է նշել նաև, որ բանկերի սպասումները բավականին լավատեսական են՝ 2002թ. 12.9% փաստացի իրական աճի պայմաններում: 2002թ. հունվարին բանկերը, նախորդ տարվա 9.6% իրական աճի պայմաններում, ակնկալում էին մոտ 5.3% աճ:

Տնտեսության ճյուղերի ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ ըստ առաջնայնության

Ճյուղեր	Ճյուղերի նպաստումը աճին			
	1	2	3	4
	Բանկերի քանակը			
Արդյունաբերություն	8	4	1	3
Գյուղատնտեսություն	0	3	7	5
Շինարարություն	6	6	3	1
Ծառայություններ	2	2	4	7

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշման հետ:*
[1] *Հարցերում, որտեղ նշված չեն ամփոփման կշիռները, պատասխանները կշռվել են ըստ բանկերի քանակի:*

Հարցման արդյունքներով՝ տնտեսության տնտեսական աճի վրա ըստ ազդեցության չափի ճյուղերը կունենան հետևյալ հերթականությունը[2].

Ճյուղը	Բալ
Արդյունաբերություն	1.94
Շինարարություն	1.94
Ծառայություններ	3.07
Գյուղատնտեսություն	3.13

Այսպիսով, 2003թ. տնտեսական աճի 7.7% մակարդակը, բանկերի կանխատեսմամբ, կապահովվի նախ և առաջ արդյունաբերության, շինարարության, այնուհետև՝ ծառայությունների և գյուղատնտեսության ճյուղերի հաշվին:

Հարց 2. Սղաճի նշված տարեկան մակարդակներից (2003թ. դեկտեմբերը՝ 2002թ դեկտեմբերի համեմատ) ո՞րն եք համարում առավել իրատեսական:

Սղաճի մակարդակը	Բանկերի քանակ
Մինչև 0%	0
0-2%	5
2-4%	15
4-6%	3
6%-ից բարձր	0
Միջին կշռված	**2.8%**

Բանկերի գերակշիռ մասը 2003թ. կանխատեսում է 2-4% աղաճ, սղաճի միջին մակարդակը՝ 2.8%, ինչը գրեթե համընկնում է ՀՀ ԴՎՔ ծրագրով նախատեսված 3.0 % մակարդակին: Նշենք, որ 2002թ. հուլիսին անցկացված հարցման ժամանակ բանկերն ակնկալում էին սղաճի 3.1% մակարդակ, սակայն իրականում այն կազմեց 2%:

Այսպիսով, կարելի է փաստել, որ վերջին տարիներին տնտեսությունում ձևավորված գների մակարդակի փոփոխման կայուն և կանխատեսելի միտումները էապես նպաստել են ՀՀ ԿԲ կողմից հայտարարվող ծրագրերի նկատմամբ վստահության բարձրացմանը: Արդյունքում՝ ԿԲ կողմից հայտարարվող ծրագրային սղաճը էական ազդեցություն է ունենում տնտեսությունում ձևավորվող սղաճի սպասումների վրա:

Հարց 3. ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի վարքագծի վերաբերյալ Ձեր սպասումները (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում բանկերի տեսակարար կշիռներով):

Փոխարժեք	Բանկերի քանակ, տեսակարար կշիռ	
	2003 թ. հունիսի վերջ	2003թ. դեկտեմբերի վերջ
Մինչև 570 դրամ	0(0%)	0(0%)
570-580 դրամ	2(25.5%)	0(0%)
580-590 դրամ	12(46.9%)	1(0.4%)
590-600 դրամ	8(24.7%)	13(67.7%)
600 դրամից ավելի	1(2.9%)	9(31.8%)
Միջին կշռված	**585.5 դրամ**	**598.1 դրամ**

Ինչպես 2003թ. հունիսի վերջի, այնպես էլ դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի վերաբերյալ բանկերի սպասումները համեմատաբար ցրված են: Նշենք, որ 2002թ. հունվարին

[2] Տնտեսության ճյուղերի ազդեցությունը տնտեսական աճի վրա գնահատվել է 4 բալանոց համակարգով՝ ամենամեծ ազդեցություն ունեցող ճյուղին տալով 1, ամենափոքր ազդեցություն ունեցող ճյուղին՝ 4 բալ: Հետևաբար ամենափոքր ամփոփ գնահատականով ճյուղն ունի ամենամեծ ազդեցությունը տնտեսական աճի վրա և հակառակը:

և հունիսին իրականացված հարցումների պատասխաններն, ի տարբերություն այս հարցումների, մի փոքր ավելի քիչ են ցրված: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ 2003թ. ակնկալվող մեծածավալ արտարժութային հոսքերի պայմաններում բանկերի համար փոխարժեքի կանխատեսելիությունը նվազել է: Նախորդ տարվա հունվարին իրականացված հարցումների ժամանակ բանկերը կանխատեսել էին 2002թ. վերջի դրությամբ դրամ/ԱՄՆ դոլոր փոխարժեքի 582.7 դրամ մակարդակ, որը գրեթե համապատասխանում է տարվա վերջին գրանցված 584.9 դրամ մակարդակին: Միաժամանակ, ըստ բանկերի կանխատեսումների, 2003թ. վերջի դրությամբ փոխարժեքը կարժեզրկվի մոտ 2.3%-ով: Բանկերի կողմից կանխատեսվող փոխարժեքի միտումների պայմաններում 2003թ. իրական փոխարժեքի սպասվող արժեզրկումը կլինի ավելի բարձր, քան ակնկալվում է ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության ծրագրով:

Հարց 4. 2003թ. ընթացքում Ձեր հաճախորդների կողմից արտասահմանից ներգրավվող միջոցների (վարկերի և փայամասնակցությունների տեսքով) վերաբերյալ Ձեր սպասումները:

ԱՄՆ դոլար	**Բանկերի քանակ, տեսակարար կշիռ**
Մինչև 500 հազար	8(9.2%)
500-1 մլն	4(19.6%)
1-1.5 մլն	2(10.9%)
1.5-2 մլն	3(10.4%)
2-2.5 մլն	0(0.0%)
2.5 մլն-ից ավելի	3(35.1%)
Ընդամենը (մլն ԱՄՆ դոլար)	**21.8**

Ամբողջ բանկային համակարգի հաճախորդների կողմից ակնկալվող վարկերի և փայամասնակցությունների տեսքով միջոցների ներգրավումը 2002թ. նկատմամբ գրեթե չի փոփոխվել, մինչդեռ մեկ բանկի կողմից սպասվող միջոցների ծավալն աճել է, ինչը պայմանավորված է բանկերի քանակի կրճատմամբ:

Հարց 5. 2003թ. ընթացքում Ձեր հաճախորդների միջոցով արտասահման վճարվող միջոցների (վարկերի մարման և փայամասնակցությունների տեսքով) վերաբերյալ Ձեր սպասումները:

ԱՄՆ դոլար	**Բանկերի քանակ, տեսակարար կշիռ**
Մինչև 500 հազար	12(26.8%)
500-1 մլն	4(18.9%)
1-1.5 մլն	4(39.6%)
1.5-2 մլն	0(0.0%)
2-2.5 մլն	0(0.0%)
2.5 մլն-ից ավելի	0(0.0%)
Ընդամենը (մլն ԱՄՆ դոլար)	**11.0**

Ինչպես երևում է հարցման արդյունքներից, հաճախորդների կողմից արտասահման վճարվող միջոցները արտասահմանից ներգրավվող միջոցներից մոտ երկու անգամ պակաս են ակնկալվում: Վճարվելիք միջոցների ակնկալվող առավելագույն ծավալը մեկ բանկի հաշվով չի գերազանցում 1.5 մլն ԱՄՆ դոլարը:

Այսպիսով, բանկերը կանխատեսում են արտասահմանից վարկերի և փայամասնակցությունների տեսքով զուտ ներհոսք:

Հարց 6. Դատելով Ձեր հաճախորդների գործունեության ակտիվությունից՝ ինչպիսի՞ն են արտահանման և ներմուծման ծավալների վերաբերյալ Ձեր սպասումները (պատասխանները կշռվել են բանկային համակարգի արտարժութային վարկերի ընդհանուր ծավալում բանկերի արտարժութային վարկերի տեսակարար կշիռներով):

	Բանկերի քանակ, տեսակարար կշիռ			
	2002թ. հուլիսի հարցում 2002թ. վերաբերյալ		2003թ. հունվարի հարցում 2003թ. վերաբերյալ	
	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում
Կաճի	20(93.5%)	15(62.8%)	22(91.3%)	20(86.5%)
Կմնա նույնը	2(6.5%)	2(18.8%)	0(0.0%)	0(0.0%)
Կնվազի	0(0.0%)	5(18.4%)	0(0.0%)	2(8.9%)

Ըստ աղյուսակի տվյալների՝ ի տարբերություն 2002թ., հարցման մասնակից բոլոր բանկերը կանխատեսել են արտահանման ծավալների աճ, ներմուծման ծավալների նվազում է կանխատեսել միայն երկու բանկ, որոնց արտարժութային վարկերի կշիռը բանկային համակարգի արտարժութային վարկերի ընդհանուր ծավալում կազմում է 8.9%:

Արտահանման և ներմուծման ծավալների վերաբերյալ բանկերի պատասխանների թվային գնահատականները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

	Արտահանում (%)	Ներմուծում (%)
Աճ	16.4	8.2
Նվազում	0	5.0
Միջին կշռված (+ աճ, - նվազում)	**16.4**	**6.5**
Առավելագույն/նվազագույն աճ	45/3	30/2
Առավելագույն/նվազագույն անկում	0/0	5/5
Ստանդարտ շեղում	9.4 տ.կ.	6.6 տ.կ.

Բանկերի կանխատեսումները արտահանման աճի վերաբերյալ լիովին համընկնում են 2003թ. ՀՀ ԴՎՔ ծրագրով նախատեսվող մակարդակին, մինչդեռ ՀՀ ԴՎՔ ծրագրով ներմուծման նախատեսվող աճը (11.6%) գերազանցում է բանկերի ակնկալիքները:

Հարց 7. Ձեր կարծիքով 2003 թվականին որքա՞ն կկազմի Ձեր բանկի միջոցով արտասահմանից մեր երկրի ֆիզիկական անձանց ուղարկվող փոխանցումների միջին ամսական ծավալը:

	Բանկերի քանակ
Մինչև 500 հազար ԱՄՆ դոլար	13
500-1000 հազար ԱՄՆ դոլար	2
1000-2000 հազար ԱՄՆ դոլար	3
2000-3000 հազար ԱՄՆ դոլար	1
3000 հազար ԱՄՆ դոլարից ավելի	4

Համաձայն բանկերի կանխատեսումների՝ 2003 թվականին բանկային համակարգի միջոցով արտասահմանից մեր երկրի ֆիզիկական անձանց ուղարկված դրամական փոխանցումների տարեկան ծավալը կկազմի մոտ 309 մլն ԱՄՆ դոլար՝ այն դեպքում, երբ 2002թ. ընթացքում փաստացի ստացվել է շուրջ 459 մլն ԱՄՆ դոլար:

Հարց 8. Ներկայացրեք նախորդ կետում նշված միջոցների կառուցվածքը՝ ըստ երկրների (տեսակարար կշիռներով):

Երկիր	**Տեսակարար կշիռը (%)**
ԱՄՆ	17.4
Ռուսաստան	51.3
ԱՊՀ այլ երկրներ	8.6
Եվրամիություն	13.4
Այլ երկրներ	9.3
Ընդամենը	**100%**

Համաձայն հարցման արդյունքների, 2003թ. ՀՀ ֆիզիկական անձանց ուղղվող փոխանցումների 51%-ից ավելին կստացվի Ռուսաստանից, իսկ 17.4%-ը՝ ԱՄՆ-ից: Ընդ որում, որոշ բանկերում Ռուսաստա-

նից ստացվելիք փոխանցումների տեսակարար կշիռը գերազանցում է 90%-ը: Հետաքրքիր է, որ 2002թ. փաստացի տվյալներով փոխանցումների 63.8%-ը ստացվել է Ռուսաստանից, իսկ 15.1%-ը՝ ԱՄՆ-ից:

Հարց 9. Ձեր կարծիքով 7-րդ կետում նշված միջոցների ո՞ր մասը հաճախորդները կկանխիկացնեն փոխանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում (պատասխանները կշռված են բանկերի միջոցով ուղարկված դրամական միջոցների սպասվելիք ծավալներով (հարց 7)):

	Բանկերի քանակ
Մինչև 10%	0
10-20%	0
20-30%	1
30-40%	0

	Բանկերի քանակ
40-50%	0
50-60%	2
60-80%	6
80-100%	14

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մեկ ամսվա ընթացքում կկանխիկացվի արտասահմանից ուղարկված դրամական փոխանցումների միջին հաշվով 80%-ը: Մեկ ամսվա ընթացքում Ռուսաստանից ստացվող միջոցները գրեթե լիովին կկանխիկացվեն, իսկ ԱՄՆ-ից և Եվրամիությունից ուղարկված միջոցները՝ միայն 50-60%-ով: Նշենք, որ այս հարցի հետ կապված բանկերի սպասումները գրեթե չեն փոխվել, քանզի այս հարցման արդյունքները և 2002թ. հունվարի հարցման արդյունքները համընկնում են:

Հարց 10. Ձեր սպասումները 9-12 ամիս ժամկետայնությամբ ՊԿՊ ձևավորվող տոկոսադրույքների միտումների վերաբերյալ (պատասխանները կշռված են ՊՊ-ում բանկային համակարգի ներդրումներում բանկերի ներդրումների տեսակարար կշիռներով):

	2003թ. հունիսի վերջ	2003թ. դեկտեմբերի վերջ
Կաճեն	3(9.8%)	3(30.2%)
Կմնան նույնը	12(72.2%)	8(39.3%)
Կնվազեն	8(18.0%)	12(30.5%)

Ինչպես երևում է աղյուսակից, բանկերի գերակշիռ մասը մինչև 2003թ. հունիսի վերջը ՊԿՊ տոկոսադրույքների փոփոխություն չի ակնկալում, սակայն 2003թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՊԿՊ ներդրումներում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող բանկերը կանխատեսում են տոկոսադրույքների անփոփոխ մակարդակ: Միևնույն ժամանակ, ըստ քանակի, բանկերի մեծամասնությունը կանխատեսում է տոկոսադրույքների նվազում: Նշենք նաև, որ 2002թ. հունվարի հարցումների արդյունքներով տոկոսադրույքների փոփոխությունների ուղղությունը համեմատաբար հստակ էր:

ՊԿՊ ձևավորվող տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի սպասումների թվային գնահատականները.

	2003թ. հունիսի վերջ, %	2003թ. դեկտեմբերի վերջ, %
Աճ	17.0	16.8
Անփոփոխ մակարդակ	14.6	14.7
Նվազում	13.5	13.1
Միջին կշռված	**14.7**	**14.8**
Առավելագույնը	17.0	17.0
Նվազագույնը	13.0	11.0
Ստանդարտ շեղում	1.2 տ.կ.	1.5 տ.կ.

Հարց 11. Ձեր սպասումները Ձեր բանկի կողմից 2003թ. վերջի դրությամբ ներգրավված դրամային և արտարժութային ավանդների (ցպահանջ և ժամկետային) մնացորդների վերաբերյալ:

	Դրամային (մլն դրամ)	Արտարժութային (հազար ԱՄՆ դոլար)
Ռեզիդենտներից	41207.5	147891.0
Ոչ ռեզիդենտներից	4094.0	63572.0

2003թ. վերջի դրությամբ բանկերի կողմից ռեզիդենտ ձեռնարկություններից և բնակչությունից ներգրավված դրամային ավանդների ակնկալվող ծավալը 41.2 մլրդ դրամ է, ինչը 2002թ. դեկտեմբերի մակարդակը գերազանցում է 15%-ով: Համեմատության համար նշենք, որ ՀՀ 2003թ. ԴՎՔ ծրագրով նախատեսված է դրամային ավանդների աճ շուրջ 23.4%-ով:

Բանկերն ակնկալում են ռեզիդենտ ձեռնարկություններից և բնակչությունից ներգրավվող արտարժութային ավանդների շուրջ 147.9 մլն ԱՄՆ դոլար ծավալ, ինչը գրեթե համընկնում է 2002թ. մակարդակի հետ: Այսպիսով, բանկերի կողմից սպասվում է փողի զանգվածում ընդգրկված ավանդների շուրջ 4.5%-ով աճ, մինչդեռ ՀՀ ԴՎՔ ծրագրով նախատեսվում է այդ ավանդների աճ 27%-ի չափով:

Հարց 12. Ինչպիսի՞ն են Ձեր սպասումները բանկի կողմից ներգրավվող դրամային և արտարժութային ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր ավանդներում բանկերի ավանդների տեսակարար կշռներով):

	Բանկերի քանակ			
	դրամային		արտարժութային	
	3-ամսյա	12-ամսյա	3-ամսյա	12-ամսյա
Կաճեն	0(0.0%)	0(0.0%)	0(0.0%)	0(0.0%)
Կմնան նույնը	11(41.2%)	10(41.0%)	9(42.0%)	8(42.3%)
Կնվազեն	10(55.2%)	10(54.3%)	12(44.5%)	12(41.5%)

Ինչպես 2002թ., այնպես էլ սույն թվականի հունվարի հարցումներին բանկերի հիմնական մասն ակնկալում է և՛ դրամային, և՛ արտարժութային ավանդների տոկոսադրույքների նվազում:

Բանկերի սպասումների թվային գնահատականները դրամային և արտարժութային ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ հետևյալն են.

Դրամային ավանդներ

	3-ամսյա	12-ամսյա
Աճ	--	--
Անփոփոխ մակարդակ	9.3	11.1
Նվազում	9.2	10.1
Միջին կշռված	**9.2**	**10.6**
Առավելագույնը	11.4	13.0
Նվազագույնը	3.0	3.0
Ստանդարտ շեղում	2.4 տ.կ.	2.6 տ.կ.

Արտարժութային ավանդներ

	3-ամսյա	12-ամսյա
Աճ	--	--
Անփոփոխ մակարդակ	1.9	2.4
Նվազում	6.0	6.8
Միջին կշռված	**4.0**	**4.6**
Առավելագույնը	10.0	10.0
Նվազագույնը	0.5	0.5
Ստանդարտ շեղում	2.5 տ.կ.	2.6 տ.կ.

Հարկ է նշել, որ դրամային և արտարժութային ավանդների տոկոսադրույքների անփոփոխ մակարդակ ակնկալվում է համեմատաբար ցածր տոկոսադրույք առաջարկող բանկերի կողմից: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախորդ տարվա հարցումների համեմատ նվազել է բանկերի կողմից առաջարկվող տոկոսադրույքների ցրվածությունը (2002թ. հունվարի հարցման ժամանակ դրամային

եռամսյա և տասներկուամսյա ավանդների տոկոսադրույքների ստանդարտ շեղման գործակիցները համապատասխանաբար կազմում էին 3.1 և 3.0 տոկոսային կետ, իսկ արտարժութային ավանդներինը՝ 2.8 և 3.5 տոկոսային կետ): Դա վկայում է, որ բանկերի սպասումները տնտեսությունում ձևավորվող տոկոսադրույքների վերաբերյալ ավելի են մոտեցել իրար:

Հարց 13. 2003թ. որքա՞ն կլինեն Ձեր բանկի ավանդատուների մոտավոր քանակը, ավանդների ակնկալվող չափը և ժամկետը:

Համաձայն բանկերի գնահատականների՝ 2003թ. բանկային համակարգի կողմից ավանդատուների միջին տարեկան ակնկալվող թվաքանակը շուրջ 242.5 հազար է: Միևնույն ժամանակ, մեկ ավանդի միջին չափը կկազմի շուրջ 2.5 մլն դրամ (շուրջ 4.3 հազար դոլար)՝ նախորդ տարվա հունվարին իրականացված հարցումների արդյունքներով կանխատեսվել էր 2 մլն դրամ (3.5 հազար դոլար):

Դրամային ավանդների միջին ժամկետը, բանկերի գնահատականներով, կազմելու է 5, իսկ արտարժութային ավանդներինը՝ 4.3 ամիս: Ի տարբերություն նախորդ հարցման, երբ արտարժութային ավանդների միջին ժամկետը գերազանցում էր դրամային ավանդների միջին ժամկետը (3.8 ամիս), այս տարի դրամային ավանդների միջին ժամկետի էական աճի պատճառով դրանց միջին ժամկետը գերազանցում է արտարժութային ավանդների ժամկետը:

Հարց 14. Ձեր սպասումները Ձեր բանկի կողմից տարվա վերջի դրությամբ ռեզիդենտներին տրված վարկերի ծավալների վերաբերյալ:

	Ծավալ
Դրամային (մլն դրամ)	25191.3
Արտարժութային (մլն ԱՄՆ դոլար)	128.4

Համաձայն բանկերի կանխատեսումների՝ 2003թ. վերջի դրությամբ տնտեսությանը տրված դրամային վարկերի ընդհանուր ծավալը կկազմի մոտ 25 մլրդ դրամ, ինչը կգերազանցի նախորդ տարվա մակարդակը մոտ 25.8%-ով:

Արտարժութային վարկերի սպասվող ծավալը մոտ 128 մլն ԱՄՆ դոլար է, ինչը 2002թ. փաստացի ծավալը կգերազանցի մոտ 9%-ով: Տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը նախորդ տարվա փաստացի ծավալը կգերազանցի մոտ 15%-ով:

Հարց 15. Որքա՞ն են Ձեր կողմից տրամադրվող դրամային և արտարժութային վարկերի՝ տարվա վերջի դրությամբ ակնկալվող տոկոսադրույքները (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր վարկային ներդրումներում բանկերի ունեցած տեսակարար կշիռներով):

	Դրամային		
	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Կաճեն	0(0.0%)	0(0.0%)	0(0.0%)
Կմնան նույնը	9(55.5%)	7(47.4%)	6(39.8%)
Կնվազեն	10(42.2%)	11(42.4%)	11(42.4%)
	Արտարժութային		
	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Կաճեն	0(0.0%)	0(0.0%)	0(0.0%)
Կմնան նույնը	12(62.2%)	9(44.1%)	9(51.5%)
Կնվազեն	9(33.2%)	11(46.8%)	10(37.3%)

Բանկերի պատասխանների թվային գնահատականները դրամային և արտարժութային վարկերի տոկոսադրույքների վերաբերյալ.

Դրամային վարկեր

	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	--	--	--
Անփոփոխ մակարդակ	27.5	26.7	26.5
Նվազում	19.8	19.6	20.0
Միջին կշռված	**24.2**	**23.4**	**23.1**
Առավելագույնը	30.0	30.0	30.0
Նվազագույնը	17.5	16.9	17.5
Ստանդարտ շեղում	3.8 տ.կ.	3.2 տ.կ.	3.5 տ.կ.

Արտարժութային վարկեր

	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	--	--	--
Անփոփոխ մակարդակ	21.3	18.8	18.5
Նվազում	19.8	18.4	17.2
Միջին կշռված	**20.8**	**18.6**	**18.0**
Առավելագույնը	28.0	24.0	24.0
Նվազագույնը	10.0	11.0	12.0
Ստանդարտ շեղում	4.1 տ.կ.	3.0 տ.կ.	2.6 տ.կ.

Հատկանշական է, որ 2002թ. հունվարի հարցումների համեմատ, 2003թ. հարցումների արդյունքներով բանկերն ակնկալում են տոկոսադրույքների համեմատաբար կայուն վարքագիծ: Միևնույն ժամանակ, բանկերի պատասխանների ստանդարտ շեղումները էականորեն նվազել են, ինչը վկայում է տոկոսադրույքների կանխատեսվող մակարդակների ընդհանուր միտումների ձևավորման մասին: Ավելացնենք նաև, որ չնայած տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի նվազմանը, վարկերի և ավանդների տոկոսադրույքների միջև մարժան պահպանվում է բավականին բարձր մակարդակի վրա:

Հարց 16. 2003թ. որքա՞ն կլինեն Ձեր վարկառուների մոտավոր քանակը, վարկերի ակնկալվող չափը և ժամկետը (պատասխանները կշռված են համապատասխանաբար դրամային և արտարժութային վարկերի սպասվելիք ծավալներով):

Համաձայն բանկերի գնահատականների՝ 2003թ. բանկային համակարգի կողմից ակնկալվող վարկառուների միջին տարեկան թվաքանակը կազմում է շուրջ 60.6 հազար: Միևնույն ժամանակ, մեկ վարկի միջին չափը կկազմի շուրջ 23 մլն դրամ (շուրջ 39 հազար դոլար)՝ նախորդ տարվա հունվարին իրականացված հարցումների համաձայն՝ 5.8 մլն դրամ (10.3 հազար դոլար):

Դրամային վարկերի միջին ժամկետը կազմում է 6.2 ամիս, իսկ արտարժութային վարկերինը՝ 9.6 ամիս: Նշենք, որ նախորդ տարվա հունվարի հարցումների համեմատ նվազել են դրամային վարկերի միջին ժամկետայնությունը և փոքր-ինչ աճել արտարժութային վարկերինը:

Հարց 17. Ըստ Ձեր գնահատականների՝ 2003թ. տնտեսության ո՞ր ոլորտներին են ուղղվելու Ձեր վարկային ներդրումները:

Վարկավորման ոլորտը	**Բանկերի քանակ**	**Վարկավորման աճը, %**
Արդյունաբերություն, այդ թվում	18	39.9
էներգետիկա	4	-2.2
լեռնահանքային	6	9.1
վերամշակող	13	33.0
Գյուղատնտեսություն	8	26.0
Շինարարություն	12	22.2
Առևտուր	18	22.5
Տրանսպորտ և կապ	7	11.1
Այլ	9	39.2

«Այլ» ճյուղերի վարկավորում 2003թ. ընթացքում սպասվում է 9 բանկի կողմից՝ 39.2%-ի չափով, որը ներառում է սպառողական վարկերի տրամադրում, բնակչության և ծառայությունների ոլորտի վարկավորում:

Հարց 18. Որո՞նք են 2002թ. ընթացքում Ձեր հաճախորդներին տրամադրված վարկերի օգտագործման հիմնական ուղղությունները:

Օգտագործման ուղղությունները	Բանկերի քանակը
Շրջանառու միջոցների համալրում	20
Հիմնական միջոցների ձեռքբերում	11
Սպառողական ծախսերի կատարում	9
Նոր բիզնեսի նախաձեռնում	3
Այլ նպատակներ	0

Ինչպես երևում է աղյուսակից, բանկերի մեծ մասում 2002թ. ընթացքում հաճախորդներին տրամադրված վարկերի օգտագործման հիմնական ուղղությունն է շրջանառու միջոցների համալրումը: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 2001թ. համեմատ 2002թ. տրամադրված վարկային միջոցներն ավելի շատ օգտագործվել են սպառողական ծախսերի համար, քան նոր բիզնեսի նախաձեռնման:

Հարց 19. Ըստ Ձեր գնահատականների՝ 2003թ. ընթացքում որքանո՞վ կաճի Ձեր բանկի կանոնադրական կապիտալը ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հաշվին:

Կանոնադրական կապիտալ (մլրդ դրամ)	8.4
Ռեզիդենտների հաշվին	3.5
Ոչ ռեզիդենտների հաշվին	4.9

Համաձայն բանկերի սպասումների՝ 2002թ. դեկտեմբերի համեմատ բանկերի կանոնադրական կապիտալը կաճի 8.4 մլրդ դրամով: Նշենք, որ 2003թ. ընթացքում կանոնադրական կապիտալի աճ ակնկալվում է միայն 12 բանկի կողմից, այն դեպքում, երբ 2002թ. հունվարի հարցման ժամանակ կապիտալի աճ էր սպասվում 15 բանկի կողմից: Ընդ որում, աճ սպասող բանկերից 4-ը նախատեսում են մեծացնել իրենց կանոնադրական կապիտալը միայն ռեզիդենտների հաշվին, ևս 4-ը՝ միայն ոչ ռեզիդենտների, իսկ մնացած 4-ը՝ և՛ ռեզիդենտների, և՛ ոչ ռեզիդենտների հաշվին:

Հարց 20. 2003թ. համար դասակարգեք Ձեր գործառնություններն ըստ առաջնայնության (հիմնվելով ընդհանուր շահույթում նշված գործառնություններից ստացված եկամտի ունեցած տեսակարար կշռի վրա):

	Բանկերի գործառնություններն ըստ առաջնայնության						
	1	2	3	4	5	6	7
	Բանկերի քանակը						
Տնտեսության վարկավորում	18	1	1	1	0	0	0
Արտարժույթի առք ու վաճառք	0	8	4	8	2	0	0
Արժեթղթերի առք ու վաճառք	2	5	7	2	5	0	0
Փոխանցումներ ՀՀ և հակառակը	2	5	7	4	4	0	0
Պլաստիկ քարտերի սպասարկում	0	2	2	5	5	3	0
Լիզինգային վարկեր	0	0	0	1	1	6	2
Այլ	0	1	1	1	0	0	1

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, բանկերի մեծ մասի համար գործունեության առաջնային ուղղությունն է տնտեսության վարկավորումը: «Այլ» տողում բանկերը հիմնականում նշել են բնակչության վարկավորումը, բնակչության վճարահաշվարկային սպասարկումը և ռեպո գործարքները:

Աղյուսակի տվյալներն ամփոփելու նպատակով կիրառվել է 7 բալային համակարգ՝ առաջին տեղում դասակարգված գործառնությանը տալով 7, իսկ վերջին տեղում դասակարգված գործառնությանը՝ 1 բալ: Այնուհետև յուրաքանչյուր գործառնության բալային գնահատականները կշռվել են բանկերի քանակով: Արդյունքում՝ բալային գնահատականներով արտահայտված գործառնությունների դասակարգումն ստացել է հետևյալ տեսքը (ամենաբարձր գնահատական ունեցող գործառնությունը զբաղեցնում է առաջին տեղը, ամենացածրը՝ վերջին).

Գործառնությունները	Միջին կշռված բալը
Տնտեսության վարկավորում	6.71
Փոխանցումներ ՀՀ և հակառակ ուղղությամբ	4.86
Արժեթղթերի առք ու վաճառք	4.86
Արտարժույթի առք ու վաճառք	4.82
Այլ	4.00
Պլաստիկ քարտերի սպասարկում	3.71
Լիզինգային վարկեր	2.10

Նշենք, որ 2002թ. հունվարին իրականացված հարցման համեմատ բանկերի համար գործառնությունների առաջնայնությունն էականորեն չի փոփոխվել, միայն տեղերով փոխվել են «Արտարժույթի առք ու վաճառք» և «Այլ» գործառնությունները:

Հարց 21. Ձեր սպասումները Ձեր բանկի կողմից 2003թ. վերջի դրությամբ ՀՀ-ից դուրս տեղաբաշխված միջոցների մնացորդների վերաբերյալ:

Միջոցներ	Ծավալ (հազար ԱՄՆ դոլար)
Վարկեր	4550
Ավանդներ	8257
Թղթակցային հաշիվներ	56591
Արժեթղթեր	1312
Այլ	610

Համաձայն հարցման արդյունքների՝ 2003թ. վերջի դրությամբ բանկերն ակնկալում են ունենալ մոտ 71.3 մլն ԱՄՆ դոլարի տեղաբաշխումներ արտասահմանում:

Հարց 22. Նշեք 2002թ. ընթացքում ճյուղերում զբաղված Ձեր հաճախորդների ֆինանսական վիճակի փոփոխության ուղղությունը նախորդ տարվա համեմատ:

Ճյուղեր	Բարելավվել է	Վատացել է	Չի փոփոխվել
	բանկերի քանակ		
Արդյունաբերություն, այդ թվում՝			
էներգետիկա	6	1	7
հանքագործական	4	0	7
մշակող	8	0	4
Գյուղատնտեսություն	6	0	8
Շինարարություն	12	1	6
Առևտուր	12	2	5
Տրանսպորտ և կապ	5	1	8
Այլ	2	0	7

Ի տարբերություն նախորդ տարվա հունվարին իրականացված հարցման արդյունքների, երբ բանկերն արձանագրել էին գրեթե բոլոր ճյուղերում զբաղված իրենց հաճախորդների տնտեսական վիճակի վատացում, այս տարի այդ ցուցանիշն էականորեն նվազել է:

Ըստ ճյուղերի բանկերի հաճախորդների ֆինանսական վիճակի մասին պատկերացում կազմելու նպատակով կիրառվել է ամփոփման հետևյալ մեթոդիկան: Ֆինանսական վիճակի փոփոխության ուղղությունները՝ «բարելավվել է», «վատացել է», «չի փոփոխվել», գնահատվել են համապատասխանաբար 1, -1 և 0 բալերով: Այնուհետև բալերը կշռվել են հարցերին պատասխանած բանկերի քանակով: Արդյունքում՝ ստացվել են հետևյալ ընդհանրացված ցուցանիշները.

Ճյուղեր	Միջին կշռված բալը
Արդյունաբերություն, այդ թվում	0.8
էներգետիկա	0.4
հանքագործական	0.4
մշակող	0.7
Շինարարություն	0.6
Առևտուր	0.5
Գյուղատնտեսություն	0.4
Տրանսպորտ և կապ	0.3
Այլ	0.2

Հարցումներին մասնակցած բանկերի ցուցակը

Բանկեր
1. «Հայագրոբանկ»
2. «Անելիք բանկ»
3. «Արդշինբանկ»
4. «Հունաստանի առևտրային բանկ»
5. «Հայէկոնոմբանկ»
6. «Գլաձոր բանկ»
7. «էյչ-էս-Բի-ՍԻ բանկ Հայաստան»
8. «Հայներարտբանկ»
9. «Ինեկո բանկ»
10. «Միջազգային ինվեստիցիոն բանկ»
11. «Հայինվեստբանկ»
12. «Կոնվերս բանկ»
13. «Մելլաթ բանկ»
14. «Արցախ բանկ»
15. «Պրոմեթեյ բանկ»
16. «Առէկսիմբանկ»
17. «Միջազգային առևտրային բանկ»
18. «Զարգացման հայկական բանկ»
19. «Յունիբանկ»
20. «Հայխնայբանկ»
21. «Հայգյուղփոխբանկ»
Ժամանակավոր ադմինիստրացիայի խնամակալությամբ գործող բանկեր
22. «Հայկապ բանկ»
23. «Կրեդիտ-Երևան բանկ»

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2003-05 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (ԸՍՏ ԲԱՆԿԵՐԻ 2003-05 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ)

Արմենուհի Մկրտչյան, Միեր Եդիգարյան
(Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչություն)

Ի կատարումն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հանձնարարականի՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացրել 2003-2005 թթ. հեռանկարային զարգացման ծրագրերը (ՀԶԾ), որտեղ ներկայացված են իրենց կողմից մշակված ռազմավարություններն առաջիկա երկու տարիների համար, ինչպես նաև կատարված են հիմնական ֆինանսական ցուցանիշների կանխատեսումները կիսամյակային կտրվածքով: Ծրագիր չեն ներկայացրել սնանկացման գործընթացում և հատուկ վերահսկողական դաշտում գտնվող բանկերը, ուստի ամփոփումը կատարվել է ծրագիր ներկայացրած 19 բանկի տվյալներով:

ԲԱՆԿԵՐԻ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ բանկերի սպասումները պայմանավորված են վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճով, սղաճի ցածր մակարդակով, դրամի կայունությամբ և ունեն լավատեսական բնույթ (ի տարբերություն նախորդ ՀԶԾ-ի):

Բանկերի մեծ մասն առաջիկա երկու տարիների համար ակնկալում է ՀՆԱ միջինը 7-10% աճ: Ինչպես 2001 թ. վերջին, 2002 թ. վերջին ևս բանկերը պլանավորվող ժամանակաշրջանի համար կանխատեսում են սղաճի և փոխարժեքի արժեզրկման ցածր մակարդակ՝ սղաճի վերաբերյալ բանկերի կանխատեսումները տատանվում են 3%-ի սահմանում, իսկ 2004 թ. վերջին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար հաշվարկային փոխարժեքը սպասվում է 612.8 դրամ:

Կանխատեսվում է ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքների որոշակի նվազում, ընդ որում, պետական պարտատոմսերի, դրամային և արտարժութային ավանդների գծով՝ տոկոսադրույքների նվազում՝ տարեկան մոտ 1 տոկոսային կետով, մինչդեռ ակնկալվում է, որ տեղաբաշխված վարկերի տոկոսադրույքները կնվազեն ավելի արագ տեմպերով՝ տարեկան մոտ 2 տոկոսային կետով:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ բանկերն ակնկալում են արտահանման ծավալների բավական մեծ աճ. 2004 թ. համար զուտ արտահանումը կանխատեսվում է մոտ –281 մլն ԱՄՆ դոլար (նախորդ ՀԶԾ-ում 2003-2004 թթ. համար՝ մոտ –490 մլն ԱՄՆ դոլար):

Աղյուսակ 1. Կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշների միջինացված արժեքները

Ցուցանիշ	2003-04 թթ. միջին*	1.01.03	1.01.04	1.01.05
1. ՀՆԱ իրական աճ (%)	6.5	9.2	7.6	7.8
2. Սղաճ (%, դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)	3	2.6	3.0	3.1
3. Դրամական զանգվածի աճ (%, դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)	17.3	14.1	15.5	14.1
4. Ներմուծում (ԱՄՆ դոլար)	885	824.5	846.4	870.9
5. Արտահանում (ԱՄՆ դոլար)	397	456.2	522.6	589.5
6. Բյուջեի պակասուրդ (% ՀՆԱ-ից)	4.1	4.6	4.3	3.8
7. Փոխարժեքը (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար, ժամանակաշրջանի վերջ)	589.1	585.6	599.3	612.8
8. ՊԿՊ-ների եկամտաբերություն (%)	16.4	14.1	13.2	12.4
9. Ավանդների միջին տոկոսադրույք				
դրամային	-	10.8	9.7	8.7
արտարժութային	-	8.0	7.1	6.2
10. Վարկերի միջին տոկոսադրույք				
դրամային	-	24.0	21.3	19.7
արտարժութային	-	19.9	17.8	16.2

** Նախորդ ՀԶԾ-ում 2004-05 թթ. համար կատարված կանխատեսումների միջինը:*

ԲԱՆԿԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԾ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Արտաքին միջավայրում հնարավոր փոփոխությունների կանխատեսման առումով բանկերի մոտ նկատվել են բավականին ընդհանրություններ: Արտաքին միջավայրում կանխատեսվող հիմնական երևույթները, որպես բանկերի 2003-05 թթ. համար հեռանկարային զարգացման հնարավորություն կամ սպառնալիք, ներկայացված են աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2. Բանկերի կարևորած արտաքին գործոնները

Արտաքին միջավայր	Հնարավորությունները	Սպառնալիքները
Միջազգային շուկաներ	Տոկոսադրույքների նվազում (թույլ կտա ավելի էժան միջոցներ ներգավել միջազգային շուկաներից) ԱՄՆ դոլարի համեմատությամբ եվրոյի դիրքի «ամրապնդում», որի շնորհիվ բանկերի կողմից եվրոյով ծառայությունների ընդլայնում Տնտեսական էական աճ ԱՊՀ երկրներում, որի արդյունքում այդ երկրներից տրանսֆերտների աճ, կապիտալ ներդրումների ներհոսք ՀՀ-ի և ՌԴի միջև տնտեսական կապերի աշխուժացում, որի արդյունքում խոշոր հաճախորդների գործունեության ակտիվացում (հաշիվների մնացորդների շրջանառության աճ, վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկի ավելացում)	Տոկոսադրույքների նվազում (այն բանկերի համար, որոնք արտասահմանում ունեն զգալի տեղաբաշխված միջոցներ)
ՀՀ տնտեսություն	ՀՀ մակրոտնտեսական կայունություն, որը կհանգեցնի ներգրավված միջոցների միջին ժամկետայնության որոշակի աճի Տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանում հատկապես՝ շինանյութերի, սննդամթերքի, քիմիական արդյունաբերություններում, շինարարության, առևտրի և արտահանող ճյուղերում	Արտարժութային փոխարժեքների տատանում
ՀՀ ֆինանսաբանկային հատված	Ավանդների երաշխավորման համակարգի ներդրում Վարկային ռեգիստրի ներդրում Պլաստիկ քարտերի պահանջարկի աճ, «ԱրՔա» համակարգի ընդլայնում և միացում EUROPAY համակարգին Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի ներդրում Ապահովագրական ծառայությունների շուկայի աշխուժացում Միջազգային ծրագրերով ներգրավվող միջոցների ծավալների ընդլայնում	Տոկոսադրույքների և տոկոսային մարժայի նվազում ՊՊ-ների եկամտաբերության նվազում երկարաժամկետ ռեսուրսների սակավություն Սուր մրցակցություն հատկապես վարկային կազմակերպությունների և գյուղատնտեսական վարկային ակումբների ստեղծումից հետո Կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացման ցածր մակարդակի պահպանում Կապիտալի աճի պահանջի արդյունքում գործող բանկերի հարկադրված խոշորացում միաձուլումների և միացումների միջոցով
Օրենսդրական դաշտ	ՀՀ վճարահաշվարկային ոլորտի իրավական դաշտի հստակեցում Գրավի իրացման գործընթացը հեշտացնող և հստակեցնող օրենսդրական փոփոխություններ Հանրային աճուրդների կազմակերպման և անցկացման հետ կապված օրենսդրական դաշտի կատարելագործում՝ ուղղված վարկատուների իրավունքների բավարարմանը	Լիզինգի, ֆակտորինգի նորմատիվային դաշտի ոչ հստակությունը

Ռիսկեր

- Բանկերի կողմից եվրոյով գործարքների ծավալների նախատեսվող ընդլայնումն արտարժութային ռիսկի ոչ պատշաճ կառավարման դեպքում եվրոյի ամրապնդման նկատմամբ սպասումների չիրականացման պայմաններում կարող է հանգեցնել զգալի կորուստների:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2003-05 թթ. համար կանխատեսված նպատակները և խնդիրները համընկնում են, ընդ որում, որոշ բանկերի նպատակները մյուսների համար խնդիրներ են, ուստի ստորև թվարկված են բանկերի կողմից կարևորված խնդիրները և նպատակները.

- կապիտալացման մակարդակի բարձրացում,
- բանկի գործունեության կայունության և արդյունավետության ապահովում,
- շահութաբերության բարձր մակարդակի ապահովում,
- ուժեղացող մրցակցության միջավայրում նոր բանկային ծառայությունների մատուցում, ավանդական շուկաների առանձին հատվածներում դիրքերի ամրապնդում՝ հատկապես շեշտադրելով.
  - վարկավորման ընդլայնումը (շինանյութերի, սննդամթերքի, քիմիական արդյունաբերությունում, շինարարության, առևտրի և արտահանող ճյուղերում)
- սպառողական վարկերի (այդ թվում՝ անշարժ գույքի ձեռքբերման) տրամադրում և/կամ ընդլայնում,
- վճարահաշվարկային գործառնությունների ոլորտը, այդ թվում՝ պլաստիկ քարտերի, միջազգային փոխանցումների վճարային համակարգերի ներդրում և/կամ ընդլայնում,
- «Ինտերնետ-բանկ» գործառնությունների ներդրում,
- «Private banking»-ի ներդրում[1],
- առևտրի ֆինանսավորման գործիքներ,
- բանկի գործունեության ծավալների առաջանցիկ աճ և մասնաբաժնի ընդլայնում,
- բանկի հեղինակության բարձրացում:

Ռիսկեր

- Շնչին թվով բանկեր են խնդիրներում կամ խնդիրների լուծման միջոցառումներում և նպատակներում կարևորել ռիսկերի կառավարման, ներքին հսկողության նոր համակարգերի ներդրումը և/կամ հին համակարգերի կատարելագործումը:
- Բանկերն իրենց հեռանկարային զարգացումը դիտում են միայն լավատեսական սցենարով: Ոչ մի բանկ չի նախատեսել իր կանխատեսումների, սպասումների չարդարացման դեպքում նախատեսվող միջոցառումներ:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2003-05 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանկերի ընդհանուր ռազմավարությունը

Սահմանված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու ընդհանուր ռազմավարության տեսանկյունից բանկերը դասակարգվում են հետևյալ կերպ.

Աղյուսակ 3. Բանկերի քանակն ըստ գործունեության ռազմավարության


Ընդհանուր ռազմավարություն	Բանկերի քանակը
Մասնաբաժնի ընդլայնում	5
Նոր հատվածի (ների) գրավում	3
«Աշխարհագրության» ընդլայնում	2
Առաջատար դիրք մեկ հատվածում	7
Կայուն աճ, դիրքերի ամրապնդում	3
Ռազմավարության բացակայություն	2

Կապիտալացման մակարդակի բարձրացում

Համաձայն բանկերի կանխատեսումների՝ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում կավելանա 28.6%-ով (11.7 մլրդ դրամ) և 01.01.2004 թ. դրությամբ կկազմի 52.9 մլրդ դրամ (հավելված 1): Ընդ որում, ընդհանուր կապիտալի աճի ավելի քան կեսը (52%) նախատեսվում է ապահովել կանոնադրական կապիտալի համալրման հաշվին, որի մեծությունը 01.01.2004 թ. դրությամբ կկազմի

[1] *Բանկերում նկատվում է հաճախորդների հանդեպ անհատական մոտեցման սկզբունքը (Private banking) ներդնելու միտում: Սակայն պետք է նշել, որ տարբեր բանկեր այդ հասկացությունը տարբեր կերպ են ընկալում: Որոշ բանկեր դա դիտում են որպես նոր տիպի ծառայություն, մյուսները՝ հաճախորդների հետ հարաբերությունների սկզբունք:*

38.1 մլրդ դրամ (2003 թ. ընթացքում կանոնադրական կապիտալի աճ նախատեսում են 11 բանկեր): Կանոնադրական կապիտալի ծրագրված աճ նախատեսվում է ապահովել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բաժնետերերի ներդրումների հաշվին (այդ թվում՝ նոր բաժնետերեր ներգրավելով): Ոչ ռեզիդենտների ներդրումները տարվա ընթացքում կկազմեն 3.5 մրդ դրամ (ոչ ռեզիդենտների ներդրումների աճ կանոնադրական կապիտալում նախատեսել է 7 բանկ): Ծրագրերի իրականացման դեպքում ոչ ռեզիդենտների մասնաբաժինը կանոնադրական կապիտալում կկազմի 53.6%: Ընդհանուր կապիտալի կանխատեսվող աճը չբաշխված շահույթի հաշվին կազմում է 4.9 մլրդ դրամ:



Ինչպես նախորդ ծրագրերում, գրեթե բոլոր բանկերը կանխատեսել են ապահովել ընդհանուր կապիտալի աճի ավելի արագ տեմպեր ընդհանուր համակարգի աճի տեմպի համեմատ, որի արդյունքում ակնկալվում է, որ բանկային համակարգի ընդհանուր կապիտալի հարաբերությունը ընդհանուր ակտիվներին կկազմի 20.4%՝ 01.01.03 թ. համեմատ աճելով 2.2 տոկոսային կետով:

Բանկերը ընդհանուր կապիտալի կանխատեսված ցուցանիշներին հասնելու դեպքում 01.01.2005 թ. դրությամբ կունենան ընդհանուր կապիտալի հետևյալ մեծությունները՝

6 բանկ – 6 մլն ԱՄՆ դոլարից ավելի,
6 բանկ – 5-6 մլն ԱՄՆ դոլար,
5 բանկ – 4-5 մլն ԱՄՆ դոլար,
2 բանկ – մինչև 4 մլն ԱՄՆ դոլար

(հաշվարկը կատարվել է բանկերի կողմից 01.01.2005 թ. համար կանխատեսված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի հիման վրա):

Կապիտալի համարժեքության նորմատիվների կանխատեսված ցուցանիշները 01.01.2004 թ. և 01.01.2005 թ. դրությամբ գերազանցում են նվազագույն սահմանաչափերը 3-5 անգամ (01.01.2003 թ. դրությամբ կկազմեն, համապատասխանաբար, 37.7% և 36.1%, 01.01.2005 թ. դրությամբ՝ 38.2% և 36.7%):

Ռիսկեր

- Կապիտալի հետագա աճը միայն շահույթի հաշվին ապահովելու որոշ բանկերի կանխատեսումները թույլ են տալիս ենթադրել, որ շահույթի բավարար մակարդակ չապահովելու դեպքում երկու բանկ լուրջ հիմնախնդիրներ կունենան՝ կապված ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի ապահովման հետ:

Միջոցների ներգրավում


Համաձայն բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի՝ 2003 թ. ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները կավելանան 11.8%-ով (21.8 մլրդ դրամ) և 01.01.2004 թ. կկազմեն 206.9 մլրդ դրամ (01.01.2005 թ. դրությամբ՝ 243.4 մլրդ դրամ, հավելված 1):

Ակնկալելով ՀՀ և ԱՊՀ երկրների տնտեսության և, հետևաբար, բնակչության եկամուտների հետագա աճ՝ գրեթե բոլոր բանկերը կանխատեսում են ֆիզիկական անձանց ավանդների աճի բավական արագ տեմպեր՝ 7-198%: Սակայն պայմանավորված երկու բանկի կողմից քաղաքականության նախա-

տեսվող փոփոխությամբ՝ տարվա ընթացքում կտրուկ նվազեցնել ֆիզիկական անձանց ավանդների ծավալները (4.1 մլրդ դրամով), բանկային համակարգի ավանդները կաճեն ընդամենը 4.3%-ով և 01.01.2004 թ. դրությամբ կկազմեն 41.5 մլրդ դրամ (ենթադրվում է, որ վերոնշյալ երկու բանկի ավանդների որոշ մասը կարող է կրկին ուղղվել բանկային համակարգին, որի արդյունքում ֆիզիկական անձանց ավանդները կկազմեն ծրագրվածից մեծ գումար):

Տարվա ընթացքում ցպահանջ պարտավորությունների կանխատեսվող աճը կազմում է 12.9% (01.01.2004 թ. դրությամբ՝ 90.3 մլրդ դրամ): Ընդ որում, հատկանշական է, որ բանկերը կանխատեսում են ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ միջոցների առաջանցիկ աճի տեմպեր (21.5%) մյուս տեսակի ներգրավված միջոցների համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ գրեթե բոլոր բանկերը նախատեսում են ընդլայնել պլաստիկ քարտերի թողարկման ծավալները:

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների փաստացի և կանխատեսվող կառուցվածքը



1. Բանկերի թղթակցային հաշիվներ, 2. Ֆիզիկ. անձանց ցպահանջ պարտ-ներ, 3. Իրավաբ. անձանց ցպահանջ պարտ-ներ, 4. Բանկերից ներգրաված դեպոզիտներ և վարկեր, 5. Ֆիզիկական անձանց ավանդներ 6. Իրավաբանական անձանց դեպոզիտներ, 7. Այլ պարտավորություններ

Իրավաբանական անձանցից ներգրաված միջոցների կանխատեսվող 10.3% աճը (01.01.2004 թ. դրությամբ՝ 40.7 մլրդ դրամ) հիմնականում նախատեսվում է ապահովել միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների հաշվին (5 մլրդ դրամ), ինչը պայմանավորված է միջազգային տոկոսադրույքների նվազմամբ, ինչպես նաև միջազգային ծրագրերով ֆինանսական միջոցների ծավալների ընդլայնմամբ:


Միջազգային տոկոսադրույքների նվազմամբ է պայմանավորված նաև այն, որ բանկերը կանխատեսում են ավելի քան կրկնապատկել ոչ ռեզիդենտ բանկերից ներգրաված միջոցների[2] ծավալները (01.01.2004 թ. դրությամբ՝ 14.9 մլրդ դրամ)՝ ուղղորդելով այդ գործընթացը ռեզիդենտ բանկերից ներգրաված միջոցների 4.5 մլրդ դրամով նվազմամբ: Արդյունքում, 01.01.2004 թ. դրությամբ բանկերից ներգրաված միջոցների ծավալները կկազմեն 18.7 մլրդ դրամ՝ տարվա ընթացքում ավելանալով 26.2%-ով: Բանկային համակարգում ոչ ռեզիդենտ բանկերից ներգրաված միջոցների ծավալների նման աճը հիմնականում բացատրվում է արտասահմանյան կապիտալով հարուստ և արտաքին շուկաներում ակտիվ մի քանի բանկերի կանխատեսումների հաշվին:

Ընդհանուր առմամբ, բանկերը շեշտադրում են ոչ ռեզիդենտներից միջոցներ ներգրավելու քաղաքականությունը (ոչ ռեզիդենտներից ներգրաված միջոցների կանխատեսվող աճը կազմում է 40.1%, 19.3 մլրդ դրամ):

Ներգրավված միջոցների կանխատեսված ժամկետային կառուցվածքը ցույց է տալիս, որ բանկերում նվազում է երկարաժամկետ (5 տարուց ավելի) միջոցների տեսակարար կշիռը՝ հիմնական շեշտը դրվելով միջինժամկետ (1-5 տարի) միջոցների վրա:

Ներգրավված միջոցների կանխատեսված կառուցվածքը, ըստ սուբյեկտների, առաջիկա երկու տարվա համար գրեթե համընկնում է 01.01.2003 թ. դրությամբ արձանագրված կառուցվածքին: Սակայն, եթե նախկինում նշված երկու բանկի ֆիզիկական անձանց ավանդները կրկին մուտք գործեն բանկային համակարգ, ապա վերջիններիս տեսակարար կշիռը ժամկետային միջոցներում կավելանա մոտ 4 տոկոսային կետով:

[2] *Չեն ներառվում թղթակցային հաշիվների մնացորդները:*



Աղյուսակ 4. Ներգրավված միջոցների կանխատեսված ժամկետային կառուցվածքը (%)

	01.01.2003 (փաստացի)		01.01.2004		01.01.2005	
	Ցպահ.	Ժամկետ.	Ցպահ.	Ժամկետ.	Ցպահ.	Ժամկետ.
Ֆիզիկական անձանց ավանդներ	35.0	40.0	37.7	38.9	37.3	36.9
Իրավաբանական անձանց դեպոզիտներ	59.5	40.7	56.1	41.1	57.5	40.9
Բանկերից ներգրավված միջոցներ	4.8	18.3	3.8	17.5	3.6	19.9
Այլ	0.7	1.0	2.3	2.5	1.6	2.2
Ընդամենը	100	100	100	100	100	100

Ռիսկեր

- Ակնկալելով տոկոսադրույքների հետագա անկում՝ բանկերը ձգտում են ավելացնել ներգրավված միջոցներն իրենց հեղինակության և նոր ծառայություններ առաջարկելու շնորհիվ, ինչը բավական դժվար կարող է լինել (հիմնականում փոքր բանկերի համար):
- Մեծանում է բանկերի կախվածությունն արտաքին գործոններից (ԱՊՀ երկրների տնտեսական աճ, ՀՀ արտաքին առևտրի խորացում և այլն):
- Գրեթե բոլոր բանկերը կանխատեսում են մեծածավալ միջոցներ ներգրավել միջազգային ծրագրերից, որոնց ծավալները, սակայն, սահմանափակ են:

Միջոցների տեղաբաշխում

Ընդհանուր ակտիվների ծրագրված աճը 2003 թ. ընթացքում 14.9% է (33.6 մլրդ դրամ)՝ կազմելով 01.01.2004 թ.՝ 259.8 մլրդ դրամ, 01.01.2005 թ.՝ 309.2 մլրդ դրամ (հավելված 1): Ինչպես նախորդ ծրագրերում, բանկերը ձգտել են օպտիմիզացնել ակտիվների կառուցվածքը՝ նվազեցնելով ոչ եկամտաբեր (ցածր եկամտաբեր) և ռիսկային ակտիվների ծավալներն ի հաշիվ ցածր ռիսկային եկամտաբեր ակտիվների:

Մասնավորապես, բանկերը նախատեսում են նվազեցնել .


- դրամարկղում կանխիկ դրամական միջոցները՝ 18.3%-ով (01.01.2004 թ.՝ 10.6 մլրդ դրամ),
- թղթակցային հաշիվների և պարտադիր պահուստների մնացորդները ՀՀ ԿԲ-ում՝ 5.3%-ով (01.01.2004 թ.՝ 16.8 մլրդ դրամ),
- ֆակտորինգային գործառնությունները՝ 17.2%-ով (01.01.2004 թ.՝ 1.1 մլրդ դրամ):

Պայմանավորված բանկերի՝ մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների ծավալների ընդլայնման ձգտումով ՝ թղթակցային հաշիվների մնացորդների աճը կանխատեսվում է 21.8% (01.01.2004 թ. դրությամբ՝ 49.3 մլրդ դրամ): Ընդ որում, հատկանշական է, որ նշված աճն ապահովվելու է միայն ոչ ռեզիդենտ բանկերի հաշվին (9.4 մլրդ դրամ), մինչդեռ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների մնացորդները ըստ կանխատեսումների կնվազեն 0.6 մլրդ դրամով:

Ի տարբերություն թղթակցային հաշիվների՝ բանկերին տրված վարկերի և դեպոզիտների կանխատեսվող աճում առաջանցիկ աճի տեմպ կունենան ռեզիդենտ բանկերին տրված վարկերը, որոնց ծավալները նախատեսվում է կրկնապատկել (01.01.2004 թ. դրությամբ՝ 2.3 մլրդ դրամ): Վերջինս պայմանավորված է միջբանկային շուկայում ակտիվ մի քանի բանկերով (հիմնականում արտասահմանյան կապիտալով, որոնք միջոցներ են ներգրավում նաև միջազգային շուկաներից և վարում ցածր ռիսկային քաղաքականություն):

Ռեզիդենտ բանկերից միջոցներ ներգրավելու կանխատեսվող պահանջարկը գերազանցում է առաջարկը 1.5 մլրդ դրամով, ինչը կարող է հանգեցնել բանկերի միջոցների տեղաբաշխման քաղաքականության որոշակի փոփոխությունների: Ընդհանուր առմամբ, բանկերին տրված վարկերի աճը 2003 թ. ընթացքում կկազմի 25.1% (01.01.2004 թ. դրությամբ՝ 24.7 մլրդ դրամ, որի 90.5%-ը բաժին կընկնի ոչ ռեզիդենտ բանկերին, իսկ դրա 77%-ը պայմանավորված կլինի մեկ բանկի գործունեությամբ):

Պայմանավորված կորպորատիվ արժեղթերի շուկայի թերզարգացածությամբ և բարձր ռիսկայնությամբ ՝ ոչ պետական արժեթղթերում ներդրումները կշարունակեն փոքր լինել և 2003 թ. վերջին կկազմեն ընդամենը 1.6 մլրդ դրամ, որի 50%-ը՝ ոչ ռեզիդենտների արժեթղթերում ներդրումները:



Ակնկալվող տնտեսական աճն իր ազդեցությունն է թողել բանկերի վարկային քաղաքականության վրա: Ըստ կանխատեսումների՝ տնտեսությանը տրամադրված վարկերը կաճեն 23.9%-ով (01.01.2004 թ. դրությամբ՝ 98.9 մլրդ դրամ): Ըստ տնտեսության ճյուղերի՝ բանկերը նախապատվությունը տալիս են արդյունաբերությանը (բացառությամբ՝ էներգետիկային, հանքագործությանը և մետալուրգիային տրամադրված վարկերի, որոնց ծավալները կնվազեն համապատասխանաբար 5.7%, 82.9% և 35.2%-ով, մնացած ճյուղերի աճը կկազմի միջինը 24.6%՝, գյուղատնտեսությանը՝ 15.9%, շինարարությանը՝ 23.9%, տրանսպորտի և կապի ոլորտինը՝ 35.5%, առևտրինը՝ 30%): Գյուղատնտեսությանը տրված վարկերի՝ 2003 թ. ընթացքում աճի 88%-ը պայմանավորված է հիմնականում մեկ բանկով: Մյուս կողմից, հաշվի առնելով էներգետիկայի նկատմամբ ներկայումս ձևավորված դրական վերաբերմունքը, կարելի է փոփոխություններ մտցնել կանխատեսված վարկային պորտֆելում:

Ուշագրավ է սպառողական վարկերի կանխատեսվող զգալի աճը (12.1%-ով), որը, բացի վերոնշյալ գործոններից, պայմանավորված է ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, գրավի արագացված իրացման հետ կապված իրավական դաշտի փոփոխման, հետևաբար նաև՝ սպառողական վարկերի ռիսկայնության նվազման սպասումներով: Ընդ որում, եթե հաշվի չառնենք մեկ բանկի[3] կանխատեսումները, ապա սպառողական վարկերի աճը կկազմի մոտ 40%: Եթե տվյալ բանկի կանխատեսումների համար հիմք վերցվի փաստացի ձևավորված միտումը, ապա ընդհանուր սպառողական վարկերի ծավալը կավելանա մոտ 2 մլրդ դրամով, որի արդյունքում բանկային համակարգով սպառողական վարկերի միջին աճը կկազմի մոտ 30% (01.01.2004 թ. դրությամբ՝ մոտ 19 մլրդ դրամ): Հատկանշական է նաև այն, որ շատ բանկեր նախատեսում են տրամադրել վարկեր անշարժ գույքի ձեռքբերման նպատակով:

Ակտիվների նման կառուցվածքը կհանգեցնի ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշռի աճին՝ 2.5 տոկոսային կետով, և 01.01.2004 թ. դրությամբ այն կկազմի 85.8%:

Պայմանավորված ակտիվների կազմում թղթակցային հաշիվների մնացորդների և պետական արժեթղթերում ներդրումների կանխատեսված բավական մեծ աճով՝ բանկային համակարգի տեղա-

[3] *Այս բանկը ՀՀԿԾ-ն ներկայացնելուց հետո՝ 01.01 2003 թ. երկու անգամ գերազանցել է իր կանխատեսումները:*


բաշխվող միջոցների կառուցվածքում բարձր իրացվելի ակտիվների հարաբերակցությունն ընդհանուր ակտիվներին կգերազանցի նվազագույն սահմանաչափը մոտ 20 տոկոսային կետով, իսկ բարձր իրացվելի ակտիվների հարաբերակցությունը ցպահանջ պարտավորություններին՝ 21 տոկոսային կետով (Ն21 01.01.2004 թ. դրությամբ՝ 42.6%, Ն22՝ 111.3%):

Ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները 2003-2004 թթ. ընթացքում կանխատեսվում է ավելացնել համապատասխանաբար 2.1 և 0.7 տոկոսային կետերով: Ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի կանխատեսված աճից կարելի է եզրակացնել, որ բանկերը նախորդ տարիների համեմատ փոխել են իրենց դիրքորոշումը և ֆիզիկական անձանց համարում են ոչ միայն որպես միջոցներ ներգրավելու աղբյուր:

Աղյուսակ 5. Տեղաբաշխված միջոցների կանխատեսված կառուցվածքը (%)

	01.01.2003 փաստացի	01.01.2004	01.01.2005
Վարկեր ֆիզիկական անձանց	9.7	10.6	10.4
Վարկեր իրավաբանական անձանց	31.2	31.8	33.3
Պահանջներ բանկերի նկատմամբ	40.3	39.5	38.2
Պետական արժեթղթեր	13.1	14.7	15.2
Այլ տեղաբաշխված միջոցներ	5.7	3.4	2.9
Ընդամենը	100	100	100

Չնայած բանկերի՝ ներգրավված միջոցների ժամկետայնության մեծացման ուղղությամբ դրական տրամադրվածությանը, տեղաբաշխված միջոցների կազմում մոտ 3 տոկոսային կետով կավելանա կարճաժամկետ (մինչև 1 տարի) տեղաբաշխված միջոցների կշիռը, որը պայմանավորված է բանկերի՝ ձեռնարկությունների շրջանառու կապիտալը ֆինանսավորելու նախապատվությամբ: Մյուս կողմից՝ բանկերն ակնկալում են, որ ՀՀ տնտեսության արագ զարգացման պայմաններում շատ ձեռնարկություններ տեխնոլոգիաների և նորագույն սարքավորումների ներդրման և արդիականացման կարիք կունենան, որը կմեծացնի երկարաժամկետ վարկային միջոցների պահանջարկը: Սակայն այդ ներդրումների համար, ըստ բանկերի գնահատականների, մեծ ծավալի միջոցներ են պահանջվում (միջին չափի ձեռնարկությունների համար՝ մի քանի հարյուր հազար դոլար, իսկ խոշորների համար՝ մինչև 1 մլն և ավելի ԱՄՆ դոլար), որոնք վարկային ռիսկի կենտրոնացման տեսանկյունից առայժմ բանկերի համար անընդունելի են:



Ռիսկեր

- Ներքին միջբանկային շուկայում պահանջարկը գերազանցելու է առաջարկը:
- Պետական արժեթղթերի նկատմամբ բանկերի ներկայացրած պահանջարկի չբավարարման դեպքում նրանք ստիպված կլինեն վերանայել իրենց միջոցների ներգրավման և տեղաբաշխման քաղաքականությունը:
- Ակնկալելով տոկոսադրույքների անկում՝ բանկերը նախատեսում են ավելացնել միջինժամկետ (1-5 տարի) ներգրավված միջոցների կշիռը, մինչդեռ միջոցների տեղաբաշխման քաղաքականությունն ունի կարճաժամկետ (մինչև 1 տարի) ուղղվածություն:

• Զգալի թվով բանկեր ցանկանում են մուտք գործել ՌԴ կորպորատիվ արժեթղթերի շուկա, որը նոր ռիսկային ոլորտ է:

Բանկերի գործունեության ծրագրվող ֆինանսական արդյունքները

Ներկայացված ծրագրերի իրականացման արդյունքում բանկերն ակնկալում են ստանալ հետևյալ ֆինանսական արդյունքները:

2003 թ. արդյունքներով բանկային համակարգի կանխատեսած զուտ շահույթը կազմելու է 5.7 մլրդ դրամ, որը գրեթե ամբողջությամբ նախատեսվում է ուղղել կապիտալի համալրմանը (շահաբաժիններ նախատեսում են բաժանել ընդամենը երեք բանկ՝ ընդհանուր առմամբ՝ 72.4 մլն դրամ):

Ծրագրված շահույթի մակարդակին հասնելու դեպքում բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) 01.01.2004 թ. դրությամբ կկազմի 2.2%, ըստ կանոնադրական կապիտալի (ROE)՝ 15.0%:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը պայմանավորված կլինի.

- տոկոսադրույքների հետագա անկմամբ,
- եկամտաբեր ակտիվների տեսակարար կշռի աճով,
- ակտիվների (վարկային պորտֆելի) որակի բարելավմամբ:

Մասնավորապես, վերը նշված գործոններով է պայմանավորված տարվա ընթացքում համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշռի 7.4 տոկոսային կետով աճը. ակնկալելով տարվա ընթացքում բարելավել ակտիվների որակը՝ բանկերը կանխատեսում են ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձման նվազում՝ 35%-ով (01.01.2004 թ. դրությամբ՝ 7.1 մլրդ դրամ): Միևնույն ժամանակ, տոկոսային եկամուտների կշիռը կավելանա տնտեսությանը տրամադրված վարկերի և պետական արժեթղթերում ներդրումների կանխատեսվող աճի հաշվին, որոնցից ստացված եկամուտները կկազմեն, համապատասխանաբար, 13.5 և 3.4 մլրդ դրամ:

Թեև բանկերը կարևորում են ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքների աստիճանական նվազման հետևանքով շահույթի ստացման գործընթացում «ծանրության կենտրոնը» տոկոսային եկամուտներից հարկադրված փոխադրումը դեպի ոչ տոկոսային եկամուտներ և, համապատասխանաբար, մատուցվող ծառայությունների ցանկի և ծավալների նախատեսվող ընդլայնումը՝ ստացված կոմիսիոն գումարների կանխատեսվող աճը 01.01.2004 թ. կազմելու է 0.3%՝ պայմանավորված մատուցվող ծառայությունների սակագների նախատեսվող նվազմամբ: Միևնույն ժամանակ, այլ ոչ տոկոսային եկամուտները կնվազեն մոտ 1 մլրդ դրամով: Արդյունքում, ոչ տոկոսային եկամուտները 01.01.2004 թ. դրությամբ կկազմեն 10.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.6 մլրդ դրամով:

Պայմանավորված վերոնշյալ գործոններով ՝ բանկերի համախառն ծախսերի կառուցվածքում ևս տեղի կունենան որոշակի փոփոխություններ: Այսպես, թեև տոկոսային ծախսերի ընդհանուր գումարը գրեթե կհամընկնի նախորդ տարվա տոկոսային ծախսերին (01.01.2004 թ. դրությամբ՝ 7.5 մլրդ դրամ), վերջիններիս տեսակարար կշիռը համախառն ծախսերի կազմում կավելանա 3.2 տոկոսային կետով, ինչը արդյունք է ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարվող հատկացումների 35.2% (4.5 մլրդ դրամ) կանխատեսվող նվազման: Հատկանշական է, որ ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներն ըստ կանխատեսումների կնվազեն 260 մլն դրամով:

Ոչ տոկոսային ծախսերը տարվա ընթացքում կավելանան ընդամենը 261 մլն դրամով և տարվա վերջին կկազմեն 14.4 մլրդ դրամ: Ինչպես և այժմ, ոչ տոկոսային ծախսերի կազմում մեծ բաժին կունենան հաշվարկված աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները՝ ոչ տոկոսային ծախսերի 35.6%-ը (5.1 մլրդ դրամ):

Կանխատեսումների իրականացման դեպքում եկամուտ ապահովող ակտիվների միջին եկամտաբերությունը 01.01.2004 թ. դրությամբ կկազմի 8.9%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.9 տոկոսային կետով: Միաժամանակ, ներգրավված պարտավորությունների միջին ծախսատարությունը նախորդ տարվա համեմատ կնվազի ընդամենը 0.4 տոկոսային կետով և 01.01.2004 թ. դրությամբ կկազմի 3.85%: Արդյունքում, տոկոսային մարժան[4] կնվազի 0.3 տոկոսային կետով և 01.01.2004 թ. դրությամբ կկազմի 5.5%:

Բանկերի կառավարման համակարգի կատարելագործում

Բանկերի կառավարման համակարգի կատարելագործման տեսանկյունից մեծ թվով բանկերում նկատվում է ներքին աշխատանքային կանոնակարգերի ներդրման և/կամ հստակեցման մտադրություն:

---

[4] Զուտ տոկոսային եկամուտների և ընդհանուր ակտիվների հարաբերությունը:

Սակայն դեռևս մի քանի բանկ են կարևորում ռազմավարական պլանավորման, ռիսկերի կառավարման և մարկետինգի առանձնացված բաժինների ստեղծումը:

Առավել վատ է իրավիճակը ներքին հսկողության համակարգի զարգացման առումով: Թեև բանկերը նշում են, որ իրենք կարևորում են նման համակարգի ներդրումը/զարգացումը, սակայն չեն նշում այդ ուղղությամբ նախատեսված կոնկրետ քայլեր, ինչն էլ կասկածի տակ է դնում դրանց լրջությունը:

Մի քանի բանկեր նշում են կառավարման, ներառյալ ներքին հսկողության, կատարելագործման ուղղությամբ կատարվելիք կոնկրետ միջոցառումները.

- բանկի տեղեկատվական հոսքերի կառավարման ծրագրային ապահովում, որը թույլ կտա իրական ժամանակի ռեժիմում հսկել բանկի ընթացիկ գործունեությունը,
- բանկային գործառնությունները (մասնավորապես, ավանդային, վարկային, ներդրումային, անկանխիկ և այլն) կանոնակարգող մեթոդաբանական բազայի խորացում և ընդլայնում,
- բանկի կառուցվածքի փոփոխություն,
- մասնաճյուղերի ցանցի ընդլայնում,
- ներքին նորմատիվային համակարգի ձևավորում և զարգացում, ինչը հնարավորություն կտա իրականացնել ռիսկերի կառավարում՝ «միկրո» մակարդակով:

Ռիսկերի կառավարման տեսանկյունից միայն մի քանի բանկեր են (հիմնականում՝ ՀՁՕ-ի բարձր գնահատական ունեցող) կոնկրետ միջոցառումներ նախատեսել, մասնավորապես՝

- վարկային ռիսկ՝ ստանդարտացնել վարկերի ռիսկի գնահատման գործընթացը, կիրառել վարկային ռիսկի գնահատման մոդելը («վեց սի» չափանիշների և «վարկային սկորինգի» գաղափարները),
- տոկոսային ռիսկ՝ տոկոսային ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ շարունակվելու է օգտագործվել իրացվելիության ճեղքվածքի (GAP-ի) մեթոդը,
- արժութային ռիսկի գնահատման նպատակով նախատեսվում է օգտագործել VaR մեթոդը,
- իրացվելիության ռիսկի գնահատման ժամանակ շարունակվելու է օգտագործվել իրացվելիության ճեղքվածքի (GAP-ի) մեթոդը:

Ռիսկեր

- Բանկերը մեծ կարևորություն չեն տալիս կառավարման, այդ թվում՝ ներքին հսկողության, ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմանը:
- Բանկերի զգալի մասում հստակ չի պատկերացնում ՀՁՕ-ի կատարողականի գնահատման, արդյունքների ներկայացման և հսկողության կարգը, որը վտանգում է ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունավետությունը: Ավելին, մի շարք բանկերում ՀՁՕ-ի մշակման և/կամ իրականացման վերահսկողությունը կատարվում է միայն գործադիր մարմնի կողմից՝ շրջանցելով խորհուրդը:

Կադրային քաղաքականություն

Կադրային քաղաքականության տեսանկյունից բանկերն ընդհանուր առմամբ շարունակելու են նախկին քաղաքականությունը, մասնավորապես, մասնագետների մրցութային եղանակով ընտրության, ատեստավորման, վարձատրման ճկուն (սուբյեկտիվ) համակարգերը: Հետաքրքիր է, որ որոշ բանկեր նախատեսում են աշխատավարձերի դրույքաչափերի վերանայում: Բանկերը շարունակելու են իրականացնել նաև աշխատակիցների վերապատրաստումը:

Հաշվի առնելով նոր ծառայությունների ներդրման մտադրությունը՝ բանկերի կողմից պահանջարկ է ներկայացվելու հիմնականում այդ ծառայությունների (հատկապես պլաստիկ քարտերի սպասարկման, փաստաթղթային գործառնությունների, լիզինգի) մասնագետների նկատմամբ:

Ռիսկեր

- Բանկերը, նախատեսելով ծառայությունների ցանկի ընդլայնում, հետագայում կարիք կունենան նոր ոլորտների մասնագետների: Սակայն նրանք չեն նշում այդպիսի մասնագետների «աճեցման» որևէ միջոցառում:

Նոր տեխնոլոգիաների ներդրում

Պլանավորվող ժամանակահատվածում բանկերը նախատեսում են ներդնել՝

- պլաստիկ քարտերի (VISA, ArCa) սպասարկման նոր տեխնոլոգիաներ,
- հաճախորդների սպասարկման Bank Client, Internet Client, TeleBank համակարգերը:

Ռիսկեր

- Ինտերնետային բանկային ծառայության համար անհրաժեշտ է հուսալի, արագագործ ենթակառուցվածք, մինչդեռ վերջինիս առկայությունը 2003-05 թթ. խիստ կասկածելի է, ինչն էլ կարող է լրացուցիչ խնդիրներ առաջացնել բանկերի համար:

Մարկետինգային քաղաքականություն

Կանխատեսվող ժամանակահատվածում զգալի թվով փոքր և միջին բանկերի կողմից առաջին անգամ կարևորվում է բանկի հեղինակության բարձրացումը. բանկերը հստակ գիտակցում են, որ խոշոր բանկերի մրցակցության սպառնալիքի պայմաններում իրենց համար կարևորվում են ոչ գնային մրցակցության ուղղությամբ կատարվող միջոցառումները: Հաշվի առնելով այդ՝ բանկերը նախատեսում են ձեռնարկել մի շարք մարկետինգային միջոցառումներ, այդ թվում՝

- ակտիվ գովազդային արշավ,
- հաճախորդների սպասարկման կուլտուրայի կատարելագործում,
- ծառայությունների որակի բարձրացում,
- ծառայությունների տեսականու ընդլայնում,
- շենքային պայմանների բարելավում:

Առանձին բանկեր սկսել են կիրառել ոչ ստանդարտ մեթոդներ:

Բանկերի արդյունավետությունը

2003-05 թթ. բանկերի արդյունավետությունը գնահատելու համար բանկերին առաջարկվել էր հաշվարկել բանկի արդյունավետությունը գնահատող մի շարք ցուցանիշներ (շահույթ/համախառն ծախսեր (տոկոսային և ոչ տոկոսային), զուտ շահույթ/համախառն ակտիվներ, զուտ շահույթ/ընդհանուր կապիտալ, վարչական աշխատողների թիվ/սպասարկող անձնակազմի աշխատակիցների թիվ, զուտ շահույթ/վարչական աշխատողների թիվ, ժամկետանց ակտիվներ/համախառն ակտիվներ):

Շահույթ/համախառն ծախսեր (տոկոսային և ոչ տոկոսային) ցուցանիշի միջինը բանկային համակարգի համար կազմել է 0.36 (2003-04 թթ. միջինը): Նման ցուցանիշը պայմանավորված է մեկ բանկի կանխատեսումներով՝ 2.13: Նշված բանկի ցուցանիշը հաշվի չառնելու դեպքում շահույթ/համախառն ծախսեր հարաբերակցությունը բանկային համակարգի համար կկազմի 0.2: Ընդ որում, միջինից բարձր այս ցուցանիշը կանխատեսել են 6 բանկեր:

Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները՝ ROA և ROE, կազմում են, համապատասխանաբար, 0.02 և 0.09: Ընդ որում, հատկանշական է, որ ROE ցուցանիշը միջինից բարձր կանխատեսած երկու բանկի ROA ցուցանիշները միջինից զգալիորեն ցածր են:

Ընդհանուր առմամբ, շահութաբերության ցուցանիշները բարձր են կանխատեսել այն բանկերը, որոնք առաջիկա երկու տարում չեն ակնկալում ավելացնել կանոնադրական կապիտալը:

Բանկային համակարգի կառավարման արդյունավետության ցուցանիշը (վարչական աշխատողների թիվ/սպասարկող անձնակազմի աշխատակիցների թիվ) կազմում է 6.5: Այս ցուցանիշը միջինից ցածր է 8 բանկում:

Մեկ վարչական աշխատողին բանկային համակարգում ընկնում է 5218 հզ. դրամ զուտ շահույթ: Ընդ որում, այս ցուցանիշով մնացած բանկերից բավական մեծ տարբերությամբ առանձնանում են երկու բանկ, որոնց ցուցանիշները կազմում են, համապատասխանաբար, 19536 և 38172 հզ. դրամ: Առանց այս բանկերի, բանկային համակարգի միջին զուտ շահույթը կկազմի 1841 հզ. դրամ:

Ընդհանուր առմամբ, բանկերի արդյունավետության ցուցանիշներով հստակ օրինաչափություններ չեն նկատվում: Հետաքրքիր է, որ մասնաճյուղերի լայն ցանց ունեցող բանկերն արդյունավետության տարբեր ցուցանիշներ ունեն: Նմանատիպ չէ նաև խոշոր և փոքր բանկերի արդյունավետությունը:

ՄՐՑԱԿՑՈՒՑՈՒԹՅՈՒԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Բանկերը ՀԶՕ-ում արձանագրում են մրցակցության խստացում բանկային շուկայի ավանդական հատվածներում, ինչը ստիպում է նրանց ամրապնդել դիրքերն արդեն գրաված շուկաներում և միաժամանակ որոնել բիզնեսի զարգացման նոր ուղիներ (հիմնականում՝ վճարահաշվարկային գործառնություննե-

րի, ինտերնետային բանկային ծառայության, ՌԴ արժեթղթերի շուկայում գործառնությունների, սպառողական վարկերի զարգացման, միջազգային էժան միջոցների ներգրավման ուղղությամբ):

Որպես մրցակցության վրա ազդող կարևոր գործոններ՝ բանկերի կողմից նշվել են.

- մի քանի բանկերի շուկայից դուրս գալը,
- շուկայական տոկոսադրույքների և տոկոսային մարժայի նվազումը,
- միջազգային ծրագրերով վարկային էժան միջոցների զգալի ներհոսքը,
- վարկային կազմակերպությունների և գյուղատնտեսական վարկային ակումբների ստեղծումը:

Բանկերի կանխատեսումներով՝ մրցակցությունը կշարունակի խստանալ, որի պայմաններում բանկերի կողմից կձեռնարկվեն հետևյալ միջոցառումները.

- գնային մրցակցության սրումը խոշոր բանկերի կողմից,
- ոչ գնային մրցակցության շեշտադրումը փոքր բանկերի կողմից,
- «աշխարհագրության» ընդլայնումը տարածքային ստորաբաժանումների բացման միջոցով (որոշ բանկերի համար մասնաճյուղերի հիմնադրումը որպես հաջողության հիմնական ռազմավարություն է ընտրված),
- նոր հատվածներ մտնելը (հատկապես պլաստիկ քարտերի սպասարկման, առանց հաշվի բացման միջազգային փոխանցումների իրականացման ոլորտներում),
- մշտական հաճախորդների ցանցի ձևավորումը և ընդլայնումը:

Հիմնական բանկային շուկաներում (ընդհանուր բանկային (ակտիվներ), վարկային, ՊՊ-ների, ֆիզիկական անձանց ավանդների (ավանդներ), իրավաբանական անձանց ավանդների (դեպոզիտներ), ցպահանջ պարտավորությունների) բանկերի մասնաբաժինների բաշխվածությունը ըստ Հերֆինդալ-Հիրշմանի (ՀՀԳ), կոնցենտրացման (Կգ4, Կգ7, Կգ10) գործակիցների, պատկերված է հավելված 7-ում:

1995-2001 թթ. նշված շուկաներում կոնցենտրացման մակարդակն ընդհանուր առմամբ նվազման միտում ուներ: Այս առումով շրջադարձային են եղել 2001-02 թթ-ը: 2001-03 թթ. բանկերի թվի կրճատմանը զուգահեռ, կենտրոնացման չափերը սկսել են աճել, ընդ որում, տարբեր շուկաներում՝ տարբեր տեմպերով:

2003-05 թթ. կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում կանցենտրացման մակարդակի փոփոխության վարքագծի տեսանկյունից վերոնշյալ շուկաները բաժանվում են հետևյալ կերպ.

- նվազող՝ ՊՊ շուկա, որի արդյունքում նաև՝ ընդհանուր բանկային շուկա,
- կայուն՝ վարկերի, ավանդների շուկաներ,
- ուժեղացող՝ դեպոզիտների և ցպահանջ պարտավորությունների շուկաներ:

ՊՊ շուկան միշտ առանձնացել է առաջատար բանկերի դիրքի և կոնցենտրացման մակարդակի կտրուկ տատանումներով՝ պայմանավորված պարբերաբար որևէ մեկ բանկի՝ ՊՊ շուկա մուտք գործելով, գերիշխող դիրքի գրավմամբ և դուրս գալով շուկայից հաջորդ տարի: Չնայած դրան՝ որոշ բանկեր շարունակում են կայուն դիրքեր գրավել:

01.01.2003 թ. կանխատեսվող կոնցենտրացման մակարդակի նվազումը պայմանավորված է մեծ թվով բանկերի «համարձակ» կանխատեսումներով այս շուկայում, որի արդյունքում խոշորագույն բանկերի մասնաբաժինները կարծես թե «նվազում են»:

Սակայն ՊՊ շուկայի նկատմամբ պետք է կատարել մեկ այլ վերապահում ևս: Մասնավորապես, այս շուկայում բանկերին մրցակից են նաև այլ ֆինանսական կազմակերպություններ (բանկերը նրանց համարում են որպես լուրջ մրցակիցներ), որոնք եթե նույնպես ընդգրկվեին կոնցենտրացման մակարդակի հաշվարկի մեջ, ապա վերջինս ավելի ցածր կլիներ:

Հետաքրքիր է պատկերն ավանդների շուկայում, որտեղ կոնցենտրացման ցուցանիշը 1998 թ. ի վեր փոքր է՝ չնայած բանկերի թվի զգալի նվազմանը և դրա արդյունքում բանկերի միջև ավանդների զգալի հոսքերին: Ըստ էության, եթե ֆիզիկական անձանց որոշ ժամկետային միջոցներ չհաշվառվեն բանկերում որպես ցպահանջ, ապա այս շուկայում կոնցենտրացման ցուցանիշն ավելի մեծ կլինի, իսկ ցպահանջ պարտավորությունների շուկայում՝ փոքր:

Իրավաբանական անձանց դեպոզիտների շուկայում կոնցենտրացման մակարդակի աճը կանխատեսվող ժամանակաշրջանում պայմանավորված է մեկ բանկի «համարձակ» կանխատեսումներով: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հավանական է, որ շուկայում այն համեմատաբար կայուն կմնա: Փոփոխվում են նաև առաջատար տասնյակի կազմն ու կառուցվածքը:

Շարունակում է մտահոգության առարկա մնալ ցպահանջ պարտավորությունների շուկան, որտեղ 2000 թ-ից կոնցենտրացման մակարդակը բարձրանում է: Այս միտումը կշարունակվի նաև կանխատեսվող ժամանակաշրջանում, որը պայմանավորված է երկու խոշորագույն բանկերի մասնաբաժինների շարունա-

կական ընդլայնմամբ (2000-01 թթ. կոնցենտրացման մակարդակի բարձրացումը պայմանավորված էր մեկ խոշորագույն բանկի մասնաբաժնի էական ընդլայնմամբ): Վիճակն ավելի կվատթարանա, եթե երկու բանկի կողմից նախատեսվող ավանդների կրճատման հետևանքով տեղի ունենա ավանդային միջոցների հոսք դեպի ներկայիս խոշորագույն բանկեր, ինչպես դա տեղի ունեցավ 2002 թ.:

Ամփոփելով կարելի է ասել, որ բանկային որոշ ավանդների շուկաներում հաստատվել է օլիգոպոլիստական մի իրավիճակ, երբ մի քանի խոշոր բանկեր իշխում են իրավիճակին հատուկ հեղինակության հաշվին, և մրցակցությունն այդ շուկաներում խիստ դժվարացել է: Այդ մասին են վկայում ՀՋԾ-ում բանկերի կողմից արտահայտված մրցակցային տրամադրությունները, ինչպես նաև կոնցենտրացման մակարդակի բարձրացումը ավանդների շուկաներում, բանկերի դիրքերի անընդհատ տեղաշարժերը, այդ թվում՝ շուկայից բանկերի դուրս գալը:

Արդյունքում՝ բանկերը փնտրում են զարգացման համար նոր ոլորտներ (ներդնելով ինչպես նոր ծառայություններ, այնպես էլ գրավելով ավանդական ծառայությունների ոլորտներում առանձնահատուկ նիշաներ), որտեղ դեռևս թույլ է կամ բացակայում է մրցակցությունը: Ըստ էության, այս նոր ոլորտներում կանխատեսվող ժամանակաշրջանում համեմատաբար կսրվի մրցակցությունը:

Սակայն մտահոգում է այդ ամենի արդյունքում ավանդական շուկաներում (հատկապես ցպահանջ պարտավորությունների, դեպոզիտների, ավանդների) մրցակցության ավելի թուլացումը և որոշ բանկերի լրիվ մենաշնորհային դիրքի գրավումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Առաջիկա երկու տարիների համար ՀՀ-ում և ԱՊՀ երկրներում բանկերը կանխատեսում են զգալի տնտեսական աճ, բնակչության կենսամակարդակի բարձրացում, արտաքին աշխարհի հետ տնտեսական կապերի աշխուժացում, համաշխարհային տոկոսադրույքների նվազում և միջազգային ծրագրերով ՀՀ միջոցների ներհոսքի ծավալների աճ, որոնց հիման վրա էլ նրանց կանխատեսած զարգացման ուղղությունները և ծավալները, գործունեության արդյունքները բավականին լավատեսական են:

Խոշոր բանկերը, կանխատեսելով գործունեության ծավալների հետագա ընդլայնում, մեծ ուշադրություն են դարձնելու կայունությանը, դիրքերի ամրապնդմանը: Փոքր բանկերը հիմնականում նախատեսում են «հավակնոտ» աճի տեմպեր, մասնաբաժինների ընդլայնում և նոր շուկաների գրավում:

Ընդհանուր կապիտալի աճը բանկերը նախատեսում են կատարել ինչպես կանոնադրական կապիտալի, այնպես էլ շահույթի հաշվին: Սակայն բավարար շահույթ չապահովելու դեպքում, այնուամենայնիվ, կապիտալի համալրման խնդիր կարող են ունենալ ընդամենը երկու բանկ (եթե մյուս բանկերն ապահովեն կանոնադրական կապիտալի աճը):

Միայն երեք բանկեր են նախատեսում կանխատեսվող ժամանակաշրջանում շահաբաժիններ վճարել:

Միջոցների ներգրավման քաղաքականությունն ուղղված է լինելու հիմնականում միջազգային ֆինանսական շուկաներից էժան միջոցների ներգրավմանը:

Միջոցների տեղաբաշխման քաղաքականությունը հիմնականում շեշտադրելու է ՀՀ տնտեսության արագ աճող ճյուղերի (շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի ոլորտների, արդյունաբերության, սննդամթերքի, շինանյութերի, թեթև արդյունաբերության), ինչպես նաև ֆիզիկական անձանց սպառման վարկավորումը: Միաժամանակ, արտասահմանյան կապիտալով և միջազգային շուկայում ակտիվ բանկերը շարունակելու են վարել ցածր ռիսկային քաղաքականություն՝ գործելով հիմնականում միջբանկային և ՊՊ շուկայում:

Ավանդների ներգրավման ոլորտում մոտակա տարիներին ակնկալվում է մի շարք խոշոր բանկերի մրցակցային դիրքերի առավել ամրապնդում՝ կապված այդ բանկերի գործունեության մասշտաբների ավելի ընդլայնման հետ (մասնավորապես, ավելի մատչելի սակագների սահմանում):

Խոշոր բանկերի մրցակցությանը դիմակայելու համար փոքր բանկերը նախատեսում են փոխել իրենց ռազմավարությունը 2003-05 թթ.՝ մտնելով նոր շուկաներ կամ մասնագիտանալով ավանդական շուկաների առանձին հատվածներում՝ կարևորելով ոչ գնային մրցակցությունը և, հատկապես, բանկի հեղինակության բարձրացումը:

2003-05 թթ. ավելի է ընդլայնվելու պլաստիկ քարտերով սպասարկման և առանց հաշվի բացման միջազգային փոխանցումների իրականացման ցանցը, քանի որ զգալի թվով բանկեր նախատեսում են ընդգրկվել այս համակարգում և ընդլայնել պլաստիկ քարտերի քանակի և դրանցով իրականացվող գործառնությունների ծավալները: Վերջինս կարող է ստեղծել պլաստիկ քարտերի նկատմամբ պահանջարկի «ինքնաճի» նախադրյալ:

Որոշ բանկեր արդեն գործուն քայլեր են նախաձեռնում «ինտերնետ-բանկ» գործառնությունների ոլորտ մտնելու համար, որտեղ նոր ռիսկեր են ծագում ինչպես բանկերի (ռիսկերի կառավարման տեսանկյունից), այնպես էլ ԿԲ համար (վերահսկողության համապատասխան մեթոդների ձեռքբերման տեսանկյունից):

Զգալի թվով բանկեր ցանկանում են մուտք գործել ՌԴ կորպորատիվ արժեթղթերի շուկա:

Բանկերի մեծ մասը չի հստակեցրել ՀՋՕ-ի կատարողականի գնահատման, արդյունքների ներկայացման և հսկողության կարգը, ինչը վտանգում է ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունավետությունը: Ավելին, մի շարք բանկերի ՀՋՕ-ի մշակման և/կամ իրականացման վերահսկողությունը կատարվում է միայն գործադիր մարմնի կողմից՝ շրջանցելով խորհուրդը:

Զգալի թվով բանկեր ակնկալում են, որ 2003-05 թթ. կընդունվեն օրենքներ և այլ նորմատիվ ակտեր, որոնք առավել կհստակեցնեն լիզինգին, ֆակտորինգին, բնակարանային հավաստագրերի շրջանառությանը վերաբերող նորմատիվային դաշտերը, ինչը խիստ անհրաժեշտ է այդ ոլորտներում բանկերի կողմից ակտիվ գործառնություններ իրականացնելու համար:

Բանկերն ակնկալում են վարկատուների իրավունքների բավարարմանն ուղղված օրենսդրական դաշտի կատարելագործում՝ կապված հանրային աճուրդների կազմակերպման և անցկացման հետ: Նշված միջոցառումները բավական կհեշտացնեն գույքի իրացումը և կապահովեն գործարքների շահավետությունը բոլոր մասնակիցների համար, ինչն էապես կնպաստի իրական հատվածին տրամադրվող վարկերի ծավալների ավելացմանը:

Շատ չնչին թվով բանկեր են ՀՋՕ-ում կարևորում ռիսկերի կառավարման, ներքին հսկողության նոր համակարգերի ներդրման և/կամ հին համակարգերի կատարելագործման գործընթացը:

ՊՊ շուկայում բանկերի կողմից արտահայտված պահանջարկը կարող է գերազանցել հնարավոր առաջարկը:

Ակնկալելով տոկոսադրույքների անկում՝ բանկերը նախատեսում են ավելացնել միջնաժամկետ (1-5 տարի) ներգրավված միջոցների կշիռը, մինչդեռ միջոցների տեղաբաշխման քաղաքականությունն ունի կարճաժամկետ (մինչև 1 տարի) ուղղվածություն:

Բանկերի զգալի մասի մոտ հստակ չէ ՀՋՕ-ի կատարողականի գնահատման, արդյունքների ներկայացման և հսկողության կարգը, որը վտանգում է ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունավետությունը: Ավելին, մի շարք բանկերում ՀՋՕ-ի մշակման և/կամ իրականացման վերահսկողությունը կատարվում է միայն գործադիր մարմնի կողմից՝ շրջանցելով խորհուրդը:

Նոր ծառայությունները պահանջելու են նոր մասնագետներ, սակայն բանկերը չեն ներկայացնում մասնագետների «պատրաստման» որևէ միջոցառում:

Բանկերն իրենց գործունեության համար սպառնալիք են դիտում արտարժութային փոխարժեքների տատանումները, երկարաժամկետ ռեսուրսների բացակայությունը:

Բանկային համակարգի փաստացի և կանխատեսված հաշվեկշիռը

հազար դրամ

ԱԿՏԻՎ	01.01.2003 (փաստացի)	01.01.2003 (կանխատեսված)	01.01.2004	01.01.2005
Կանխիկ դրամական միջոցներ	13 024 976	13 259 925	10 635 575	12 471 650
- այդ թվում՝ արտարժույթ	9 766 735	9 396 165	7 049 931	8 234 824
Թղթակցային հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	17 788 910	17 334 814	16 852 964	21 543 150
Թղթակցային հաշիվներ այլ բանկերում	40 479 342	38 852 939	49 320 733	58 064 570
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	38 718 752	37 770 110	48 126 004	55 113 222
Պետական արժեթղթեր	30 874 626	25 903 759	34 424 471	42 234 320
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	5 849	9 829	30 900	505 900
ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված ավանդներ	703 886	-	280 000	175 000
Բանկերում տեղաբաշխված ավանդներ	19 756 675	21 355 207	24 725 012	27 499 355
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում	18 724 053	20 285 317	22 387 713	24 544 390
Վարկեր՝ տնտեսությանը	75 530 390	73 371 916	93 890 067	115 468 649
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	5 163 470	4 384 047	4 133 143	4 695 671
Վարկեր՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	4 366 116	4 221 385	5 081 966	5 523 388
Պահուստաֆոնդ	(2 770 512)	(2 904 649)	(3 221 671)	(3 653 482)
Այլ ակտիվներ	9 362 182	7 109 416	6 252 963	6 253 290
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	3 403 434	2 212 503	2 205 097	2 807 936
Հիմնական միջոցներ	13 887 847	16 219 736	16 222 418	16 776 026
Այլ արժեթղթեր	4 290 938	4 298 052	1 675 152	2 303 252
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	575 270	560 772	830 794	1 415 894
Լիզինգ	255 265	265 265	325 000	670 000
Ֆակտորինգ	1 359 121	1 687 631	1 125 000	1 055 000
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	(4 508 133)			
Պարտավորություններ հակադարձ ռեպո համաձայնագրերի գծով	(1 627 022)			
Ընդհանուր ակտիվներ	**226 178 041**	**223 187 898**	**259 794 748**	**309 192 102**
ՊԱՍԻՎ				
Բանկերի թղթակցային հաշիվներ	4 192 556	3 891 546	3 657 119	4 018 621
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	2 347 612	2 410 944	2 606 481	1 858 011
Ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորություններ	29 339 012	30 517 559	35 646 078	41 184 243
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	9 619 386	10 141 646	11 837 732	13 657 285
- այդ թվում՝ ռեզիդենտներ արտարժույթով	17 440 843	17 853 825	20 988 708	24 085 638
Իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ	50 621 646	45 964 174	54 634 320	66 096 429
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	11 047 629	11 128 885	15 211 333	20 228 092
- այդ թվում՝ ռեզիդենտներ արտարժույթով	18 447 551	18 564 032	22 454 000	26 792 727
Բանկերից և այլ ֆինանս. կազմակերպ. ներգրավված ղեպոզիտներ	14 795 240	16 523 711	18 675 940	25 150 050
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	6 436 169	9 413 769	14 881 202	20 690 746
Ֆիզիկական անձանց ավանդներ	39 785 803	39 761 390	41 509 947	47 908 059
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	9 032 831	8 834 266	8 448 243	10 553 811
- այդ թվում՝ ռեզիդենտներ արտարժույթով	27 556 763	24 232 954	24 878 932	28 166 658
Իրավաբանական անձանց ղեպոզիտներ	36 909 593	35 560 082	40 697 764	46 913 168
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ	9 610 598	13 328 568	14 411 245	17 127 581
- այդ թվում՝ ռեզիդենտներ արտարժույթով	20 093 099	8 135 014	8 370 830	10 624 568
Այլ պարտավորություններ	8 374 874	7 918 439	10 688 908	10 477 882
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ	1 042 082	1 154 986	1 397 265	1 640 340
Ընդհանուր պարտավորություններ	**185 060 806**	**181 291 887**	**206 907 341**	**243 388 793**
Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ	31 992 896	32 702 759	38 061 351	44 760 610
- այդ թվում՝ ոչ ռեզիդենտ		16 838 853	20 392 537	22 542 396
Գլխավոր պահուստ	3 832 531	3 859 867	4 560 236	6 174 938
Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր	0	-	-	-
Շահույթ (վնաս)	3 022 523	3 236 568	7 999 749	12 123 532
Հիմնական կապիտալ	38 847 950	39 799 194	50 621 336	63 059 080
Ընդհանուր կապիտալ	41 117 234	41 896 012	52 887 407	65 803 310
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՍԻՎ	**226 178 041**	**223 187 898**	**259 794 748**	**309 192 102**

Բանկային համակարգի փաստացի և կանխատեսված եկամուտների և ծախսերի կառուցվածքը

հազար դրամ

	Անվանում	01.01.2003 փաստացի	01.01.2003 կանխատեսված	01.01.2004	01.01.2005
1. Տոկոսային եկամուտներ					
1.1.	Թղթակցային հաշիվներից	246 921	250 449	196 218	214 884
1.1.1.	Ռեզիդենտ բանկերից	89 842	70 142	24 720	26 596
1.1.2.	Ոչ ռեզիդենտ բանկերից	157 079	180 307	171 498	188 288
1.2.	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներից	382 648	367 003	411 826	466 475
1.2.1.	Թղթակցային հաշիվներից	367 155	342 745	387 726	437 020
1.2.2.	Հետգնման պայմանագրերի գծով	1 262	1 262	1 850	2 225
1.2.3.	Այլ տեղաբաշխված միջոցներից	14 231	11 496	6 250	11 230
1.3.	Առևտրային բանկերում և այլ ֆին. կազմակերպ. տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	622 913	596 856	770 531	870 560
1.3.1.	Ռեզիդենտ բանկերից	104 396	98 365	128 436	138 764
1.3.2.	Ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից	163 193	161 870	190 237	197 060
1.3.3.	Ոչ ռեզիդենտ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	355 324	335 121	453 358	529 736
1.4.	Տնտեսությանը տրված վարկերից ստացված տոկոսներ	12 446 921	11 660 816	13 544 342	15 521 394
1.4.1.	Ռեզիդենտ ձեռնարկություններից և կազմակերպություններից	7 245 682	7 153 690	8 787 956	10 074 931
1.4.2.	Ռեզիդենտ ֆիզիկական անձանցից	4 629 983	3 881 307	4 196 885	4 869 446
1.4.3.	Ոչ ռեզիդենտ ձեռնարկություններին և ֆիզ. անձանց տրված վարկերից	571 256	625 819	582 160	648 020
1.5.	Օվերդրաֆտից, օվերնայթից ստացված տոկոսներ	389 470	390 173	560 392	647 176
1.5.1.	Ռեզիդենտ բանկերից	0	400	1 500	5 500
1.5.2.	Ռեզիդենտ ձեռնարկություններից և կազմակերպություններից	134 308	138 653	163 946	185 973
